

Pinapiti



6-9

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն



* * * 1 Անփոխարինելի...

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՅ 3 Մեկնում

ԺԱԳ՝ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ 22 Մենք կը շինենք

» » » 25 Աշխարհ իմանայ

» » » 29 Հայ ենք մենք

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ 32 Սահակ Պարգեւեան

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ 49 Ռիլերմ Սարոյեան, Կալմ

ՄՈՎՍԷՍ Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ 61 Լիբանանեայ Թատրոնը այսօր

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ 68 Արդի գրականութեան
դիմագիծը եւ տագնապը

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ 76 «Լեռներ վիհերու մէջ»
(Զարեհ Մեղեանեան)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԵՐԵԱՆ 78 «Լեռը եւ տունը»
(Ալմէն Դարեան)

* * * 80 Մշակութային լուրեր

Բազմը

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՀԱՅ. ԵՄ.Ր.Ի. Թ.Ի.Ի. Հ.Յ. ԳՈՒՆԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ 1982 ԳԼԵՐԺԻԹ

Ա Ն Փ Ո Ւ Ա Ր Ի Ն Ե Լ Ի Ն...

Լիբանանեան երկարատեւ տագնապի ընթացքին, այս երրորդ անգամն է, որ կ'ընդմիջուի «Բազմ»-ի հրատարակութիւնը, առաջին անգամ՝ 1975ի վերջին ամիսներում, երկրորդ անգամ՝ 1976ի գարնան, իսկ երրորդ անգամ՝ այս ամսոնամուտին:

Շուրջ չորս ամիսներու վրայ երկարած ծանօթ ընդհարումներէն ետք, երբ կոտորած օտար ուժերը քաշուեցան մայրաքաղաքէն, եւ բացուեցաւ ճաշագահական նոր ընտրութեան հետեւող յաւաստիք շրջանը, խմբագրութիւնն որոշեց յաւելածական կոչովով մը վերակսիլ գործը եւ ընթերցողին փութացնել Յունիսի, Յուլիսի, Օգոստոսի եւ Սեպտեմբերի համարները առանձին-առանձին: Բայց աննախատեսելի նոր դէպքեր եկան եւ անգամ մը եւս ցնցեցին երկիրը, ի դերեւ հանելով կորսուած ժամանակը դարմանելու օգտին սնուցած մեր բոլոր յոյսերը: Ամէնուն ծանօթ քաղաքական ու գինուարական այդ իրերայաջորդ իրադարձութիւնները եւ ամենց հետեւանքով ելեկտրական հոսանքին յաճախողէպ ընդհատումները մեզմէ խլեցին ամիս մը եւս: Հաշուի առած այդ ծանգամանքները եւ դեռեւս շարունակուող երկրին անկայուն վիճակը, խմբագրական երկրորդ խորհրդածութեան մը ընթացքին, հարկադրաբար որոշեցինք այս քիւր լոյս ընծայել այնպէս՝ ինչպէս կ'ընէին արդէն, — կորսուած չորս ամիսներուն հաշւոյն:

Լիայնայս ենք, որ ընթերցողը լուսպէս կ'ըմբռնէ մեր կացութիւնը եւ լայնախոհութեամբ կը դիմադրէ այս ստիպողական թերացումը:

Գրականութեան պատմութեան մէջ քիչ չեն փաստերը այն մասին, երբ ծանրակշիռ պայմաններու մէջ առժամապէս ընդհատուած ձեռնարկները ընդմիջու վերջ մը կը դնեն իրենց գոյութեան: Բայց «Բազմ»-ը, ուրախութիւն է յայտնել, նման փորձութեան մը բնաւ չենթարկուեցաւ, այլ շարունակեց իր առաքելութիւնը՝ աննպաստ հովերէն անմիջապէս ետք, կենսատու մեր բոլոր միւս հաստատութիւններուն պէս: Այս անկիւնէն դիտած՝ վերակսեղու փաստը, կ'ենթադրենք. քիչ մը կը թեթեւցնէ անցնող չորս ամիսներուն առաջացած բացերուն ցուր:

9404-89թ.

digitised by A.R.A.R.@

Հայրենի ժողովուրդը, ինչպէս նաեւ ի սփիւռս ցրուած տարագիր բազմաթիւները եւ յա՛տկապէս Լիբանանի մեր զանգուածները փոքրակալի ութ տարիներու ընթացքին յաճմաւոր եղամ հսկայ գոհողութիւններու՝ անսասան պահելու համար այս գաղութը, որ համընդհանուր հաւաստումով էր եւ կոչուած է ըլլալու եւ մնալու Սփիւռքի կարեւորագոյն օճախը, իր նոժուրեմքեմը նախ, յետոյ՝ աշխարհի այլանորոգ հովերում քիչ ենթակայ իր բախտով, այդ առաւելութիւններով օժտուած իր ազգային, մշակութային եւ քաղաքական կառոյցներով մնաւանդ:

Անցնող ութ տարիներում մարդկային եւ թիւքական ահագին կարուստներ արձանագրեցինք, անհկութիւններ ապրեցանք, անորոշութեան երկարատեւ շրջաններ, ծախսեցինք հսկայ ժամանակ, բայց մեր ժողովուրդին լայն զանգուածը քնադղով կը գտար ու տրամաբանութեամբ կ'եզրակացնէր, որ փոխարինելի երկիր մը չէ այս երկիրը եւ անոր համար, անոր մէջ ապրելու եւ տեւելու շնորհին համար կ'արժէ գոհաբերել շատ բան, ըլլալ համբերատար, չկարենցնել յոյսը, որովհետեւ անկա երկրորդ հայրենիք մը աւելին եղած էր մեզի համար, փաթարիկէն ետք պիտի ըլլար դարձեալ նոյնը, չէ՛ր կրնար չըլլալ նոյնը, իր կառոյցին իսկ հրամայականով, իր բաղկացուցիչ տարրերուն հոգեբանութեան իսկ պահանջով:

Արդարեւ, Լիբանանը եղաւ այն քաջասիկ երկիրը, ուր ճշակոտոր մեր ժողովուրդին զաւակները իբրեւ գաղթական չդիմաւորուեցան, այլ առաջին իսկ օրէն ճանչցուեցան իբրեւ լիբան քաղաքացիներ, մասնակցելու, որոշելու, խիզախելու բոլոր իրաւունքներով:

Ազատութեամբ:

Ազգային ու կենցաղային մեր իրադատութիւններուն պահպանման համար մեզի ընծայուած նպաստաւոր պայմաններուն առընթեր՝ գուցէ անփոխարինելին ա՛յս էր, ա՛յս է, միւս համայններուն կողքին մեզի տրուած այս լիաբաժնէ շնչատութիւնը, ազատութիւնը, որ երբեք չպակսեցաւ այս երկրին մէջ, լայնօրէն յարգուեցաւ իսլամ թէ քրիստոնեայ քնիկներուն կողմէ, մինչեւ անգամ ամէնէն բախտորոշ պահերուն:

Սփիւռքի մէջ տեղ մը տէր ենք քաջարժակ ազատութեան, բայց տարածութիւնը տարողոյս է մեր ուժերը ու զրկած մեզ ազատութիւնը արժեւորելու հնարաւորութիւններէն, իսկ այլուր տէր ենք տարածութեան, բայց ժամանակային տուեալը կաշկանդած է մեր թափը հայկական լինելութեան ճանապարհին:

Լիբանանի մէջ ամլացնող նման բարդութիւններ չունէինք առտօ, չունեցանք դէպքերուն ընթացքին, չունինք եւ այսօր ու հաճախած ենք, որ տիրոջ չունենանք նաեւ վտար, ու ճիշդ այդ պատճառով, ըսել կ'ուզենք ազատութեան շոյալած այդ դեղուն հնարաւորութիւններուն համար արժանի է անիկա, Լիբանանը, մեր բոլորին գուրգուրանքին, նորանոր ու քոյրբանակեր գոհողութիւններու:

Չորս ամիսներու ստիպողական ընդհատումէն ետք, այդ մթնոլորտին մէջ է դարձեալ, քաջարժակ ազատութեան մէջ է, որ «Բազին» հրապարակ կու գայ կրկին, ինչպէս յայտնով, որ իր մօտիկ ու հեռուոր աշխատակիցներուն աշխուժ գործակցութեամբ պիտի շարունակէ իրեն վստահուած դերը, եւ այս անգամ՝ անընդմիջաբար:

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Ց

Մ Ե Կ Ն Ո Ւ Ս

Յուլիական անակնկալ անձրևը նոր էր սկսել, երբ Ազատ Նուրեանը Նիւ Հէյզլընի մատուռան կայանից դնալով մեկնեց Նիւ Եորք՝ իր թիկունքում թողնելով տասնմէկ տարիների իր խմբադասանների շարանը։ Դրո՞ւմ ազնվամուգը էր, գորշ ու թաց։ Տանիքների ոտամների վրայ սեւ վառագոյր էր իջել։ Նստարանում նա մենակ էր, ճամբորդները սակաւաթիւ, մեծ մասամբ դործարար երեւոյթով տղամարդիկ։ Դիմացի նստարանում մի խարտեաչ երիտասարդ զոյգ տաք-տաք համբուրում էր։ Գնացքի պատուհանի վրայ նա տեսաւ իր նոր սափրուած կապտաւուն երեսի արտացոլումը, մութ խոշոր աչքեր՝ թաւ յօնքերի տակ ապաստանած, Նուրեանների յունահայկական քիթը, որը 19րդ դարի վերջերին Ղարաբաղի լեռներից իջնելով Թաւրիզ, հասել էր Նիւ Եորք, ապա տարածուել աշխարհի շրո՞ւքը։ Նոյն-ինկ իր գուլարը դէժը չէր մնացել արծիւային այդ պարզեւից։ Նա իր երկար ծնկների վրայ դրեց կաշուէ սրճագոյն պայուսակը՝ իր ձեռադիրքը, անկատար գիրքը, որն ուղեւ գործել էր բեռ։ Նա չիմացաւ, թէ ինչպէս ցամաքեց տաս հազար դոլարի կանխավճարը, սրը Ե՛լլ համալսարանի հրատարակչականը երկար սակարկումից յետոյ յանձնել էր, պայմանով, որ Նուրեանը հիմնական փոփոխութեան ենթարկէր «Զանգուածային տեղեկատուութեան միջոցների մեքենայացումը եւ գաղափարների տազանայը» իր աշխատանքում։ Թեան վերջին շրո՞ւք գլուխները։ Այլ պայմաններում, երկու-երեք շաբաթից գլուխ կը դար գործը, սակայն արդէն վեց ամիս էր անցել, իսկ բնադիրը մնացել էր անփոփոխ։ Կանխավճարի մեծ մասը փաստարան Այգաք Այնստայնը իւրացրեց, երբ փաստօրէն ինքը որեւէ մէկ չունէր Մեյքէն Հիւս, Եթէ նրա փնտածը կիսահամարմամ փաթիլիկ Մուրհէյն է։ Ատուած իր հետ, թող դժոն մինչեւ լոյս դարարուն իրենց դեղին անկողնում։ Նուրեանը մեքենայօրէն շտկեց իր լեղակազոյն փողկապի հանգոյցը։ Նրա բերանի ձախ տնկիւնում մի թեթեւ ժպիտ զոյացաւ։ Նրան բնաւ զարմանք չպատճառեց այն հանդամանքը, որ վաղուայ Նիւ Հէյզլըն Ռեչիստըրը լոյս պիտի տեսնէ առանց իր խմբադասանի։ Վերջուպէս Մաքքեթայը իր նպատակին հասաւ։

Քննչական տեսութիւններով պիտի լեցնէ թերթը, ազգայնական չորացած դադարներ, որոնց կիրառականութիւնը վաղուց փչրուել է ժամանակի ժայռերի վրայ եւ, Աստուած իմ, ի՞նչ քարացած ոճ, կարծես ակադեմիկոսներէ հոմար է գրուած: Նա մտովին կարգաց իր վերջին խմբագրականը: Մեր սպառնալիքով Խաչատուրեանը ա՛յ միայն փախել է քննական պաշարները եւ անպէտք աղբիւրներով զոռնի ճերֆիմ ու համաշխարհային շուկաները, այլեւ ստեղծել մի հիւանդ ֆալսափակրթութիւն, ուր մարդը, կորցնելով իր անհատականութիւնը, գրկուել է մասնաւորապէս կարողութիւնից՝ իր քաւարութիւնը փնտռելով անքաւարութեամբ մէջ: Հետեւեալներ եղել է այն, որ արդի մարդը դարձել է ագահ, յաւիտեացի դժգոհ, անսահմանութեամբ մէջ որոնելով իր երջանկութիւնը, երբ փաստօրէն, քացի մշակութային բնագաւառից, սահմանն ու կշիռը ֆալսափակրթութեամբ զարգացման բաժայիծներն են: Տոմսավաճառը կարեց նրա մտքի թելը: Նուրեանը ծոցի զրպանից տոմսը յանձնեց պաշտօնեային, որի հաստ ճարպոտ երեսի վրայ ժպիտ գոյացաւ: Ժպտիտ արեւը վեր խոյացաւ, գրեթէ ծածկեց նրա մանր կապոյտ աչքերը:

Նուրեանը պայտասկից հանեց ձեռագրի տրցակը, արագ թերթեց, մի կողմ գրեց: Ժամանակը սեպ էր խրել իր եւ ձեռագրի միջեւ: Զեյդաշի յարկաբեւոյնով մէկ ամսից կը լրացնէ գիրքը եւ մնացեալ երեսուն հազար դոլարով մի ամբողջ տարի հանգիստ կ'ապրեմ, եթէ նոր պահանջներ չներկայացնէ Մելիքէն: Արդէն եղած-չեղածը արուարձանի բնակարանն է Նիւ Շէյ-վընի հարաւային թաղամասում՝ Լոնդ Այլընդի Մոցի եղբայրին: Մելիքէն յապիշտակել էր տան կահոյքը, իրեն թողնելով մի խտրիւսած մահճակալ, մի սեղան եւ մի աթոռ: Այդ էլ քեզ հայ կիւն: Գոնէ ձեռքից չտայ բնակարանը: Մի օր կը ծախի եւ դրամը կը բաժանի չափահաս երկու զաւակների միջեւ: Ամէն անգամ Մելիքէն յիշելիս, Նուրեանը իր նախկին կնոջը պատկերացնում էր անկողնում, մերկ, Մուրհաբի ջրում, հաշմանդամ ձեռքը նրա յուսթի ծրծերի վրայ, քրտինքի կծու հոտ, կրքի անհատնում քուրայ, Մելիքէն անհագին հեւքերը, շուրթերը լայն ու վաւաշտ, կլանելու աշխարհը:

Յունիսի սկիզբներին Նուրեանը որոշեց հալուի նստել ինքն իր հետ: Նիւ Շէյ-վընը ընդամենը էր հեղձացիլ տնիւրի ալիքներում: Բնակարանում ընչէլ չէր լինում: Փայլում էր դատարկ սենեակներում եւ զարմանում, որ այդտեղ եղել է ոչ: Առանց Մելիքէնի պատերը խորթացել էին, կորցրել իրենց ինքնութիւնը: Երբեմն նրան թւում էր, թէ ինչ-որ յիմարանոցի մոռացուած մի տնկիւնն է ընկել: Պարտէզում խոտը մէկ ծնկալափ բարձրացել էր՝ երբեմն վառ կանաչը պղտորուել, հաստացել: Լուսամուտի վրայ սարդերը զարմանահարաւ, համարձակ ոտայններ էին հիւսել: Ռեչիստրի իր գրասենեակը դարձել էր սպառնալիք: Աշխատում էր թերթերի մէջ թաղել իր օրերը: Մի քանի գիշեր լուսացրեց հին թիկնաթոռի վրայ: Դէպքերը այնքան արագ էին ընթացել, որ դադարը դարձել էր սպանիլ: Արդէն ինքը երբեք էլ տրամաբանութեան մարդը չի եղել: Մեծ, համատարած գաղափարներ, պատմական վերլուծումներով յաղեցած, այո՛, սակայն դործնական տօրեայ խնդիրներում միանգամայն անճարակ: Այդուհանդերձ, պիտի ձեռքազատուել բոլոր կապանքներից, ներկայից, որն անգիտակցաբար դառնում է անցեալ: Եւ ինչպէս իսկական Նուրեան, հենց սաքի վրայ, առաւօտեան սափրուելիս, որոշեց թողնել իր խմբագրի պաշտօնը, հեռանալ Նիւ Շէյ-վընից, այդպէս բնագոյմամբ, վայրկեանական, սպաւիտիկ ներքին դեւերին ու զգացմունքներին, ինչպէս եղել էր միշտ իր ամբողջ կեանքում: Երբ ինքն էր պատահանաւոր իր ֆայլերի, տպա կեանքը մի կերպ իր հունի մէջ էր

մտնում, Լուսաջարանի ծորակը բացեց, սառ ջրով լուսացուեց, օծեց երեսն ու վիզը, մերկացաւ, բարձրադիր հայելու մէջ տեսաւ իր սպիտակ, տակաւին մկանուտ մարմինը, երկար սրունքներ, նեղ ազդրեր, գրեթէ տափակ փոր, մազոտ կուրծք ու Նուրեան անշիւթելի դիմադծերը, նոյն կան ու սերմը տեւաւունք սերունդ, երկարաւուն, տառապաւար, կոպիտ ու կանաչի, երկու թեք ակօսներ քթի երգիքից մինչեւ զգայուն բերանի շուրջը, նոյնիսկ առինքն նող, խոհական մէդի մէջ պարուրուած: Նայեց իր մերկութեանը եւ ինքնապահ ժպտաց, յետոյ ժպտաւ աչքերից տարածուեց մարմնի վրայ: 48 տարեկան էր ու տակաւին արթուն: Նայեց մահաւակին ու յիշեց գիշերները ու Մելինէի սեւ ծորուն մազերի թանձր բոյրը: Յաջորդ ճրկուլարթի ներկայացրեց իր հրաժարականը:

Իր գործընկերները քեթ քթի տուած ասացին, որ Նուրեանը թոցրել է խելքը: Մի՛ վ է լսել, որ տնտեսական տաղանդի այս օրերին, երբ Ուսլ Սթրիթը խելագար ցատկոտում է, մարդ թողնի իր գործը: Որոշեցին, որ պատճառը Միլինէն է, որ մարդը բռնել է ինքնակործանման ճամբան: Այդ նոյն օրը, երեկոյան, Նուրեանը մաքրեց գրասեղանը, կանգնեց պատուհանի առջեւ: Քանի որ պարտէզում անցորդները շաւիղների բաժանումը՝ կտրուած էին կանաչախիտ արահետները՝ առէն մէկը իր ճակատադրի յետեւից ընկած: Նա յիշեց երեւանի կենտրոնական հրապարակը 1973 թուին, երբ խմբագիրների մի խմբի հետ այցելութեան էր գնացել Սովետական Միութիւն: Հրապարակում բոլորն էլ հայ էին: Նրանք էլ էին շտապում: Տեսնես ո՞ր էին գնում: Այդ հրապարակում զգաց իր օտարութիւնը: Այդ օտարութիւնը զգաց նաեւ Նիւ Հէյլիլինի կենտրոնական պոստպոստ: Եւ ինչպէս լինում էր յաճախ, ամառային մէջ կամ խրախճանքի ժամանակ, յանկարծ լզիտեա որտեղի՞ց վրայ հասաւ անդունտ ցուրտը, նստեց նրա աղիքներում՝ կրծելով նրա դոյութեան լարը: Նա սիրում էր կեանքը, սակայն կեանքը զլանում էր: Հայ գրող ու ամերիկացի խմբագիր: Պարսկաստան ու Ամերիկա ու դրանց արանքում մի տասնեակ երկրներ, իսկ գէնիթում՝ Հայաստան՝ առանց հասնելու, առանց պատկանելու, ինչպէս անտէր մնացած նա լերկ ժայռուտի երախում: Փլփրի պէս քաշուել հրապարակից ու պայքարել հասարակարդի նեխուածութեան դէմ: Ստեղծել ուրոյն տիեզերքը:

Ճեպընթացի սպասարկութիւնը վաղուց էր դադարել: Տասը բուպէն մի անգամ զնացքը կանգ էր առնում ժամանակից զորացած, անխամութեան դատապարտուած աննշան կայանների առջեւ, ճանշում, մոնշում եւ երկաթէ փորը առած՝ շարժում միմեանց հրմշտող աւանների միջից: Միլիթորդ, Սթրազֆորդ, Բրիլիփորթ, Ֆէյլֆիլդ, Նորուաթ, Դարիէն, Սթամֆորդ, Գրինուել: Գնացքը երկրի վրայ, երկրի իր առանցքի ու արեգակի շուրջ: Համակարգութեան թաւալումը կաթնածիրի պորտում: Ամէն ինչ գէպի վախճան: Ինքը գնում է դէպի մահ: Նուրեանը զգաց շեղբի ստոնութիւնը իր արեան վրայ, իր հայրը այլեւս հող էր դարձել Թեհրանի հայոց գերեզմանոցում: Չտեսաւ հօրը: 66ի Դեկտեմբերին, երբ Երեւանից վերադարձաւ Նիւ Եորք, հայրը արդէն մահացել էր: Այդ տարի խիստ ձիւն էր եղել: Պատմեցին, որ դիակը մէկ շաբաթ թաղել էին բակի ձիւնի տակ մինչեւ որ բացուեցին դէպի գերեզմանոց սանող ճանապարհները: Հիմա իր գաւակներն են ցրուել աշխարհում: Դաւաորը՝ Սեդան, Սան Ֆրանսիսկո, որդին՝ Վահէն, Փաբլո, Ռեանոյ: Մի յաղթանդամ սեւամորթ կին իր ահապին կոնքերը տեղաւորեց Նուրեանի նստարանի վրայ: Նա գլխով թեթեւ ողջունեց, կուչ եկաւ ու մտքում անմիջապէս շարադրեց վաղուայ խմբագրականը: Այսօր մախնաւիւս ըմտրուելուց օր է նիւ Եորք, Նիւ Ջերսի եւ Փենսիլվանիա մահաճգնա-

րում: Գեոմորֆոլոգիան ու Հանրապետական կուսակցությունների քեկնածուները եռամսեայ ընտրությամբ յետոյ տիրի լսեն ժողովրդի վճիռը: Ընտրութեան ենթակայ են մանանգային ու դաշնակցային Ներկայացուցչական Տան աթոռները: Մենք յորդորում ենք ընտրողներին իրենց ժառանգական քեկնածուներին եւ ոչ մէկին, որովհետեւ նրանք ոչ միայն միջակութիւններ են, այլեւ անտեղեկներն են միջագային խնդիրներին: Փաստօրէն, եղածը ընտրապայքար չէր, այլ՝ անհատականութիւնների մրցակցութիւն, իսկ լատիները դէպքում մրցակցութիւն իշխող շրջանակների շահերի միջեւ: Ջանգլածային հաղորդակցութեան միջոցների վրայ յիմնած՝ այդ մարդիկ շահագործում են իրական ժողովրդավարութեան սկզբունքները՝ անմեղական ու խմբակային շահերը գերադասելով ընդհանուրի շահերին: Եթէ այս է արդի ժողովրդավարութեան իրականութիւնը, ապա տիրի ասել, որ հաւասարապետութեան մեր դարը, չեմոյաւրոյթելով մայրաճանաչութիւն ու ստեղծագործ Քոնիք, բթամիտ զանգուածի է վերածել հասարակութեանը՝ նրանից խլելով քաղաքական գիտակցութիւն, մշակութային համարակցութիւն, մտքի անկախութիւն եւ նկարագրի կռուութիւն:

Ճողոց խմբագրականը: Գնացքը կանգ առաւ Նիւ Եորքի Գրանթ Սթրիթը կայարանում: Կեանքի մեծ մասը Միացեալ Նահանգներում ապրած լինելով հանդերձ, Նուրեանը տակաւին եւրոպացու էր նմանում: Այնքան հագուստները չէին, որքան իր կեցուածքը, մշակութային շարժումները, քայլերու մաքուր, լուրջ կշիռը, գլուխը բարձր, կատակ-մատակ չվերցնող իր հայրենացի: Պատկերով՝ շիտակ գլխացիների աչքերին էր նայում: Պայուսակը թեւի տակ նա այժմ երեւոյթացի էր նմանում — կարծես եկել էր Նիւ Եորք Իրեյնֆուս Գոնգի արխիւները քննելու: Միւս ճամբորդների հետ նա քայլեց ստորերկրեայ սեւ կեղտոտ տախտակածան ի վեր դէպքի կենտրոնական սրահը, որն այդ պահին Բարեւում էր: Աշխարհի բոլոր կողմերից ցեղերը արշաւել էին այդտեղ: Գերակշռողը Լատինական Ամերիկան էր: Ըստ Երեւոյթին, օդի բարեկրանման համակարգը չէր աշխատում կամ եթէ աշխատում էր՝ ի վիճակէ չէր զոյգանալու հազարաւոր ժողովրդայնական լեզուներ այդ վիթխարի դամբարանը: Նա ցաւ զգաց, որ կայարանը հետզհետէ փլուզուում է: Ամերիկեան արդիւնաբերական յեղափոխութեան թերեւս վերջին կոթողը, երբ ապագան վառ էր, երբ երբեմնի աւազակները ազնուական հովեր էին առել, կանացի կօշիկներէն շամպայն էին խմում եւ ամէն օր մի նոր երկնաքեր էին բարձրացնում Մանհայթի կողմում: Նուրեանը սպասեց մինչեւ որ հեռախօսային խցիկներէն մէկը դատարկուեց: Ներս մտաւ, ծամածռեց դէմքը, քրտինքի կծու հոտը նստել էր ընկալուելի վրայ, թաշկինակով մաքրեց գործիքը, շտկեց փողկապը, հաւաքեց թիւերը: Հենց այդ պահին որոշեց, որ շատ ձեւական էր ստացուել խմբագրականը, այսպէս որոշեց՝ դատարանական ի՞նչ պիտի ասեն ընթերցողները, ո՞ւր մնաց Նուրեանի աշխոյժ, թեթեւ սճը, յատկապէս՝ երբ ձաղկում է առեւտրա-արդիւնաբերական կառոյցը: Նոյնիսկ գովազդատու ընկերութիւնները հաճոյքով են կարգում իրենց շարաշահութիւններէ դէմ ուղղուած քննադատութիւնները, որովհետեւ լրագիրը լայնօրէն սպառնելով սպառում է նաեւ իրենց ապրանքը:

— Հասել եմ, — խօսափողի մէջ խօսեց Նուրեանը:

— Ուշացար, Աղամ, սպասում եմ քեզ, — հեռախօսալարի միւս ծայրից լսուեց Ջեյմսի կոնտրալտոն:

— Էլեկտրաբաւարը դանդաղ էր, մի քան անդամ կանգ առաւ:

— Գիրքդ բերե՞լ ես:

— Այո, — տհաճութեամբ պատասխանեց Նուրեանը:

— Քո սիրած խայտաճուկն եմ պատրաստել։ Մպասում եմ, Աշամ, շատավեր։

— Այո, — ասաց Նուրեանը եւ լսափողը վար դրաւ։

Թաշկինակով ճակատի, վղի քրտինքը մաքրեց, դուրս ելաւ 42րդ փողոց, անկիւնի խանութից մէ շին գինի գնեց — սպիտակ բորգո, 61ի գինեկուծ — դէմ յանդիման կանգնեց Նիւ Նորքի ժիւղին։ Երկնքից լսւան իջել էր շինութիւնների վրայ, թափուել փողոց, ձուլուել առօրեային։ Միջոցը տաք մոխրագոյն էր։ Վերին գծերի վրայ ժանդոտ պղինձն էր նստել։ Բազմաթիւնը փոխուել էր։ Հեռաւոր կղզիներից նոր մարդիկ էին եկել, տիրել քաղաքին, դրամի տենդով բռնուած երբեմնի խնակներ, որոնք լարուած հայեացքներով դուրս էին մայթերը, կորչում շէնքերի խոռոչներում, վերադառնալով դուրս թափուել խելագար յորձանուտի մէջ։ Ամէն անգամ Նիւ Նորք գալիս՝ է՛լ աւելի խորթացած էր դռնում քաղաքը, որը ի՛րն էր, թերեւս միակ ոտանքը, ուր մշուշոտ կապ էր գտնում իր եւ աշխարհի միջեւ։ Մայթը եփում էր նրա ոտքերը։ Նուրեանը հանդիպած առաջին թաքսին մտաւ, տուեց հասցէն։

— 81 եւ Մադիսըն։

Մեքենավարը ուղեց վստահ լինել։ Նա կրկնեց հասցէն։ Պորտո ուկացի էր, իսպանական շէտով, անունը Ռիքարդօ Օսթեդա։ Այդպէս էր գրուած դիմացի արտօնագրի վրայ։ Նուրեանը բռնցքամարտիկ դիտէր Օսթեդա անունով, ներքին համակրանք զգաց նրա հանդէպ։ Նրանց հայեացքները հանդիպեցին ինքնաշարժի ապակեմահանի մէջտեղում դեռնողուած հայկու մէջ։

— Ինչպէ՞ս է գործդ, — հարցրեց Նուրեանը։

— Գանդատ չունեմ, ամառային այցելուներով լեցուն է քաղաքը, — պատասխանեց Օսթեդան՝ կիսաթիկ պսպղուն ժպտալով։

— Մեքենան չո՞նէ, — շարունակեց Նուրեանը։

— Մէկ տասներորդով միայն, երկու տարուց իմը կը լինի։

— Ամուսնացա՞ծ ես։

— Այո՛, երեք զաւակ ունեմ, չորրորդն էլ ճանապարհին է, — ասաց Օսթեդան՝ ձախ ձեռքը մեքենայից ցած կախուած, աջը դեկի վրայ։ Նա այնքան երեւոտաբար էր։

— Այդպէս, ուրեմն։

— Ի՞նչ արած, կեանք է։

Օսթեդա վարպետութեամբ մեքենան շուռ տուեց դէպի Փարք պողոտայ, ուր երթեւեկը աւելի արագընթաց էր։ 52րդ փողոցի առջեւից անցնելիս՝ Նուրեանը զարմաւ աջ ու երկար նայեց քառակուսի այն շինութեանը, որի պատերի մէջ անցեալի յուշեր ունէր, երբ կեանքը գինիով լեցուն գաւաթ էր, ինքը թղթակից, Լիփմանի ու Մենթէնի աշակերտ, շնորհալի ու չփացած, փիւլեցըրեան դափնին ճակատին, եթէ ուզեցեալ։

Մեքենան կանգ առաւ քառուղու եզրին, վիմապատ մի ծանրանիւտ շէնքի առջեւ։ Օսթեդան իջաւ մեքենայից, բացեց ինքնաշարժի դուռը։ Նուրեանը երթալնի կրկնակին վճարեց, ինչ-որ անհասկանալի բաներ ասաց ու պաշտօնակը թելին մտաւ բնդունարան։ Դռնապան Նիքը նրան բնդունեց որպէս տան բարեկամ, սեղանց վեցերորդ յարկի կոճակը։ Վերելակը քառակուսի ամպի պէս վեր բարձրացաւ։ Այլ աշխարհ էր բնկել՝ մեռելատան կարգապահութիւն։ Տնաշարից տնաշար Նիւ Նորքը փոխում է իր դիմադիծը։ Ափսո՛ս թայմը Սքուէրը, որը հիմա պտտիկների ու միատեսականների ժամուրդովայր է դարձել։ Անցեալ անգամ, երբ գիշերով անցնում էր այդ հրապարակից հինգ առաջարկ ստացաւ՝ երկուսը մատղաշ կանանց, երկուսը տղա-

մարդկանց, իսկ Հինգերորդը կանայքի հազուատներով մի գեղեցիկ երիտասարդի կողմից: Ըստ երեւոյթին, Նիքը ներքին հեռախօսով ծանուցել էր իր գալուտը: Մուգ կապոյտ դրան առջեւ Զելզան դիմաւորեց նրան, ժպտերես, թարմ, ջերմ, բուրու մեղմ, վառ վարսերը ուսերին: Նուրեանը իր քրտնաթոր ձեռքերի մէջ զգաց նրա զով մարմնի հրաւերը: Նա համբուրեց Զելզայի բերանը: Ամբողջովին մագնոյիս:

— Շատ կարօտեցի քեզ, Ադամ, — ասաց Զելզան, առաջնորդելով նրան ներս, աջ թեւը կանթած նրա թաց իրանին:

— Ուրեմն, քէն չես պահել:

— Ինչո՞ւ պահէի:

— Ո՛չ գրեցի, ոչ էլ հեռախօսեցի, — Ադամը փոքրի մէջ առաւ նրա երեսը, սեղմեց ցցուն ալոսկրները, միաժամանակ բթամատով շոյելով նրա ծնօտը: Մետաքսեայ կիտրոնագոյն միջեւ ոտքերը հասնող տնային հագուստի միջից ազատորէն ծփում էր Զելզայի լանջը: Համեմունքի մեղմ հոտը հանգստութիւն պարզեւեց նրան: Վաղուց էր, որ կին չէր գրկել:

— Գիտէի, որ զբաղուած էիր ապահարդանի հարցերով: Գիրքդ ի՞նչ ընթացքի մէջ է:

— Շատ վատ, չի շարժուում:

— Այստեղ կը գտնես անհրաժեշտ կենտրոնացումը:

— Կենտրոնացումի հարց չէ, — ասաց Նուրեանը՝ քաղելով կոշի աչքերի հասուն պտուղը, — ցամաքել են աղբիւրները:

— Անհիթեթութիւն, — կշտամբեց Զելզան, — քո գրիչը աւելի թարմ է, քան հրապարակը աղմկող նորելուկ մարդարէներինը: Կարծում ես չե՞մ կարդում գրութիւններդ...

— Գիտե՞ս, Զելզա, դու գնա ով աւելի գեղեցկանում ես, — ընդմիջեց Նուրեանը, — անպատճառ երիտասարդ սիրական ունես:

— Դո՛ւ ես իմ սէրը, — բացարձակ անմիջականութեամբ յայտարարեց Զելզան, զրկեց նրա իրանը եւ վարեց մեր՝ սպասեց դատաւճռին, մեծ երեխային, խորհրդաւոր հային, որը Նիւ Եօք թայմզի կիրակնօրեայ համարում ցեղասպանութեան մասին է գրում, ապա դալիս-կանդնում ալոստեղ եւ առում, թէ ցամաքել են աղբիւրները, երբ իր ներկայութիւնը խաբիսխ է, երջանկութիւն, յատկապէս իր աչքերի յարտաեւ գիշերը:

Նուրեանը խոնարհեց գլուխը, փոքրով դոցեց կնոջ ակունջները, համբուրեց նրա շրթերը, առանց աճապարելու, ամէն վայրկեանը իր հերթին, խոնաւ՝ ինչպէս ջրվէժի ցօղը դիմացի լերկ քարի վրայ, աղ ու լպարը լինողերի զօղանջում:

Զելզա Բլէյքի յետոյքը ամէնից հոյակապն էր Նիւ Եօքում: Ողորկ, ամուր, ինքնիշխան: Փայլելիս՝ սպառնում էր քանդել կապերը: Այդպիսով էլ սկսուեց մտերմութիւնը: Հրատարակչական ընկերութիւնների տարեկան համագումարն էր Փիէտ Հիւրանոցի հնութիւն բուրսդ գահինում, երբ երկարալունջ գեղոյցներից յոգնած՝ նա անցաւ քովի սրահը մի դաւաթ սփռելով թարմացնելու իր ջղերը: Զելզան կտնայ էր հագել սրճադոյն բաճկոնով, զուսպ ու միանգամայն կործանել: Ներկայ այլ կանանց մէջ նա զանազանում էր իր կարմիր-գեղջիկաւուն մաղելով, մաքուր, հարթ՝ պաւլովեան գունդով, լայն մուգ կապոյտ աչքերը սեւ թարթիչներով ու յօնքերով երիզուած, վիհերոտ սառնութիւն, անասուն կորած ներկայութիւն մաշուած ռոքոքոյի գունաթափ մթնոլորտում: Ցաքուցիւր սեղանների շեղ արանքից անցնելիս՝ Զելզան կոնքը դէմ տուաւ միջին տարիքի ակնոցաւոր մի մարդու ուսին, մարդը փորձեց ճամբայ բանալ, նրա սուրճի գաւաթը վեր բարձրացաւ ու պա-

բունակութիւնը թափուեց Զելզայի աղբրի վրայ: Նուրեանը բարձրացաւ տեղից, ծոցի դրպանից թաշկինակը հանեց եւ հակուելով կնոջ վրայ՝ մեծ կենտրոնացումով շփեց նրա աջ բութքը: «Այլըուհ»-ը, հարցրեց Նուրեանը: «Ո՛չ, սուրճը բարեբախտաբար դուղջ էր», — պատասխանեց Զելզան, — շնորհակալ եմ ձեր օգնութեան համար»: Երբ իրարանցումը վերջ գտաւ, Զելզան ընդունեց նրա հրաւերը, բաժանեց նրա սեղանը, ծնօտը վեր բարձրացրեց ու ծիծաղեց: «Լաւ օգնուեցիք հանգստանալից»: Նուրեանն էլ ծիծաղեց: Ո՛չ, հրատարակական որեւէ ընկերութիւն չի ներկայացնում, կանոցի հաշուառների նորոգութիւնների մասնագէտ է բլումինգդէյ-ը գերզմանառանցում, եկել է Փիէթ հիւրանոցում կազմակերպուելիք աշնան նորոգութիւնների ցուցադրութեան առնչութեամբ: Զելզան այն կանանցից է, որ առաջին պահին անհաղորդ լինելու տպաւորութիւն է գործում, սակայն երբ մտեմանում է, բացում են ամբարտակները եւ հալլող սառոյցների միջից գոյանում է կըղզին արեւադարձային փարթած կանայքութեամբ, ծփուն, երկինքը ջիւղ, ջրերը յստակ: Առանց բարդութիւնների:

— Արե՛, մի նայե՛մ քեզ, — բացականչեց Զելզան, պոկուեց նրա գլուխից, մի քանի քայլ նահանջեց, տակաւին կտոյած Նուրեանի ձեռքերին, — մի քիչ նիհարել ես, Գարի Գալիլէյին եւ նմանում:

— Միընդե՛ր փողկապս: Քո ուղարկած նուէրն է:

— Միանգամայն յարմարում է քեզ: Եթէ իմանաս, Աղամ, որքան երջանիկ եմ որ եկար:

— Ծարուհակ ըո մասին էի մտածում: Դու միշտ ինձ հետ էիր նիւ Հէյվընում:

— Եթէ ասէիր, ամէն ինչ թողած կը դայի:

— Փոխարէն ես եկայ, — ասաց Նուրեանը՝ սեղմելով նրա ձեռքերը:

Յանկարծ սարսափ իջաւ Զելզայի դէմքին: «Խոհանոց», հչաց նա ու վազեց խոհանոցի ուղղութեամբ, դրան առջեւ շուռ եկաւ ու ասաց: «Աղամ, դու մի քիչ թարմացիր, եթէ ուզում ես լոգանք ընդունիր, մի կէս ժամից պատրաստ կը լինի ընթրիքը»:

Զելզայի յարկարածինը կահաւորում էր Լուզովիկոս Ղարդի սծով, հնութեան մէջ նորութիւն, գասական ձեւերի արանքում վերացապաշտ մեծադիր պատաստներ, հիւրասենեակի մարած գոյներից յետոյ ննջասենեակի փափուկ լոռութիւնը, ճաշասենեակի զուարթ հրաւերը, սեղանի վրայ միշտ ծաղկեփունջ: Միշտ մաղնույիս: Նա մի պահ կանգնեց պաղարակների շքեղ հատորների միջեւ սեղմուած իր հայերէն միակ գրքի՝ «Լեռնայան»-ի առջեւ, հանեց գիրքը, անմիջապէս իր տեղը դրաւ: Թերեւս նիւ Երբքում միակ անձն է, որ ունի իմ գիրքը: «Ուզում եմ ունենալ ըո գիրքը»: «Մական հայերէն է»: «Հինց հայերէն լինելու համար է, որ ուզում եմ»: «Օ՛, մարդ Աստուծոյ, ինչո՞ւ հայերէն չես գրեր, ատ ինտո՞ր կ'ըլլայ, որ հայու զաւակ...»: Նուրեանը լողարան մտաւ, արագ հանուեց, լողանք ընդունեց ու թեթեւացած՝ եկաւ նստեց թաղկաթոռին: Նա իր մարմնի վրայ զգում էր Զելզայի մաղնուլիս թուրոց օճառի լուռ կիրքը, որը նրան յիշեցրեց Թաւրիզի իրենց բակի յամիկենու մայիսեան յաղթանակը, յատկապէս երեկոյեան, երբ հողի առջութիւնից ուռնացած՝ ծաղկեթուփերը բացում էին իրենց կարմրակապտաւուն պնչերը եւ կիրք ցանում աշխարհում: Այդ աշխարհը Լիւլաւ թաղի ծուռումուռ փողոցներն էին իրենց ցեխածեփ կքած պատերով, ուր ամբողջ օրը յամառ էչերի կարաւանների հետ կռիւ էին մղում թուրք իշապանները: Մածունի կարասները փողի էին հաւաքում նպարավաճառ հասանի բացօթեայ կըպակի առջեւ: Պատերի անկիւնների տակ մարդիկ կանգնում, միգում էին,

մէջը թափուած էր առուն, ջուրը դնում աները: Վաղող ջուրը մաքուր է, առում էին ու կուշտուկուռ խմում: Այդուհանդերձ, Թաւրիզը տինդերքի մի կէտն էր, եթէ ոչ կենտրոնը: Թաւրիզում սկսում էր ամէն ինչ, յատկապէս արբունքը, խելագար ձիերը բաշները ցցած արշաւում էին լեռներն ի վեր դէպի ամպերը, դէպի աստղերը: Սոնա, իմ սիրելի Սոնա, տեսնես ի՞նչ է անում Սոնան: Նա ակնկալիքներով լի հայեացքը ուղղեց խոհանոցի դրանը, ապա՝ մտքում շարադրեց մի այլ խմբադրական, սակայն անմիջապէս անդրադարձաւ, որ Սօլ Բելոյի հերոսի հիւանդութեամբ է տառապում, հրեայ այն պրոֆեսորի, որը շարունակ նամակներ է յղում ողջ ու մեռած մարդկանց, սակայն խմբագիր լինելուց առաջ եւ բանաստեղծ էի, երբ Հերձոգը տակաւին զեպերում էր իր հրէականութեան մթին արահետներում, գուցէ հիմնական-նում կարգերը տապալելու իր վայրենի քնազգն է՝ հայկական դարաւոր ապրտամբութեան կրակէ լեզուն: Ես չեմ ճանաչում մարդկութիւնը, երբ մարդկութիւնը ինձ չի ճանաչում:

Ձեւզան վառեց ճաշասեղանի երկու կանաչ մոմերը: Ուայտածուկի մէջքին նստած բոլած նուշի բուրմունքը երիտառարդութիւն բերեց Նուրեանին: Առաջին անգամ խալտածուկը կերել էր տարիներ առաջ Շաթ Էլ-Մարա գետի ափին, ամուսնի վրայ խորոված, ոտքի վրայ, արար ձկնորսների հետ ու համբ մնացել էր բերանում: Լոյսի լեզուակի խաղերի հետ տարուբերում էր Ձեւզայի դէմքը, հասունացած խոստում այն ամէնի, ինչ անցողիկ է ու դեպքերի: Նա պատասխանողով մէկզի հրեց ձուկը մինչեւ որ այն քամուեց իր շրջապատի իւղից, մեծ ախորժակով կերաւ երեք ձուկ, իր քիմքի վրայ զգալով նուշի անհոգ տաքութիւնը: Կոնջ ներկայութիւնը արթնացնում բերեց նրան, մտովին շօշափեց յարկաբաժնի քաղցեանի մշակոյթը եւ իրերի ներքին ծալքերի ծփանքը, որը լաւ էր, նոյնիսկ յուսալի, երբ իր վերջին ամիսների կեսերը եղել էր չոր, դրեթէ ստոյիկեան: Նուրեանը նորոգեց Ձեւզայի գիւնու բաժակը, լեցրեց իր բաժակը եւ խօսքից աւելի իր հայի մութ աչքերով կենաց մաղթեց, միասին խմեցին: Այլ դէպքերում, համալսարանական օրերին, քաղաքակրթութիւն չէր խաղում, առնում էր հանդիպած կնոջը եւ նրան ջարան տանում: Այն օրերին վայրենի գետ չէր ընտելացել: Ձկան չնչին կը մախքը նրան յիշեցրեց Հեմինգուէյի «Միքսիմիս Եւ ծովը» եւ զարմացաւ, թէ ինչո՞ւ Հեմինգուէյը մինչեւ վերջ պատանի մնաց, մի՞թէ ինքը հասունացել է, տարիները որեւէ առընչութիւն չունեն մանկութեան հետ, որը գլուխը աւրելի մէջ թաթախած՝ միշտ ներկայ է որոշ մարդկանց յոգնած անդամներուն: Ձեւզայի ներկայութեան նա զոյում էր իր տարիքը եւ միաժամանակ իր ուժերի վերականգնումը: Երկու դէպքում էլ Ձեւզան ապահովութիւն էր, տալիս էր իր լաւագոյնը առանց ակնկալութեան ու խօսակցութեան ամբողջ ընթացքում լարում էր իր որոգայթները՝ մի կերպ ամոքելու նրա կեանքի ժանկը:

Ընթերցից յետոյ, երբ քաշուեցին հիւրասենեակ, Ձեւզան սուրճ մատուցեց:

— Հանդիպե՞լ ես Մելինէին, — ասաց նա՝ խուսափելով «կնոջը» կամ «նախկին կնոջը» որակումներից:

— Մէկ անգամ, թատրոնում, Բեթլի «Վերլալա»-ի ներկայացման ժամանակ, եկել էր իր ամուսնու հետ:

— Ի՞նչ զգացիր իր հանդէպ, — հետապնդեց Ձեւզան՝ գլուխը թեք, պարանոցը սպասողական:

— Ի՞նչ ասեմ, խոռվեք, անհանդուրժելի: Ուզեցի հեռանալ. սակայն

ուշ էր: Մի պահ նայեց իմ ուղղութեամբ, ապա լոյսերը մարեցին:

— Ամուսինը տեղափոխեց, — չգիտես ինչու ուզեց իմանալ Զելդան:

— Ոչ:

— Դու տակաւին խանդո՞ւմ ես... ի՞նչ է նրա անունը...

— Մուրհիգի, փաթրիկ Մուրհիգի:

— Այո, Մուրհիգի:

— Խոնդ չէ, այլ՝ տակաւին, աւելի շուտ՝ Թունոտ արհամարհանք, — Նուրեանը շարեց խօսակցութեան ընթացքը, սուրճի դաւաթը վար դրեց, մի դանդիկ վառեց: Ինչպէ՞ս բացատրել, որ իր հանդարտ, ամերիկայնացած արտաքին տակ շարունակ ներկայ է արեւելացին իր ոչ-տակաւին գուրահետքերով: Իմ մօտ սեւ ու սպիտակի միջեւ այլ գոյն գոյութիւն չուներ, կա՞մ այս կամ այն, չինել կամ քանդել, կիսաւարտ տունը երբեք ապաստանարան չէ: Եթէ կիսահաշմանդամ չլինէր, կ'առնէր զլուխը քարերին կը տայր: Հէ՛րն եմ անիծել քաղաքակրթութեան:

— Սակայն Ադամ, դու գեռ սիրում ես Մելինէին:

— Մէք չէ, այլ՝ տարիների, ինչպէ՞ս ասեմ, սովորութիւն:

— Եթէ վերադառնայ քեզ, կ'ընդունե՞ս, — հաղիւ շնորհակալ Զելդան:

— Ոչ: Մէք միջեւ կամուրջները այլեւս քանդուած են:

Զելդան իջաւ ծնկներէ վրայ, բռնեց Նուրեանի ձախ ձեռքը, այսին պարտաւ, յետոյ համբուրեց ափը, գլուխը դրեց նրա ծնկներին եւ աչքերը խոփ՝ մէկ առ մէկ արտասանեց բառերը, որոնք այլեւս կ'անուամ էին նրա էութիւնը:

— Ադամ, եթէ գիտես, թէ որքա՞ն եմ սիրում քեզ:

Նուրեանը գրկեց Զելդայի իրանը, նրան առաւ դողը, լոյսեց ուտերը, պարանոցը, իր թեւերի մէջ զգաց նրա մարմնի ջերմը, հոսուն լաւայ հրաբուխի բերանում, Մահա անուշահոտութեան շղարը նրա մարմնի ձեւերում, սրունքի ամուր փափուկ հպումը, քրտինքի անդիւստացոն թեթեւութիւնը: Զելդան փոքրացել, աղջնակ էր դարձել՝ հակապակերը Բլումինգդէյլի նորածնութեան բաժնի այն գործարար կնոջ, որը մազերը ծոծրակին օտաղած, կուրծքը զուռ ու բերանը մտադրող, ամբողջ օրը քննում, ստուգում էր նորածնութեան անուանի հաստատութիւնների ներկայացրած հաղուստանմունքները ու գլխապաշտոյս պատճառող պատուէրների որոշումներ արձակում ընդարձակ աշխատանքում՝ Թրանքընթալըրի ու Մադըրուէյի վիթխարի սեւ ու սպիտակ պատանների տաղանգաւոր հոսանքի ներքոյ: Վերջին անգամ Սպրինգն էր, զնացքը նստել, մէկ օրով եկել էր Նիւ Եորք՝ փախչելով անձեւ անորոշութիւնից, բնկնելով մի այլ անորոշութիւն, երբ տարիների տակ թշնշ էր մնացել, յատկապէս քառասունեց յետոյ, երբ մի տեղ հասած պիտի լինել: Ամէն ոք մեկնել էր, տիտղոսի տէր դարձել: Նա կանգնել էր Զելդայի աշխատասրահի լուսամտաւ առջեւ, 59րդ փողոցի կեանքն էր գիտում՝ միտամոտեակ թիկունքում դալով առեւտրական աշխարհի օրհասական կշռոյթը, դարձանախօրէն երիտասարդ քարտուղարուհիների մասսեւ վաղը իրականութիւնից մի այլ իրականութիւն, անդադար մի քաղաքացի, գրամբեհներին յիշատակ, հեռախօսային լարերի տեղահանար հաղորդութիւնը, եթէ մի պահ կտնջ առնէր հրատապ հեռը, ապա հաւանաբար անկումի ենթարկուէր Ամերիկայի սպառողական մրցավազքը: Ակամայից շուտ եկաւ, Զելդան բռնեց նրա հայկացքը հւ փոխանակեց անձիգ ժողովրդով, որը նրա բերանից բարձրացաւ խոշոր թաց աչքերին, մշուշապատեց ճակատը: Սրճադոյն բանկոն սպիտակ շապիկի վրայ, սրճադոյն սեղմ շրջ-

Չաղաքացու, պարզ ու անսեթեւեթ: Ինչո՞ւ եմ եկել, անցաւ Նուրհանի մտքով, ես ի՞նչ գործ ունեմ նորաձեւութիւնների այս պերճ արահներում, թերեւս Մելիքին, բայց նա ի բնէ առինքնող է, ինչ էլ որ հաջնի, իշխողը իր մարմինն է՝ սեւահեր ու ցորենադոյն, նա երբեք չհետեւեց նորաձեւութեան, եթէ պարկ էլ հաջնի՝ նորից կը պարտադրի իր ներկայութիւնը: Զելզան վայրկեանապէս հրաժարուեց իր տարերքից, պայուսակն առաւ, ուղղակի մօտեցաւ Նուրհանին:

— Հիտանանք այստեղից:

— Ո՞ւր:

— Վարի սրճարանը: Կարօտել եմ քեզ:

Զելզան իր տիրապետութեան սահմանների մէջ էր: Ամէն ոք ճանաչում էր նրան: Միջին տարիքի մատուցարարուհին, դիրքով ու անսխալականորէն իրանդացի, անկիւնի մեկուսի սեղանը առաջնորդեց նրանց, պատուէրն առաւ ու հետացաւ: Զելզան սեղմեց նրա մազոտ ձեռքը, առաջ թեքուեց, այտը մատուցեց:

— Աղամ, սիրում եմ քո հայի մոայլութիւնը:

— Մոա՞յլ եմ, — ասաց Նուրհանը հեռացող թուխպի միջից, — թերեւս մտադրաղ, յետոյ բոլոր հայերը մոայլ չեն, զնացքի յոգնութիւնն է դուցէ:

— Գոնէ այդ է իմ տպւորութիւնը, — շարունակեց Զելզան, — ինձ թւում է, թէ ցեղային բնութագրծ է:

— Ու նաեւ պատմական, սակայն պատմութեան հէ՛րն եմ անիծել, ասա՛ տեսնեմ ինչպէ՞ս ես, Զելզա:

— Նոյնը: Միշտ սպասում եմ քեզ:

— Տեսնո՞ւմ ես, եկայ:

— Բայց պիտի վերադառնաս:

— Նորից կը դամ:

— Բայց ուղում եմ միշտ քեզ հետ լինել:

— Եթէ միշտ ինձ հետ լինես, կը ձանձրանաս: Ես սկսել եմ ինքս ինձանից ձանձրանալ:

— Ապուշ խօսք: Այդպէս ես ոտում, որ ձերբազատուես:

— Ինչո՞ւ հեռանալ լաւից:

— Զգիտեմ, սակայն փաստօրէն ե՛ս եմ քեզ հետապնդողը:

— Եթէ այդպէս է, ապա շարունակիր հետապնդումդ, իսկ ես պիտի աշխատեմ թակարդդ չընկնել:

— Ինչո՞ւ, Աղամ, — թախանձեց Զելզան:

— Որովհետեւ դու գրեթէ իմ դստեր տարիքն ունես:

— Չափազանցութիւն: Սեղան 21 է, իսկ ես՝ 28, յետոյ տարեքը որեւէ դէր չունի մեր սիրոյ մէջ:

— Զարմանում եմ, Զելզա, — ասաց Նուրհանը, — դու այնքան գործնական ես արտաքին աշխարհում, եւ այնքան վիպական՝ ներքին աշխարհում: Ինչպէ՞ս ես կարողանում համադրել այդ երկու աշխարհները:

— Մէկը միւսի հետ օրեւէ առնչութիւն չունի, Աղամ, իմ ներքին կեանքը ինձ է պատկանում եւ դու ես իմ կեանքի առանցքը:

— Ես կ'առնի խորխորած առանցքը:

— Հոքս շիք, — ասաց Զելզան:

Վիվալդիի Զարս Եղանակները հասել էր Ձմրան վերջին ու ստեղծ անսպասակ դառնում էր ձայնապնակի ներքին երիզի վրայ՝ միապաղաղ բուծ

Հոնդիւն արձակելով: Նախորդ Հնչիւնները տակաւին կախուել էին հիւրա-
ւենեակի միջոցից: Զեյլան անխօս բարձրացաւ Նուրեանի դրկից, նորոգեց
երգապնակը, այս անգամ Բախի Զութակի մի կոնչերտոն՝ Դաւիթ Օյսարա-
խի կատարումով, մօտեցաւ խմբիչքի պահարանին, ընտրեց Կարաւազիէ կոն-
հակի շիշը, վերցրեց երկու դաւաթ, վերադարձաւ Նուրեանին, լեցրեց բա-
ժակները, նստեց բազկաթոռին:

— Քո նախասիրած կոնհակն է, — ասաց Զեյլան, — կենա՛ցդ, Աղամ:

— Կենացդ, — ասաց Նուրեանը, — մի օր քեզ համար Հայկական կոն-
հակ պիտի բերեմ:

— Որտեղի՞ց:

— Հայաստանից: Հայաստանում բարեկամներ ունեմ:

Յմիջը թառեց Զեյլայի քիմքի վրայ, այրուցքը իջաւ կոկորդին, նըս-
տեց կրծքին, տարածուեց նրա մարմնի ծայրագագաններում: Նա նորոգեց
զաւակները: Այնքան Նուրեանի արտաքին մաղնիրակներովն էր չէր, որ-
քան նրա ներսի չղիգած դաշտը, որ զերում էր նրան, այնպիսի սարսուռը,
երբ կանգնում ես միջին խորխորատի եզրին, Արեւելքի ու Արեւմուտքի ար-
տասովոր խառնուրդը, մշակոյթի տակ անարատ նախամարդը՝ ողբերգու-
թեան չափ հարադատ ու խոցելի: Աչքերը յառած նրա մութ կապտաւուն դէմ-
քին, Թաւ յոնքերի վրայ դունատ ճակատ ու ժոխրոցած ապստամբ ալիքներ՝
Զեյլան ցանկացաւ յղանալ նրանից, քամել նրա կեանքը իր կեանքում, փախ-
փայել հինաւորեց սերմը, զգալ նոր կեանքի ուսնացումը իր արգանդում:
Նուրեանը ժիւնների նման չէր, միւններից պահանջում էր առանց ստանա-
լու, առանց տալու, օրերի լուսանցքում տարուող խաղ՝ անսկիզբ, անփա-
ճան, այո՛, նոյնիսկ աննպատակ, Նուրեանին հանդիպելով սկսեց գտնել ի-
րեն, զգալ օրերի վաղանցուկ երթը: Յուսնալի մատուցեց: Առասպելական զօ-
րավար լինէր կարծես, որը բաց ռազմաճակատում կանգնած արհամարհում է
դնդակների սպառնալիքը, գիտնալով, որ մի օր պիտի բնկնի: Այդուհան-
դերձ: Կար Նուրեանի Հայկական շեշտը, որով անդիւրէնը առնականանում
էր, կորցնում Թաւուս բլուրների կլորութիւնները, բառերը բխում էին կրծ-
քից եւ բարձրունքից զլորում ցած, այդ պահերին նա պատկերացնում էր
Հայաստանի լեռներն ու Պարսկաստանի արեւը, կարծես պատգամախօս լի-
նէր, որը պատահամբ բնկել էր Ամերիկա եւ զարմանում, թէ ո՛ւր են գնում
զանգուածները, իսկ ամէնից շատ իրեն գրաւում էր Նուրեանի տպակենդորդն
ներկայութիւնը, ամբոյնի մէջ ու ամբոյնից հեռու, առանձին կղզի, նրա ինք-
նախարարանիչ հիւմորն ու մանկունակ ֆետիշները, անփորձ ու անդործնա-
կան, տակաւին պատանի՝ հրաշալի ախօսները դէմքին կուտակած: Զեյլայի
այլեւս Հասուն Հայեացքը Նուրեանի գլխի վրայից բարձրացաւ դիմացի պա-
տի Կոկոշկայի ճկապոյտ հագած կիկլոս պատառի վրայ, ներքին անհրաժեշ-
տութեան աղաղակը, վերացապաշտական առաջին փորձը, բողոք Հաստառ-
ւած մեւերի դէմ, կիկլո թարթեց աչքերը, պատառից իրեն էր նայում Զեյ-
լան, իմ անհաս քոյր, իմ անեղբոս, ես ու դու կապոյտի մէջ, մի ահնթարթ
տիեզերքում, այնուհետեւ թող լինի քարացած լուսթիւն: Գիշերը բաւական
առաջացել էր, երբ Զեյլան ասաց.

— Աղամ, սիրելիս, քեզ պիտի սպասեմ ննջարանում:

Նուրեանը նայում էր հետեւեց կնոջ, որը լողարան մտաւ, դուռը
փակեց, ներսից լուսեց ջրցուղի մեղմ անձրեւը, նա տեսաւ ջրի շառաչը Զեյ-
լանի կրծքերի վրայ, առուակների հոգը նրա վարդագոյն մարմնից վտր,
ապա՝ կաթիլների գնդիկները նրա դէմքին ու պարանոցին, աչքերը փակ,

ընչակտուր: Զրցուղը դադարեց, կաթնագոյն վարդոյլը յետ քաշուեց, դուրս եկաւ լողարանից, փաթաթուեց սրբիչի մէջ, յետոյ լսուեց օծանելիքներէ հայելադատ դարանի դրան բացուելն ու զանազան սրուակներէ մանր ապակեայ ձայնը: Կանայք ինչե՛ր են անում պատրաստուելու համար: Զելդան վարպետ էր, ծիսակաարութիւնը հասցրել էր արուեստի առօրինակ: Նոյնն էր նաեւ Մելինէի գէպում, այն տարբերութեամբ սակայն, որ նա յաւիտենութեան չափ երկար էր մնում լողարանում եւ երբեմն պարասուրուած էր լինում արթնագնելու իրեն: «Վաղը, Մելինէ, յոգնած եմ»: Ու հեւ սրզհետէ գոյանում էր սառուցքը:

Կոնեակի չորրորդ գաւաթը բմակուց յետոյ այլեւս պատրաստ էր Նիւ Եոթ Թայմզի վազուայ խմբագրականը: Ժողովրդավարութեան համար առաջին հերթին անհրաժեշտ է մշակութային մակարդակ եւ հառաքակայնութեան բազմազան գիտակցութիւն, այլապէս, այն սեփականութիւնը կը դառնայ ընտրեալ դասակարգի, որը, իր հերթին, կը ստեղծի իր մշտն իշխան շրջանակը՝ ծառայելով հեռաց այդ մոյմ էլիքին, որը աչ այլ իմէ է, եթէ ոչ հուժկու ցանցը առեւտրա-արդիւնաբերական գերընկերութիւններէ: Եւ քրոջիտեւ հաւաքականութիւնը առհասարակ պատրաստ չէ մեծ առաջնորդութիւն ստեղծելու համար անհրաժեշտ գոհալութեան, իմֆնակարգապահութեան աւ երկարատեւ պայքարին, ապա առիթից օգտուելով իրապարակ եմ ելնում միջակութիւններ եւ անիրագործելի խառնամեղրով օրօրում ժողովրդին, երբ փաստօրէն գաղղ հաւասարութիւնից եւ ապառաջական լայն միջոցներից առանկ՝ զանգուածը պէտք ունի գիտակից իմֆնակարգավարման: Արդիւնէն եղել է այն, որ ժողովրդավարութիւնը այնպէս՝ ինչպէս կիրառւում է ժամանակակից բազմաթիւ հանրապետութիւններում, ստեղծել է գաղափարների ոմանկութիւն, արդիւնաբերական ապրամեքների արակի անկում եւ ընկերային փոխարաբերութիւնների լնացում: Նման պայմաններում անհատը իրեն մեկուսացած է գտնում ընդհանուր հասմեքից, իսկ ծայրագոյն դէպքում՝ խորքացած հասարակութիւնից: Որոշել էի վերջ տալ մտային մայ մարզանքներին, կենտրոնանալ գրքիս վրայ, մտածել վաղուայ անելիքիս մասին, ու սակայն, համամանութիւնը հաւասարութիւն կարծելով՝ արդի մարդը հակում է մտածելու, որ հասել է ժողովրդավարութեան, երբ իրականում կորցրել է անհատականութիւն կերտելու այն տունայնիքը, որանց իրագործման համար հենց փարել էր ժողովրդավարութեան: Նուրեանը մշտնօրէն պատուեց թուղթը եւ զամբիւղ նետեց: Առանց ինձ էլ առաջ կ'ընթանայ նորին կայսերական մոմուլը:

Հոլանի թեւերը բարձի վրայ ծոծրակին կանթած՝ Զելդան սպասում էր կիսայոյսի մէջ, մեկուսի ապաստանարան ահադին քաղաքի բեռնէ երախում: Նուրեանը զգայուն լինելով հանդերձ, սանտիմենտալ բաներ չէր սիրում: Նրան համակեց այն նոյն չփոթը, որը ընկերացել էր Նրան Պարսկաստանից Եւրոպա ու Ամերիկա կանանց հանդիպելիս, իսկ կանայք գրաւիչ էին դանում նրա ածօթխածութիւնը, յատկապէս անկողնում, ըստ երեւոյթին պատեհ առիթ դռնելով իշխելու, փռելու իրենց մարմինն ու հողին: Հայը չարուակ ներկայ էր, անցեալը հալածում էր նրան, անցեալից փախուստ չկայ, Զելդան իր հերքը թափեց նրա գլխին, առաւ դէմքը, համբուրեց երկար, շնչահեղձ, կարօտով ու ցաւով, օրհասի պէս տաք, ապա աչքերը, ճակատը, մազերը, ծոսը, վիզն ու կուրծքը: «Անդամ, հանիր գիշերանոցս», Նուրեանի թեւերի մէջ զաւարում էր Զելդան, աշնան տերեւաթափ ու վերթաբեր դեղձ, հերկից հերկ, ահօրից ահօս, զԱղամ, հպիր ինձ», փորձից գի-

տէր, որ նրա ծնկերի փոսիկները ամենազոյսիկ կէտերն էին, այդտեղից սկըսում էր սրունքների վաղըռւղին, վերելքը դէպի ազդրերն ու բռնաբերը, ապա սլաքապտոյտ զառիվարը մինչեւ ողորկ տափաստանները, Վեղամ, սիրում եմ ջո ջրտինքի բուրմունքը, Նուրեանը կարծում էր թէ գիտէր, սակայն ամէն անգամ նոր անակնկալների առջեւ էր դնում իրեն, Վեղամ, համբուրիք կրծքերս, ու մտածել, որ ժամանակին մի ամբողջ տարի սպասում էր մի հալանցիկ համբուրի համար, այն էլ Սոնայի ախտին, եկեղեցու պատի տակ, ուշ երեկոյան, դադարազուրկ, նիհա՛ր, նիհա՛ր մի սղայ, կորա՛ծ, կորա՛ծ աշխարհում, աջ ձեռքը Զելլայի ազդրի վրայ որպէս ապակէն ու ասուպաստ, մինչեւ ծովածոց ու զմայլելի ավերը ցանկութեան ու հաճոյքի, ես հիմա ջո աշխարհում պիտի թողնեմ իմ ստաճած անձկութիւնները, ջո կապոյտ-կանաչ խոշոր աչքերում, որ հիմա դերեզմանն է իմ թափառական իդձերի, կապոյտ-կանաչ-մոխրադոյն աչքերը ջո, որ հիմա արեւամուտն է իմ ճերմակ առաքատներին, Զելլայի կոնքը դարձել էր աղեղ, նա լարեց իր ուժերը եւ ամբողջ էութեամբ բնկղմունց յատակում, փետուրի պէս թեթեւ, անհարցէ, անխտաղարձ: Նուրեանը յիշեց վերջին գիշերը Մելինէի հետ, արդէն բաժանուել էին, առաւօտեան բեռնատար մեքենան եկել, կապիւլ, կապիւլ-կրպել, տարել էր կառոյթը, մնացել էին տան հին բնակիչները՝ մտերիմ ու թշնամի, Մելինէն յաճախ կանդ էր առնում, բացակայ հայտնաբերել անորոշ կէտեր փնտրում, ծաղկամանները ջրում, յետոյ թեւերը դարում կրծքին ու բացակայում: Վեղա այսպէս չպիտի լինէր, բայց եղաւ: Նրա ձայնում հրաւէր կար, նա գիտէր ելեւէջների զաղտնի կանչը: Այդպէս էր նա: Անկարելի էր ասել Մելինէին, յատկապէս երբ նա քիթն ու պոռոնիկը շահ ունէլ դարձըրած՝ կենտրոնանում էր ինչ-որ շնչին բանի վրայ՝ դէմքը պղինձ ու բրոնզ: Նուրեանը ամբողջ օրը կտրտեց նրան, նրա առոյգ օրունքների յաղթանակը: Կէսօրից յետոյ, երբ կինը մի պահ կուացաւ յատակից վերցնելու իր նախա՝ սիրած երգապանների գէղը, նրան թուաց, թէ առտընն անգամն է տեսնում նրա յուռթի կրծքերի ծփանքը, այնքան հայկական ու ընտանի, այնուհետեւ պատահական ամէն մի հպում արթնացում պատճառեց նրան, թարմացաւ շունչը, մկաններում զգաց նոր ծիւրի ծաղկումը: Խօսք չդառնալով՝ յիմարաբար առաց:

— Այնպէս ձեւանանք, թէ անծանօթներ ենք, որ առաջին անգամ ենք հանդիպում:

Մելինէն յանկարծ արձանացաւ, ստանձնեց իր կորած արտայայտութիւններից մէկը, մարմինը լիքն ու ամուր, միտը աղի ու արեւոտ, անթափանցելի անտառի գուստրը, դէմքի ոտուերի կապոյտ թաւիշը, մի քայլ նա՛հանջեց, կռթնեց սեւ բազրիքին, գրեթէ յուսահատ:

— Շա՛տ ուշացար, Աղամ, այդեւ քանդուել են կամուրջները:

— Գուցէ կանգուն մնացած լինի մի կամուրջ:

— Բոլորն էլ աւերուել են:

— Այդ դէպքում կամուրջի տակ կը նստենք:

— Աղամ, դու գիտե՛ս, որ ես ուրիշին եմ սիրում:

— Բայց զուրկ եմ սիրելի ես, Մելինէ, թէպէտեւ մի օր:

— Դու ինձ պէտք չունես, Աղամ, դու անկախ ես, ինքնաբա՛ւ:

— Բայց Մուրհչիլը աւելի հզօր է, կարկուտն, ամբողջ համալսարանի տէրն ու տիրակալը:

— Մուրհչիլը ինձ սիրում է, իմ ներկայութեան կարիքն է զգում:

— Ի՞նչ է, դնամ քուքս կոտրեմ, որ ինձ սիրես:

— Աղա՛մ, — աղաղակեց Մելինէն։

Ձախաւեր խօսքի վարդիտ, ապուշ նուրեան։ Ես ե՞րբ պիտի խելօքանամ, մարդ դառնամ, չափ ու կշիռ որդեգրեմ, դիտենամ պատշաճի ու անպատշաճի սահմանը։ Փաթրիկ Մուրհէղը կորէական պատերազմից վերադարձել էր կիսահաշմանդամ, ձախ սրունքի մէջ վիրաբույժները մետաղ էին զետեղել, իսկ աջ թեւը դաստակից վար արհեստական էր, դրեթէ աննկատելի, մեծ խնամքով կարուած սուղ հաղուստների մէջ։ Եէյլը իր շրջանաւարտներին խնամում է, յատկապէս երբ ենթական սերում է Գրեթթի ամերիկեան պտարիւն շատաւիղներից եւ դոքտորայի տիտղոս ունի անտեսադիտութեան ասպարէզում։ Մուրհէղը տնօրէն էր համալսարանի տնտեսութեան բաժանմունքի, մի ամբողջ կայսրութիւն, որի օղակներից մէկն էր Մելինէն, նրա օգնականը, աւելի չուտ աջ թեւը, ի հարկէ փոխարեական իմաստով։ Մելինէնի սաստի մէջ նոյնիսկ նուրեանը հրաւերի պատուհան տեսաւ։ Ներս նայեց։ Կինն էր միջօրէի իր հասունութեան մէջ, քառասուն տարեկան՝ դիտակ իր բնազդների, հասած լինելով այն կէտին, ուր ցուցափեղկում ամէն ինչ կանխիկ է։

— Ներքի, Մելինէ, — ասաց նուրեանը, — նպատակս կոպտութիւն չէլ, բայց այդպէս ստացուեց։

— Գիտեմ, որ չար չես, — պատասխանեց Մելինէն։

— Դու միշտ էլ սիրելի ես, — ասաց նուրեանը։

— Ես պիտեմ, որ մի օր յայտնի մարդ պիտի դառնաս։

Ձգիտէ։ Մելինէն ոչինչ պիտէ իմ մասին։ Նա տակաւին ծխածանի յետեւից է ընկած՝ կարծելով, թէ հասարակական ամէն մի սանգուխ ոչնչի դրախտ է բարձրանում, երբ իրականութեան մէջ, իր, դրական չափնէ, հրապարակազրական փորձերը չորացած մացառներ են աւազի եղրին նստած, ծանձրոյթը, որ ներսի ափերը կրծելով դուրս է ծորում իր մարմնի վրայ, կախուելով իր շրջապատից։

— Գիտե՛ս, Մելինէ, որ մենք չճանաչեցինք իրար։

— Ես վախենում էի այդ հարցումից։

— Ինչո՞ւ։

— Մենք տարբեր աշխարհների ծնունդ ենք։ Դու ինձ չարունակ երկնտրանք ես պատճառում։ Ձգիտեմ ո՞րն է հայը, ո՞րը՝ ամերիկացին։

— Ի՞նչ ամերիկեութիւն։

— Քո հայութիւնը խեղդում է ինձ։

— Սակայն դու էլ հայ ես, Մելինէ։

— Ես չեմ զգում այն, ինչ դու ես զգում, ես աղատութիւն եմ ուսում քո կապանքներից։

— Թերեւս մի օր ճանաչենք իրար, — ասաց նուրեանը այնպիսի ցաւով, որ հոգեվարք էր, — թերեւս մի օր այնքան հեռանանք միմեանցից, որ նորից հանդիպենք։

— Այդ հաւանականութիւնը միշտ կայ, Աղա՛մ, ես չեմ ատում քեզ, փաստօրէն ո՞վ կարող է ասել...

Վիշտը շառագունել էր Մելինէի դէմքը, հազիւ էր շնչում, պնչերը դունատուել, բերանը կիսարաց, չուրթերը խոնաւ, ծանօթ պատերի շուքեալը իջել էին նրա մարմնի վրայ, դաւակները հեռացել էին, Մուրհէղը փակուել էր իր դրասենեակի ծանր վարադուրների մէջ, մնացել էր դատարկ սենեակն ու Աղա՛մը, յուշերի հնամենի կապուցը, այնտեղ յատակին, ուր պարսկական զարդն էր փռուած եղել, զոյացել էր վառ-սրճապոյն մի քառակուսի։

Նուրբանը մօտեցաւ, զրկեց նրա մէջքն ու ուսերը, Մելինէն դուրսը դրեց նրա կրծքին, ծնկները հեղուկացան, լինը բարձրացաւ, ծածկեց նրան, Նուրբանը շոյեց նրա մազերը, ձեռքը իջաւ կնոջ ծոծրակին, Մելինէն օղակեց նրա թիկունքը, օրօրուէց, միասին օրօրուէցին համը ու անհանդուրձան, կանաչ փշուտ թաւաւները, ո՛վ գիտէ ո՞ւր են տանում թաւաւները, Նուրբանը թեքուէց համբուրեց նրա դուրսը, կնոջ մազերի իւրովի բուրմունքը, գիշերուայ կապոյտն ու կարմիր հեքը փախչող կեանքերի, վերջին համբոյրը նախքան կառափնարան: Մելինէն առաւ Նուրբանի ձեռքը, սեղմեց կրծքին, ապա արգանդին, ցուրի պէս, երազի պէս, մահաւան պէս, Նուրբանը յափտակեց նրա լեզուն դէմքը, շօշափեց թաց ալոսակները, գտաւ համբոյրը, որն այլեւս համբոյր չէր, այլ՝ տառապանքի հիշ, գնալիք այլ տեղ չէր մնացել, ամէն ինչ այնքան անհասանելի, Մելինէն քակեց շրջագոյնստի կապերը, Նուրբանը շարունակեց մերկացման ծէսը, մինչեւ որ այլեւս ոչ մի պատուար չմնաց իրենց միջեւ, միասին փռեցին ներքնակը յատակի վրայ ու յանձնուեցին իրար:

Աղամ, ներքի ինձ, — շնչաց Մելինէն գիշերի միջից:

Երբ հրաբուխը պատրաստ էր պայթելու, յանկարծ չգիտես որտեղից գլուխը ցցեց հինուորաց սառչակոյտը եւ հոտեց կնոջ աչքերին, մարմինը թէժ ու քրտնաթոր, ստկայն անմատոյց, մի տեղ, հեռաւոր անձաւում խախտել էր հաղորդութիւնը: Նուրբանը անմիջապէս զգաց սիրոյ փոխուստը, մարմինը անջատեց կնոջ մարմնից ու վերաւոր դայլի պէս իր որջը քաշուեց՝ կնոջ արիւր արիւր: Այդպէս երկար մնացին կողք կողքի, մերկ ու անմխիթար, մինչեւ որ Մելինէն խղեց լուրթիւնը.

— Վստահեցնում եմ, Աղամ, յանցանքը քոնը չէ:

— Ամէն ինչ ունի իր վախճանը: Մենք հասել ենք մեր վախճանին, սակայն փոյթ չէ, կարեւորն այն է, որ մի օր եղել է ոչ:

— Ուզում էի ամոքել քո ցաւը:

— Գիտեմ, Մելինէ:

— Ուզում էի, որ յիշես ինձ:

— Ես քեզ միշտ յիշում եմ:

— Այդուհանդերձ, անգութ է կեանքը: Տալիս ենք, ստանում, տակը ոչինչ է մնում:

— Ես վաղուց եմ գիտակցել, որ տալիք ու ստանալիք չունեմ:

— Գուցէ այդ է պատճառը, որ դու այդքան ուժեղ ես, Աղամ:

— Ուժեղ, — բացականչեց Նուրբանը եւ ծիծաղեց հեկեկալու պէս, դարձաւ ու մութի մէջ փնտռեց Մելինէին:

— Այո՛, Աղամ, դու երջանկութեան պէտք չունես, ինձ թւում է, որ դու պերճ ես դեզերումներից, անցնում ու գնում ես քո ճամբան:

— Այո՛, — ասաց Նուրբանը, — անցնում ու գնում եմ իմ ճամբան:

— Զգիտեմ ինչու ինձ հետ այդպէս է պատահում, կիսաճանապարհին մոլորւում եմ, վախճանում եմ ամբողջութիւնից: Ըստ երեւոյթի, ինձ պահասում է...

— Յիմարութիւն, — կարեկցեց Նուրբանը:

— Որքա՛ն եմ քեզ վիրաւորել:

— Մարդիկ միմեանց վիրաւորելով է, որ հասնում են իրար, այլապէս գերեզմանային կը լինէր խաղաղութիւնը:

— Այս այսպէս չպիտի լինէր, բայց եղաւ, — ասաց Մելինէն ու Աղամ մի ալը շոյեց իր երեսին, ճակատին, բերանին:

Վաղ առաւօտեան արթնացաւ Նուրեանը, գգուշութեամբ դուրս ելաւ անկողնուց, թեւերը վեր բարձրացրեց, ձգուեց դէպի առաստաղ։ Ամբողջ գիշերը լոյսերը վառ էին մնացել։ Զելդան տակաւին ննջում էր։ Նրա մագերը թափուել էին րարձին, իսկ մի խուրձ էլ ձախ տախի վրայ։ Նրա գէմքը խաղաղել, թարմացել, հիւթեղացել էր, շուրթերը առատ ու հաղորդակից։ Նա հաւաքեց իր հագուստները, մարեց լոյսերը, ուղղակի դնաց լողարան, դէմքը մօտեցրեց հայելուն։ Զարեկ այն՝ ինչ տեսաւ։ Աչքերը խորացել էին, սեւը սեւի վրայ, մոխիրը մագերից իջել, թափուել էր երեսին, ճակատը առողջ մարդու ճակատ չէր, անկողնի կնճիւղներ էին գոյացել երեսն ի վար մինչև կզակի ձորը, այնքան խորթ էր իր ներկայութիւնը կանացի գոյներով ու նրբութիւններով լի այդ լողարանում, որ մի պահ շփոթուեց, չիմացաւ ուր է գտնուում, յաջորդ պահին մտածեց մահուան մասին, երբ մեռնեմ ո՞ւր պիտի թաղեն ինձ, Նիւ Եփրեմ, Նիւ Եփրեմ, այսինքն՝ Մանհաթանում գերեզմանոց չկայ, հաւանաբար Լոնդ Այլընդ տանին եւ զիս նետեն երկու կառույկների արանքում ընկած բազմաթիւ գերեզմանների մի անկիւնում, բազմացեղ սակոյներէ միջեւ, ո՛չ, Նիւ Եփրեմ ձեզ պահէք, ինձ Թեհրան տարէ՛ք, բայց Թեհրանն էլ խորթ է, գուցէ, Թաւրիզ, բայց այնտեղ մարդ չմընաց, հաւանաբար Բոստոն, կամ մի գուցէ Լոս Անջելոս, Քալիֆորնիա կամ Սինթաթի, եթէ Սինթաթի, ապա կարող է լինել նաեւ Քոնեկտատիկ, Բաթոն Թուս ու Ման Ֆրանսիսկո, յիմա՛ր ազգութաց, Հայաստանը թողած աշխարհն ես ընկել ու հողաթումբ ես ինտուսում, քո պապենական երկիրը, արքանը արեամբ, հողը հողով, մարդ առ մարդ, զար առ զար, ճերկէր Դրախտաւայր», բայց մի՞թէ Հայաստանը գերեզմանոց է, որ ինձ տանեն, ես ի՞նչ եմ տուել Հայաստանին, որպէսզի Հայաստանը ուժիւն իմ դին, փաստօրէն աշխարհում տեղ չունենա՞նք չանգլիսի, լատիներէ թերեւս միջնաբերդային տարածութիւնն է, կախուած անջրպետից՝ որպէս ասուպ ու փոշիացած ասուպ, յաւիտենական ճամբորդ, մոլորակից մոլորակ, համառակցութիւնից համատեղութիւն, վիճակ տեղեկութիւն, իմ տունը, իմ միակ հասցէն, Աղամ Նուրեան, մշտնջենական բնակիչը մեր ճանաչած տեղեկութիւն, հեռախօսը բանա՞մ հեռազինը յիւստիս Վիկտոր Համբարձումեանին, տեսնեմ ի՞նչ կ'ապի, նա մեծ հեղինակութիւն է, կարող է ազդեցութիւն բանեցնել Աստղաբանագիտական Համաշխարհային Կոնգրէսի վրայ, բայց հաստատութիւնները դանդաղաշարժ բաներ են, մինչեւ նիստի հաւաքուեն եւ անցնեն իմ մահուան օրակարգին՝ այլեւս մէկ դար անցած կը լինի, իսկ մինչ այդ, ո՞վ գիտէ, գուցէ ես յանկարծմամբ լինեմ Լոնդոն-Մարդիկ ճանապարհին օդանաւի մէջ առանց տեսնելու Էմիլիանիսիան, տարօրինակ բան, այլոք ոսկի ու տիտղոս են հաւաքում, ես՝ սիրոյ մնացուկներ, այստեղ ու այնտեղ, լեցնելու բաժակը, որ միշտ կիսատ է, ամէն քաղաքում՝ մի թեկոր յուշ, եւ ամէն մի յուշ՝ մի նոր հալածանք, աքսորի մի նոր դատաստան, գուցէ աւելի բաւ է բնաւ չսիրել։

Նուրեանը բերանը լայն բացեց, լեզուն հանեց, լոյսի տակ քննեց, Ծամածոնց դէմքը եւ կրծքի վրայ զգաց Զելդայի անուշահոտութեան բոյրը՝ թանձրացած իր քրտինքի հոտի հետ։ Հայելու մէջ արտացոլուել էին մի քանի Նուրեաններ, իր նախնարածք միւսն էր, երկարաձիգ սեւահեր պատանին, նրան միշտ թուում էր, թէ ինքը միւսն է, անուրջը դէմքին՝ միանգամայն բացակայ աշխարհից, հենց այն միւս Նուրեանի ներկայութիւնն էր, որ մարդիկ ցնորաւորեցին տեղ էին դնում նրան, երբ նա խօսում էր արդարութեան կամ մարդու արժանապատուութեան մասին կամ երբ մայրի ծաղկավաճա-

սկից մի հաստ վարդ էր դնում եւ նուիրում հանդիպած առաջին կնոջ: Նա հանեց գիշերանոցը, կանկնեց ջրցուղի տակ՝ աչքով անձրեւի հարուածներէ ներքոյ, օճառեց տնու թները, անդամները, աչքերը փակեց ու դրեց Սաքըզէյ մի վիւրէ յառաջիկայ ամսուայ խմբադրականը, բառը սկսել է նահանջել, խօսքի նահանջի հետ ամբողջ փաղափարքութիւնն է բռնել նահանջի թափում, որովհետեւ բառի աղափարումն փնտրում է տպանում համայն մշակոյթին: Այս պարագան ակնբախօրէն արտացոլում է վերջին քառորդ դարի գրականութիւնը, որ յատկանշականը հասարակայնութեան մոլեգին քաղաքում է դէպի ամբողջ անդունդը, յաճախ անգիտակի իր քաղաքում: Մարդը երբ կարողանում է բառը, աղա, աւելի լայն առումով, կարգում է իր յինելու իրաւունքը: Արդիւնքը լինում է այն, որ մա շարունակ դեգերում է անսահման մի իրականութեան մէջ, որը որեւէ առնչութիւն չունի փիզիքական ու հոգեկան իրականութեան հետ: Խօսքը, անշուշտ, չի վերաբերում Անդրէ Բրեքսէի գերիբապաշտ աշխարհին, ուր գաղափարների ազատ հաղորդակցութեան միջոցով արտեւտագէտների ու իմաստասէրների մի ամբողջ փաղանգ ջանաց քափանցել են քաղաքականացանքի ծալքերը ու հասնել էութեան հիմնական ակունքին՝ անվարան ու անկեղծ: Նյումսը մօտ խորագիտութիւն չկար, շուկայի միտումներ չկային: Սակայն երբ այսօր դիտումնաւոր կերպով շահագործում է բառ-խորհրդանշը, իւր այն մետաւ հասարակութեան երեսին որպէս արդիական մարարութիւն, ահա այդտեղ է, որ տուժում է գրականութիւնը, հետեւաբար իւր մարդկութիւնը: Հիմքում չարի ու բարիի գիտակցութիւնն է՝ համամարդկային մշակոյթի դարաւոր արգասիքը: Երբ գրականութիւնը չունի այդ գիտակցութիւնը, այլեւս հերոսները դառնում են հիւանդագին տիպարներ՝ պատրաստ յօշոտելու միմեանց յանդէս մի պատու հասցի, մի շիջ գարեջրի, իսկ երբեմն էլ լուկ սպանելու համար: Այլ բան է կեանքը հարազատօրէն մերկայացնելը, միանգամայն այլ բան՝ կեանքը պատրաստանելով պատկերելը, այն տպաւորութիւնը քաղելով, որ աշխարհը կանգնած է համընդհանուր գաղափարում: Երբիւն: Աւելի լայն առումով, խօսքի նահանջի քուն պատմաւոր մարդ մեր տպառաջական հասարակարգն է, որը շահադիտական մպատակներով գանգուածային արտագրանքի է վերածել մշակոյթը. հոգեմտաւոր արժէքների փոխարէն՝ մարդուն ընճեռելով մեքենական անմիջական հանոյքներ...

Դո՛ւ պիտի փրկես բառը, Ադամ Նուրեան, երբ քո ամբողջ կեանքը հակառակութիւնների մի անվերջանալի շարան է, աշօրուայ գրածդ հակասում է երէկուայ գրածիդ, երբ աշօրուայ արարքդ բացառաւ ժխտումն է այն բուրբ հանգանակների, որ մէկ առ մէկ կտուցել էիր երիտասարդութեան գրանիթեայ օրերիդ, մի՞թէ մոռացել ես, թէ ինչպէս Նիւ Հէյվընի կենտրոնական հրապարակում պաշտպանում էիր կանանց համահասարակական իրաւունքների դատը, բայց երբ Միլիթեն որոշեց նոր կեանք ստեղծել, տնաւերութիւն բնութագրեցիր նրա քայլը, հայկական աւանդութեան խախտում եւ չգիտեմ էլ ինչ: Յետոյ, ի՞նչ բառի մասին է քո խօսքը, այն, որ առօրեայ դիւահար փազգի մէջ մաշոււմ է ընդարձակացած կրունկների՞ տակ, հազար անգամ թռչփառում է մարդկանց յոյնած բերանում: Հոյակապ: Սքանչելի: Ճանապարհի: Ո՛չ, Գիրակոս, նահանջ չէ, այլ համատարած սպանդ: Նա սափրուեց, սանրուեց, հագուստները հագաւ, փողկապը կապեց: Արդէն ամբողջ կեանքը ինքնին հակասութիւն է, բորձրաճայն տաաց Նուրեանը, հիւրասենեակ մը տաւ, զնաց կանոնեց զրադարանի առջեւ, հանեց «Լեռնայանք»ը, շօշափեց,

Հոտոտեց Հատորը, որը Բէյրութն էր իր թիթուած սոսինձով, եկեղ-ընկել էր Ախգայքի ու Մայրոյի արանքում: Բացեց գիրքը, առաջին էջը, առաջին տողը, Հայ գրերի առաջնաւոր շարքը, միայնակ, անառիկ, խորթ անգլո-առաջոն ծովի մէջ, կարծես մի ամբողջ դար էր անցել, կարգաց մի պարբերութիւն եւ անմիջապէս փակեց գիրքը, Հայերէն հնչիւնները փակչիցին նրա քիմքին, բառերը ջղջիկներէ պէս գլխիվայր կախուեցին նրա մտքի ոստայնիցին, նա սարգնեց, պազ, Հիւանդ քրտինքը նստեց նրա մարմնին, ո՛վ է գրել, ո՛վ է թաթախել իր հոգու մեղանը այդ տողերի վրայ, չճանաչեց բառերը, նա սոս-վորութիւն շուէր կարգալու իր գրածները, գրուած խօսքերը նետի պէս յետ չին զայիս, նրանք այլեւս անցեալին, մոռացութեան են պատկանում, այլ ժամանակներէ, այլ կրքերի, այլ յոյզերի: Իր կեանքի մի բեկորը: Ուայթը-ւած՝ նա գիրքը յետ դրեց, սարսափեց նրա էջերից, չլինի, թէ բառերը յան-կարծ ճշմարտութիւնն ասեն, ինքը, որն այլեւս վարժուել է գիտակցական միապաղպղին, մերուել ամերիկեան կեանքի արտաքին հիւնէջներին, կանգ-նում է Համալսարանների ամբիոններից, դասախօսութիւն կարգում ընկերու-յին դիւանկտիկայի մասին, երբ իրականում ինքը գոհն ու մասնակիցն է Հենց այդ նոյն կարգերի գոյատեւման: Այնպէս է ընտելացել վայրենին, որ Հիմա իր վրայից օղ սպալսի Հոտ է գալիս: Ու յանկարծ Նուրեանը կարօտեց: Նա կարօտեց բառը: Ոչ թէ Համալսարանային բառը, որը կուշ է եկել զանգուած-ների կոկորդում, այլ այն, որի հետ ծնւում է տեղեկաբար Թաւրիզի փոշոտ փողոցներում բոլոր արեւի տակ կեդրոտ Հայ լակոտների աղքատ, ախուր, մաքուր աշգրտում, իր մանկութեան ժայնը: Ո՛չ, ինքը չի գրել այդ գիրքը, իր եւ Վեռնալալի միջեւ ահագին խրամատ էր իջել: Այդ բոլորից մնացել էր լոկ կարօտը, անձեւ, դժգոյն, գրիթէ մահամբրձ: Այդ պահին նա հայա-ցաւ, կանգնեց սենեակի մէջտեղում եւ ասաց. «Բարե՛ւ, ով որ ես», լսելով իր սեփական ձայնը, այս անգամ հայերէն՝ միանգամայն օտարոտի ու հա-րադատ՝ ինչպէս ամբիոնի մէջ փայլող սիրելի հեռաւոր մի գէմը: Նա վազուց հայերէն չէր խօսել եւ Հիմա՝ «Բարե՛ւ, ով որ ես» մնացել էր անտէր, ճիշդ է, Հայ ծանօթներ ու հայրենակիցներ շատ ունէր Նիւ Եորքում, բայց ամէն ոք իր ուրոյն, նեղ ուղեծրի մէջ էր մտել, իսկ ինքը խուսափել էր վար իջ-նել Նիւ Հէյվըն Ռեյիսքըրի իր գրասենեակից: Հայերը իրեն ձանձրոյթ էին պատճառում: Նրանք իրենց վերաւոր սրտերով ու ազգային նուստատացման զգացմունքներից բխող շարունակ յոխորտանքներով, այդ ողորտ հայիացը-ներով արեւելիցները իրենց ամերիկեան Հագուստներով, լայնեղր անձաւակ փողկապներով, վաշխառու մտասեւեռում, կարգապահ, վեհերոտ քաղաքա-ցիները Ամերիկեան Հանրապետութեան, ինչօ՛ւ գիմացինի աշքերին չեն նա-յում:

Միշտ ազգպէս էր լինում: Միրային մերձեցումից յետոյ ծանր, անու-րոշ թախիծը գերեզմանային լուսութեամբ տարածւում էր նրա վրայ, ճնշում նրա քունքերը, յորդած ու սպառնաւ՝ ուղում էր մահանալ, վերադառնալ սերմին ու սաղմին՝ անյուշ ու անսկիզբ, քայլել մենաւոր արահետներում գտնելու կորածը, նախաերկրային քառքը, կենդանական աշխարհի նախա-տիպը, բեղմնաւորել ու էգի մէջ կազմաւորուող նոր կեանքի հանդոյն դլու-խը դնել քարի տակ: Կանայք չէին հասկանում: Կանայք տառապանք էին պատճառում: Նրանք ուղում էին պսակումը սիրոյ, իսկ ինքը գիտէր, որ ամէն սիրոյ պսակում յանգում էր վախճանի, այդ վախճանականի սկիզբը զանազանեցնելու համար նա կրտաւարտ էր թողնում արարողութիւնը, օտա-բանում, կարծրանում, իր հոգու մէջ հրահրելով բազինը: Եւ կանայք եր-

բեմն ատում էին նրան: Եւ որքան խուսափում էր կանանցից, այնքան նը-
րանք հետապնդում էին նրան՝ վերջնական հարուածը իջեցնելու: Նուրեանը
ննջարան չգնաց, Նոյնիսկ մոռացաւ Զելդային: Կիրակի է, թող հանգչի: Ու-
րոշել էր մի քանի շաբաթ փակուել յարկարամոմում ու աւարտել իր աշխա-
տասիրութիւնը: Խօսք էր տուել համալսարանին: Բացի այդ, կար նաեւ նիւ-
թականի խնդիրը: Հորիզոնում կար երեսուն հազար դոլարի վերջնամասը,
որով կարող էր մի ամբողջ տարի հոշակել իր անկախութիւնը: Փարիզ, Վա-
շինգտոն, հազար ու մի բան: Առաւօտը իր հետ բերել էր տնտեսափելի առօր-
եան: Թեւէ ժամացոյցին նայեց: 7.15: Հեռախօսին կից տետրակէց մի էջ
փրցրեց, ծոցից հանեց ինքնահոս գրիչը եւ իր խմբագրի անըթեռնելի ձեռա-
գրով գրեց՝

Զելդա,
Էս իջնում եմ քաղաք:
Կիսաւարտ աշխատանքներու քողնում եմ քեզ մօտ:
Շնորհակալութիւն ձուկի եւ այլ բաների համար:
Քեզ կը հեռախօսեմ:

ԱՂԱՄ

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՏ

(«Ազատի գիրք» անտիպ վէպէն)

Ժ. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԵՆՔ ԿԸ ՇԻՆԵՆՔ

Օ՛ր, չենք կրնար չկառուցել,
Գիրք չշարել, պատ չհիւսել,
Գրիչ եւ մուրճ չցործածել,
Զի մենք՝ հայր՛քս, ա՛րզ ցանասէր,
Արցիշտիշի ղարեն ի վեր
Կառուցելու՛ համար ենք մենք
Ստեղծուեք
Եւ մասխեսան
Հողամասին մէջ քարաուր
Դրուեք բանուո՛ւր,
Որ բերենք մեր տուրքէ ձրիքի
Եւ քրտինքի՛
Այս եղծուած մուրաակի
Դիպիտացման:

Ո՛չ, չենք կրնար չկառուցել...
Մեր հուժեղն,

Մեր արեա՛ն մէջ է այդ ոգին
 Կառուցումի,
 Մեր բջիջի՛ն,
 Մեր մկանի՛ն մէջ այդ ոգին
 Ատեղծագործ,
 Որ չի թողուր միտք ու մարմին
 Երբե՛ք հանգիստ, երբե՛ք անգործ
 Եւ կը ստիպէ, որ չարանանք
 Մենք շինելով,
 Յամառանանք
 Միշտ շինելով:
 Եւ այդ չարուկ ու հեստ ոգին
 Մեզ կը նեղէ, մեզ կը մղէ,
 Որ մենք շինենք,
 Նարէն շինենք, կոփենք, կերտենք,
 Բարձրացնենք ու բարձրանանք
 Սէգ անուան պէս Արարատի:
 Եւ դարերէն Արգիշտիշի
 Մինչեւ այսօր
 Կը կառուցենք ծագէ ի ծագ
 Նոյն տեսիլքով, նոյն քրտինքով
 Եւ նոյն կիրքով,
 Զի չե՛նք կրնար չկառուցել,
 Մենք՝ շինելու կանչուած ցեղ,
 Մենք՝ ժողովուրդ աշխատասէր:

Շինելը մեր ջուրն ու հացն է,
 Շունչ է մեզի
 — Ան՝վ կ'ապրինք:
 Երբ կը շինենք,
 Մեր դնդերներն ու մեր սրտերն են երջանիկ:
 Շնչելու պէս՝
 Մենք շինելու ուրախութիւն
 Կ'ապրինք վայրի,
 Մենք շինելու կատաղութիւն
 Ունինք բարի,
 Զի շինելու համար շինած
 Է մեզ Աստուած:

Գահէն ի վեր Արգիշտիշի,
 Քանի՛ զազան Հռոմի պէս,
 Քանի՛ վանտալ խուժ Հռնի պէս
 Յօշոտեր են աշխարհը մեր
 — Բայց մենք շինե՛ք,
 Յազկերտի պէս ո՛րքան հրճիգ
 Հրկիզեր է խաչերը մեր
 — Բայց մենք շինե՛ք,

Ճէնկիզի պէս ո՛րքան մըրիկ
 Կործաներ է փառքերը մեր
 — Բայց մենք շինե՛ր,
 Թիմուրի պէս քանի՛ կըսկ
 Մոխրացուցեր է Գիրը մեր
 — Բայց մենք շինե՛ր,
 Աքասի պէս քանի՛ խորշակ
 Մեր գարունները խանձեր է
 — Բայց մենք շինե՛ր,
 Եւ թուրքին պէս քանի՛ դժոխք
 Հրդեհներ է,
 Հեղեղներ է դրախտը մեր
 — Բայց կառուցե՛ր ենք վերստին,
 Կը կառուցենք մենք տակաւին:
 Մկան ուժով,
 Պոզաւտ մուրնով
 Ու աւելի՛ վառ աշխուժով
 Միշտ կը դարբենենք
 Սալին վրայ Աշխատանքի,
 Զի չե՛նք կրնար չկառուցել,
 Մենք՝ հայերըս աշխատասէր:

Քանի՛ շինե՛ր՝ տակացեր ենք
 Տէր-Ձօրի պէս մըրիկներուն,
 Քանի՛ շինե՛ր՝ դիմացեր ենք
 Եփրատի պէս ալիքներուն,
 Ո՛րքան շինե՛նք՝ կը հաղուարինք
 Ճերմակ քարդի կրակներէն,
 Ո՛րքան շինե՛նք՝ կը վերապրինք
 Սփիւտաւեր խորշակներէն,
 Քանի՛ շինե՛նք՝ ա՛յնքան կանգուն,
 Ա՛յնքան անխախտ
 Մենք կը մնանք Մասիսի պէս,
 Քանի՛ շինե՛նք՝ կ'արմատանանք
 Զերդ Արարատ
 — Ու կը տեսնե՛նք:

Եւ կը շինենք
 Մեր ամէն մէկ մկանին մէջ
 Ու ջիզին մէջ՝
 Գոյատեւման կամքը անբեկ,
 Վերապրումի կրակն անշեշ,
 Անմահութեան տենչանքն անմեռ:
 Անդուլ, անխռնջ կը կառուցենք
 Հազար ու մէկ
 Կոթող եւ սիւն Մշակոյթի՝
 Եկեղեցի,

Դպրոց, Մամուլ, Մարգարտեղի,
 Որ չյոգնիմք
 Զմեռներու սա պայքարէն
 Սպառնացին,
 Ափերուն վրայ սփռափայլին:

Բայց շինելով ե՛ւ ամէն օր,
 Առա՛նց գէ՛նքի,
 Մի՛այն գրչով: մի՛այն մուրնով,
 Բարի՛-բարի՛
 Մենք կը լուծենք
 Մեր սուրբ վրէժը դարաւոր՝
 Մեր անցեալի ու գալիքի
 Բոլոր, բոլոր ոսոյսներէն
 Կործանարար,
 Որ փորձեցին չար ու յամառ
 Ընդմիշտ սրբել մոլորակէն
 Հա՛յըս գիտուն, հա՛յըս խաղաղ
 Եւ տնաշէն,
 Ընել փռչի՛
 Մեր Արարատն անփանդելի
 Եւ փռչի՛ պէս տալ հովտն՝
 Անխնայ հայուն...

Բայց կը շինենք:
 Եւ շինելով՝
 Մենք չմեռնինք պիտի երբեք,
 Երբեք, երբեք:

ՈՒԼՈՒՆՔ 7

ԱՇԽԱՐՀ ԻՄԱՆԱՅ

Աշխարհ իմանա՛յ,
 Թէ մենք հարուստ ենք ու նաեւ հպա՛րտ
 Մեր այն արութեամբ, այն արարչութեամբ,
 Գումարն է որունց
 Պատմութիւն Հայոց,
 Պատմութիւնը մեր հերոս-մարտիրոս:

Աշխարհ իմանա՛յ,
Թէ
Կար ժամանակ,
Երբ նոյն աշխարհի մէկ մեծն եմք եղեր
Հայքէ միմչեւ Հայք
— Վկայ՝ Մահիսներ,

Թէ
Հին Նոյին չափ մեմք եղեր եմք հի՛ն,
Թէ
Առաքին հեղ Նո՛յն է գտեր մեզ
Եւ աստանդական իր միստիք մաւին
Կայան է ընտրեր
Արարատը մեր:

Աշխարհ իմանա՛յ,
Թէ
Բէլաքանդ նետ եմք եղեր Հայկի,
Առիւծներ ծներ եմք մեմք Սասունցի,
Որ կուլ են տուեր օձեր՝ որպէս բոց,
Մեր ժայռերն ըրեր
Եմք փոքորիկի ու շանքի դարբնոց՝
Ոսոխի գլխուն,
Պարի՛սպ՝ կուրծքը մեր
Թիմուրներու պէս դժոխքին դէմ գեռուն,
Թէ
Հայ Պատմութեան լեռներուն վրայ
Յաղթական նախրող
Բեզաս ունեցեր եմք Անդրանիկի
Եւ Մուրատի պէս:

Աշխարհ իմանա՛յ,
Թէ մահու-կենաց դարերէ յետոյ,
Օր մը Աստուծոյ,
Սարտաքապատի կռուփով պողպատ
Եւ օրհասական
Մենք թուրք Գողիաթն եմք փռեր դիտապաստ
Ու նոր Մայիսի սփռեր եմք արեւ,
Վառեր եմք զարուն՝
Ապրիլի վերել,
Ազատագրութեան լարեր ծխածան՝
Դարաւոր սուգին, արցունքին վրան,
Գերութեան վրայ
Մայր Հայաստանի:

Մեր քաջ հաւատքին, աննահանջ կամքին,
Մեր խաչոտ կեանքին
Անտեղեակ աշխարհը թո՛ղ իմանայ,
Թէ Աստուածորդին,
Լոյսի սերմ ձեռքին,

Հայ հոգն է իջեր
 Եւ իր լոյս ցանկէն
 Էջմիածինն է ծաղկեր ոսկեղէն,
 Թէ
 Առաջին հեղ մենք հնգ ազգովին
 Խաչով կնքուեր ու խաչակնքեր
 Եւ երկրպագեր Աշխարհի Լոյսին,
 Մե՛ր հերքին՝
 Յիսուս սփռելու չորս դին,
 Մեր լոյսը՝ մութին,
 Թէ
 Վարդանանքու կեանքեր են խաչուեր
 Շաւարշանն ի վեր,
 Որ վերին կեանքի Լոյսն այդ օրհնաւէտ՝
 Հայ հոգիին մէջ չմարի յաւէտ
 Եւ հայը ապրի յայսովն Յաներժին:
 Աշխարհ իմանա՛յ,
 Թէ
 Մենք Աստուծով՝ ենք ստացեր Գիր՝
 Ազօք՝ Բաւրբի
 Եւ առաջին հեղ, գիրով երկնածիր
 Ու ոսկեղէնիկ
 Աստուծոյ լեզուն
 Թարգմանք ենք մենք Աստուածաշունչի,
 Որ Հայը ապրի...
 Աշխարհ իմանա՛յ,
 Թէ
 Հանճարն հայուն
 Երկինքի հանճէն վար է իջուցեր
 Ազք-ամար տաճար մը աստեղավառ
 Ու մարգարտաշար
 Եւ թէ
 Մենք ունինք
 Մէկ-հատիկ
 Նարեկ՝
 Փոքորիկ լացող ազօքի համե՛րգ
 Եւ թէ,
 Օր մը կար,
 Երբ ողջ Հայաստանն եղեր է հագար
 Վանքի վարդանոց,
 Ուր ճեռագիրներ
 Են վա՛րդ-վա՛րդ վառեր, աստղ առ աստղ ծաղկեր՝
 Մէն մի տրոփի հետ յիսուսահետ,
 Մոմի պէս մաշող աչքերու ներքեւ...
 Աշխարհ թո՛ղ լսէ,
 Թէ
 Մարդ անունով ցեղ մը բորենի
 Եղծեր ու պղծեր է գեղն աշխարհի,
 Սո՛ւրբ տեղն հայերուն՝

Տէր-Ջօրի նման մեղքով մը անուր
 Եւ գեհեմաբոյր,
 Երբ, օր մը գարուն,
 Բայց օր դիւային,
 Այդ մեղքով յօշեց միւսն ու հոգն հայուն,
 Եւ Գողգոթայի՛ն
 Խաչեց հայ հոգին:

Աշխարհ թո՛ղ լսէ,
 Թէ
 Մենք այդ օրէն, այդ մահէն ասդին,
 Հօտ ենք ցանուցիր,
 Մենք՝ պանդո՛խտ կռունկ, կա՛նչ անպատասխան,
 Հովիտ հով կ'երթանք
 Որպէս արձագանգ:

Ա՛հ, ինչպէ՞ս պատմենք ու պռռանք արդեօք
 Մասիսի չափ ծանր մեր հոգն հայկական,
 Յաւը լիաթոք
 Ու մշտաբորբոք,
 Մեր խաչելութեան վէպը կաս-կարմիր,
 Վէրքը մեր պղպեղ,
 Պահանջը մերեղ
 Եւ Գատը մեր հայ հողերուն անհայ,
 Բայց ուր կը շնչէ հոգին հայութեան:
 Ա՛հ, ինչպէ՞ս պատմենք...
 Աշխարհ իմանա՛յ,
 Թէ
 Ունի՛նք թէ՛ն հայրենիք մը նոր,
 Մարգարիտի պէս
 Երեսան մը վէս,
 Բայց
 Մեր կարօտին,
 Մեր յոգնած մորթին
 Ովասիս չունինք,
 Բայց Մասիս չունինք
 — Հայրենիք ենք կէս:

Աշխարհ իմանա՛յ,
 Թէ
 Մեր կորուսած, մեզմէ կորցուած
 Հոգերը կ'ուզենք՝ մեր զա՛նձն հնամեայ,
 Ժառա՛նգն հայրենի,

Յայտնի ենք երկրի երեսին վրայ
 Հայկի մեր մարթով,
 Մեր մականունին հզակամ պոչով
 Եւ Հայաստանեայց խաչ ու գմբէթով
 — Ու դեռ՝ չե՞ն տեսներ:

Օ՛ր, թէեւ մենք մեզ շա՛տ ենք հանչցուցեր,
 Հանչցուցեր ենք լա՛ւ՝
 Ձեռքի ձիւքերով, միտքի բոցերով
 Մեր հոգեգրաւ,
 Բայց
 Պայծառ պատկեր մը չենք անոնց քով,
 Որպէս ըլլայինք նախապատմական
 Անցեալի խաւար
 Կամ անյիշատակ մէկ շիջա՛ծ անտառ:

Է՛հ, քո՛ղ չհանչեմ... Ափսոսն իրենց է,
 Իրե՛նց՝ վնասն այս դժբախտ կուրուքեան...
 Հանչեմ—չհանչեմ,
 Ոսկին չի դադրիր ոսկի ըլլալէ.
 Ու ոսկի ենք մենք,
 Դեռ չենք տժգուներ, դեռ չենք ժանգոտեր՝
 Եւ կը մանանչենք
 Դարէ դար
 Ձեռքի գոհարներով վառ,
 Աստղերով միտքի:

Այո՛, հայ ենք մենք:

Բայց ինչպէ՞ս հանչեմ Հայութիւնը մեր,
 Երբ մենք՝ խելօ՛ք մարդ, ա՛յր խաղաղասէր,
 Երբ մենք՝ բրիչի, մուրնի, գրչի մարդ,
 Բուսած քարտէսէն եւ սուրբ քարերէն
 Մեր պապեմագարդ,
 Դուրս չենք ելեր մեր հողէն մասիստ,
 Հողէն խաչահոտ,
 Ուր մենք՝ դարերով
 Ու հազար սէրով սուգուած արմատ ենք...
 Ափ մը քուրը մեր, մեր շերտ մը ածուն
 Սեպեր ենք անհռ՛ւն,

Մեր փշով մենք մեզ դարձուցեր հարո՛ւստ,
 Եղեր ենք մի՛շտ կուշտ:
 Քնարէն ախորժեք, խորշեր ենք փողէն,
 Մի՛շտ գիրն ենք սիրեր եւ զենքը ատեր,
 Մի՛շտ լռյսին յարեր՝ խաւարէն գատուեր,
 Սուրբ Աշխատանքի գինիով արբեր,
 Արաքսանման
 Մեր ազատութեամբ ենք մենք խոխոզեր,
 Մասիսանման
 Մեր անկախութեամբ ենք մենք բողբոջեր...
 Այո՛, հայ ենք մենք
 Թէեւ մեր անունն հնչէ դեռ օտա՛ր՝
 Օտար մայքերուն,
 Բայց շուտով՝ շա՛տ լուս պիտի ճանչնան մեզ
 Ու մեր ՛հատն արդար,
 Երբ քարտէսէն մեր հին համեստութեան,
 Հինցած հեղութեան,
 Որպէս զսպուած հեղեղ հետտութեան
 Այ դուրս ենք ցատկեր, այսօր դուրս յորդեր,
 Մենք՝ Սասմա՛յ Ծուեր:

Երբ մեր տեսն իբրեւ բողոքի մրրիկ
 Եւ ցոյց Ապրիլեան,
 Կը ցնցէ այսօր Մ.Ա.Կ.ի խուլ բեմեր,
 Երբ մեր ձայնն իբրեւ *Քայլահեշտ* պարերգ
 Ու երգի հովիկ
 Կը յուզէ այսօր աշխարհի բեմեր,
 Օ՛ր, շատեր արդէն ճանչնալ կը սկսին
 Հայու մեծ հոգին,
 Արդէն կը տեսնեն տատղի պէս փայլուն
 Պատկերը Հայուն
 Եւ կ'ողջունեն մեզ՝ Ժառա՛նգս Մասիսի,
 Իբրեւ յաղթական ու հպարտ Հայեր...
 — Ճի՛շդ է, հայ ենք մենք:

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԱՆ

Յ. ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Երկար է շարքը Սահակ Պարգեւեանի նման պատգամներուն։ Արժէ՞քը։ Անշուշտ Զարագուստրայէն ետքը, մեր մեծատաղանդ արձակագրին նշմարանքները, հոս ու հոն ցանած դաղափարի պանակները փառս մըն են մեր խեղճութեան ու հասկնալի կ'ընեն մեր դրականութեան անկարմանելի բորոտութիւնը (քանի որ այդ վիճակը պաշտպանող ու պաշտող միայն ունեցանք եւ ունինք մինչեւ այսօր, ուրանտով նորին պահանջը)։ Բայց պէտք չէ մոռնալ, որ այդ դաղափարագրութիւնը մեծ չափով սնած է անոր կենսոյին պայմաններէն։ Ձի բաւեր, ուրիշ շարլաթաններու ըրածին նման, մեր մէջ դարձեալ, օտարին նպաստովը ապրիլ մայրաքաղաքներու փարթամ կենսոյը, եւ աղքատութեան, քանդուած քարոց կարդալ, ուղտերու կռնակէն ու պուրժուաները շողմեւ, «ամսական» ապահովելու հասկնալի փերեզակութեամբ։ Դարձուցէք աչքերնիդ մեր ջոջ գրողներուն վրայ ու պիտի տեսնէք անջրպետը, օրով կը զատուի Պարգեւեանի ժխտումը դեռ ապրող, ուտող-ուրացող մեծ ճշկնրգալիմերուն հետոր կեղծիքէն։ Սահակ Պարգեւեանի խորանն ու խորագանք խոր տառապանքէ կու գան ու «կենսաբանական» երեւոյթներ են։ Զրկուածի, կեղծիքի հսկայ գոտիներէ թեւ բացող անարգարութեան համապատկերը, որով պատմութեան պիտի անցնի մեզ կանխող դարուն վերջամասը, զայն ըրաւ մաղձոտ։ Որքան ալ քիչ խոր, յեղափոխական ընդվզումը անոր մտքին խանձարութեքը կաղմեց ու գերակայութեան առաջին հարուածները, նոյն այդ Արեւմուտքէն իջած մեր գլխուն, մեր դատին գլխուն, անոր մէջ քայքայեցին ներդաշնակ հասարակչութիւնը ընդդէմ պարմանութեան մտքին ու անոր դործունէութեան դաշտը եղող աշխարհիկ, իրական կենսոյին, որ ի վերջոյ իր ժողովուրդինն է նորէն։ Կա՞յ ուրիշ մեզի չափ դժբախտ երիտասարդութիւն մը, որուն հայեացքը բացուած ըլլայ այնքան լայն հորիզոններու եւ ոտքերը դուրսը՝ կոյանոցի մը փոսին։ Մտաւորականը, ուրիշ ժողովուրդի մէջ, ծաղիկն է անոր խուլ ու ժերուն ու կապ մը՝ երկրներն ու երկրին մէջտեղ։ Ձանդուածը, որ հողն է միշտ, անոր թեւերովը կը հաղորդուի երկրներն։ Ու ասիկա այսպէս, դարերու վրայով։ Ամէն անգամ, որ երիտասարդ միտքը կտրուած է, որեւէ պատճառով զանդուածին հետ իր շփումէն, բան մը խանգարուած է այդ ազգին կաղմախօսութեան մէջ։ Ո՛վ որ կ'ուզէ ժողովուրդ մը կործանել, թող դպի հաւասարակշռութեան այդ զբաւանակին։ Մարդոց տեսակարար կշիռը (ֆիզիք՝ ինչպէս իմացական

մարզէ) կը ճշգրտի տառջին երկուսարդութեան մէջ: Տարիներուն յետոյ բերածը ջնարակ է, նեցուկ է: Փորձառութիւնը հոմանիշ է վարանքին, որ, իր կարգին, հոմանիշ է ուժերու ծանծաղումին կամ կրացումին: Կեանքը կրողը անոր վերին գործարանները չեն, իտրհրդարան կամ լորտերու ժողով, այլ՝ զործօն մասը անոր ընդհանրուն, երկուսարդութիւնը միշտ: Սահակ Պարզեւեան երկուսարդ եղած է երբեք: Եթէ տարազը փորձենք անոր խառնուածքին, պիտի ստիպուինք տարտամ բառերով դիմաւորել հարցումը ու ըսել կցկտուր բաներ, կանչել ի նպաստ սանկ ու նանկ գրուողներ, ընկերային պայմաններ, ճարահատ պարապային՝ հիւանդութիւն կամ ժառանգական ֆաշեր: Բայց անոր միտքը: Ուրիշ բան չեղաւ այդ կեդրոնը անոր մէջ: Ու ինչ որ անոր գրականութեան ուժը կազմեց, այդ երկուսարդական խոնդը, պոռթկումը, թարմութիւնը եղաւ: Վերպա՛նքը: — Սահակ Պարզեւեան զարնուած իր յոյսերուն աւերակէն, հիմնական նոթը անոր բոլոր երեմիականներուն, զարնուած իր իսկ ժողովուրդին փերեզակ վատաբեմէն (այսպէս որակեց անիկա իրեն հանդէպ մշտագոյ անտարբերութիւնը միաբերն մարդերէն, այսինքն՝ այն շրջանակէն, որ պաշտօն ունի ազգային մշակութիւն հոկոյութիւնն ու բարկաւանդումը ապահովելու եւ որ փզլտացի պահակութիւն անուանուած է տնկէ), ջստին իսկ ծեր էր արդէն: Անիկա, կաթին հետ ձանձրոյթ էր ծծած: Ու փորձեց իր ձանձրոյթը ամօքել բղխիւորէն — կերպ մը, աս ալ, անշուշտ, ուրիշ շատերու նման: Ամէն մարդ իր օտելութիւններն ու համակրութիւնները կը պարտի իր խառնուածքին: Ընտրեց կի՛նը. վասնզի բնագործ քնարերգուն էր ինքը: Արհամարհեց իմացականութիւնը, թերեւս անոր բարձրագոյն կատարներուն դիմացէն նախանձորդ ու սեպական բողբոջութեան դիտակից: Արհամարհեց այդ սօտիին բոլոր հանդամանքները ու իր գրականութեան մէջէն վտարեց ինչ որ կիրք ու յուզում, պատկեր ու փայլակ չէ: Պարզ էր, որ օրը-տոտանդն յարէր պիտի տյո՛ օրերուն հոշակի հասած յաւակնուտ վարպետութեան մը, որ միտքը, գիտութիւնը սանկ կը հոշակէր ու ներհայեցողութիւնը, գործնապաշտ ծիսանքները մեր եօին՝ կեդրոն կ'ընդունէր նոր աշխարհայեցութեան: Այս կեղծիքով՝ Սահակ Պարզեւեան կը փակէ՛ր իր խղճահարութիւնը իմացական իր բողբոջութեան վրայ: Ի պատիւ իրեն պէտք է յայտարարել, որ չեղաւ ճարտար խաչագող, յատուկ անուններու եւ վարդապետութեանց զգնաւսեղազ հաւաքիչ (collection շինող), ինչպէս բրին ուրիշներ, մէկը ատան դադարները քիչ մը պատկերի պղպծողով կամ սրամտութեան փոշիով պլացցնելով, ուրիշ մը շիտկէ շիտակ օտար ապրանքները հայացի վաճառելով, անցնելու համար քննադատ կամ արուեստագէտ: Ի պատիւ իրեն պէտք է յայտարարել, որ ընդունեց իր միաբերն պարտութիւնը ու զգուշացաւ մեր օրերու լրագրական հասարակ տեղիքները հերկելէ ու իրր մտածում պանդոյրներուն Հիացումին հասցէագրելէ: ...Ձեռ խօսիր հոս բարոյական զգայարանքի բացարձակ իր պահանջն: Ու կ'արձանագրեմ տարօրինակ, տխուր փաստը, որ կու գայ իրմէ ու նմաններէն, — մեր գրականութեան սպասաւոր, բայց հանրանէր կեանքի անասակ մարդոց կամ կեղծ կամ ոտմանթիք պատքանքը, որմէ պատմութեանուած ոտք նետեցին անոնք պայքարին, զրկանքին, զոհողութեան մեծ կրկնները, ու իրենց տկարացմամբ

պարզեցին տիրազոյն անկումներ, մեր առջեւ դնելով անկանգնելի մեր կործանումին ազազակող զճիտը, մեր միտքին այլառերու մը։ Ի՞նչ էր դործը իր ու նմաններուն, ինչ էր դործը մինչեւ այսօր ալ այն միւսներուն, դիտենք մեր վրայ, որ զերազանցապէս հաւատք, կուրուքիւն, մոլեռանդ ուղեղ կը պահանջէ եւ ուր կ'ելլէին տաղանդէն առաջ, բոռէն առաջ, ածականէն առաջ, ուղղութիւնը, պարզութիւնը, ժողովուրդը ըլլալ կարենալու վերնատուր շնորհը, մանաւանդ իր անձը ատրոպանահատելու հերոսական լուսամտութիւնը։ Յեղափոխութիւնը ամէնէն քիչ կը հաշտուի զրական եւամտութեան հետ։ Մեղադրանք չէ, որ կը բանաձեւեմ։ Արուեստը, շատ մը բաներ ըլլալէ առաջ, խորապէս անճանկան, կը խցէ՞, ինչպէս կը հաւաստեն ոմանք, մեր հոգիին այլահոս կամ այլընկալ ուղիները։ Տեւոզութեան կարճ պարունակէ մը, մարդիկ դժուար պիտի հանդուրժեն հակառակը։ Աճեցուցէք պարունակը. այն ատեն պէտք պիտի չգտաք զատելու դործողը գործէն։ Ինչո՞ւ միտքերնուս չ'անցնիր հեղինակներ փնտել հնութեան անանուն գլուխ-գործոցներուն, որոնք հազիւ կ'ընդունին որոշադրականութիւնը մեր պայմաններուն։ Այսօրուան ցօւն անունները քանի մը հազարամեակի մէջ պիտի մաշին իրենց դործերուն վրայէն։ ...Յեղափոխութիւնը։ — Ի հարկէ, անկայուն, մշտադարձ արուեստ է անիկա ու կ'ապրի հակառակովը եսին։ Ինչ-դինքը պարսպողը, ինքզինքը խորացնողը, ինքզինքը աշտարակողը այդ իսկ մարդմիտ յաճախեցովը կը սպաննէ այլապէս իր մոլորմանը, իրմէն դուրս ալ հակելու, տարածուելու, ուրիշին ալ վրայ բացուելի յօժարելու։ Սահակ Պարպեւեան արագ ու թուրքիկ իր ընթերցումներուն մէջ, մելոնին ու թուղթին հանդէպ իր անյաղթելի զգուշութենէ կախակայուած՝ շատ չ'հետաքրքրուեցաւ դարավերջի այն անտութիւններով, որոնք արդի քաղաքակրթութեան ալ բորբոսած նուաճումները քանդել կը ձգտին։ Այդ բաւիղը այլապէս անհրապա՞ր ու՞ չըջումով՝ տափակ, քանի որ կը յանդի գանգուածին, զրգուց իր հակամարտութիւնը ուրիշ ճամբայէ։ Անոր յաճախող իր ընկերները ծագելու առիթը կու տար։ Միւս կողմէն՝ ամէն մարդ մինչեւ աստիճան մը փոքր գրեւտին մէջ ինքզինքը տխուր կը զգայ։ Կու գայ ասեւը, երբ կը ծանձրանայ ու կը նետէ մէկդի։ Ապրարոյ, գեղեցիկ, ձրի գրական բացատրութիւնները ծանրիմաստ տծականներ ըլլալէ առաջ, անոր համար ձեւեր էին խառնածքի, ինչպէս՝ ուրիշներու համար՝ միւսները, բարոյայլիցը, ազգօգուտը, կրթիչը, բարձրացուցիչը։ Ու բազմաժիւրոն խաւեր ասոր յուսովքով կը գիմաւորեն ոգրերգութիւնը ապրելուն։ Մենք կու գանք այխարհ, մէկ կամ միւս պարունակէն։ Սահակ Պարպեւեան ատեց տնտեսքիւնը, դատուիւ, հմտութիւնը, պուղի անճանկան անկարողութեան մը կենդանալիւրպէն (ամէնէն ձախորդ ուսունդն էր անիկա, տեւական ձողողութեան տակը իր հիմնական հակումներուն, կարգայու տեղ՝ թուելու, մոտածելու տեղ՝ ապրելու սիրահար), բայց ատելով մանաւանդ ատենցով գարգմանակուած իր մէկ լանի ընկերները ու անոնց յաջողութիւնը։ Հակառակ ահաւոր իր սղմտութեան, որով գրական գործի մը թաքուն արժանիքը անմիջապէս կը ճշդէր, անիկա չեղաւ քրեանազատ, վասնզի կը հաւատար գործին, բայց ոչ անոր մակարդութեան։ Չբաւ տեսարանութիւն, չունենալուն, ոչ մէկ վարդապետութիւն, որ կնիկի մը ծոցը փոխարինէր առաւելութեամբ։ Մտքի

հեղափոխութեան, արուեստի խռովք, գաղափարի գինովութիւնը, — բառեր, որոնք մարմին կը կաղմեն իր սպարտալին իբր հալածիմ: Ո՞վ գիտէ: Անիկա գորկաւ իր թշնամիները աշդ բառերուն նիզակներովը ու դժուար է իր արձակին աշխարհ բարախուն գնացքը տարադէպ տանձն արուեստով, ինչպէս դժուար է հաւատալ իր էջերուն թեւադրել փորձած յայն, համակող յուզումին: Կե՞ղծ — ինչպէ՞ս իր կեանքը, ինչպէ՞ս իր սիրտը, ինչպէ՞ս իր ժիտքը: Գուցէ՛: Բայց տխրան կատարելագործուած, որ մարդ չի կրնար զատել հարազատէն: Այդ կեղծիքը հազաւ անիկա իր մորթին նման: Կ'արժէ իր մտքին իբր փաստ, յիշատակել անոր կեցուածքը դիրքերուն գէժ: Տուր՝ կանջի խեփոքներ», խեղճ աշդ գիրքերը, իրենց ալ անպէտ կափուցումին մէջ յօշոտուած, պարզուելէ ետքը կտրել մը դռնդողէն, որ կեանք կ'անուանուի: Անիկա տարազ բոլորէ աւելի անկարող նախանձի ազատցո՞յց մըն էր, ինչպէս ուղեցին փափաւ իր հակառակորդները, անոր գրական լիութեանը շրջանին իսկ: Իրողութիւն է իր կարծիքը անկայն, որուն համեմատ լաւ գիրքերը (կը հանկուտը լաւ կառուցուածը, հաճելին, հազորդականը) ներքինին ժխտել կը դրեն: Նոյն աշդ կարծիքով, ապուշ էր, եթէ ոչ ցաւազար տ'ն՝ որ թուղթիւս վրայ կը վառէր ինչ որ կանչուած էր միտքու մէջ յառնելու: Գիտակցուած տեսութիւն, թէ յետ պարտութեան չքմեղանք, քանի որ դրեց այնքան քիչ ու ցանց քերժը այնքան աստու: Ամէն օր, զգալարաններու մարզէն ինքզինքը հերքող տաղանդաւատ աշս հտպիտը շտառապեցաւ, երբ անդրադարձաւ մեծագոյն իր գուշակութեան: Հանդէպ որո՞ւ: — Բայց Արուեստի՞ն, գլխադրուած արուեստին: Հարցանանը արդար է ճշդիմ արդիւնքին առջեւ, մէկու մը դէմ, որ ինքզինքը մշտապէս անոր նուիրուած տեսարանից: Ղեւտացի, քահանայապետ կոչեցին գինքը, հեղնովի ու չրողութիւն: Ձրողութիւն, աւա՞ղ, վասնոր ինքզինքը պաշտպանելու համար մարդ պարտաւոր է նախ հաւատալ աշդ իմքզինքին: Անոր համար արուեստը մէկն էր պատրաստ տարազներէն, որունք ներկուած, հաճելի, ի սպաս կը գրուին պանդոյրներուն ու ամբոյններուն, երբ ատոնց յիմարութիւնը փորձենք քառակուսել: Ու հետաքրքրութեան համար կը զտտեմ քիչ մը բան անոր փառատոքներէն, որոնք կորիզը կը խտացնեն անոր բոլորութեանը, բացառիկ, բարբարոս, հրէշային, բայց տարօրէն հաշտ իր կենցաղին, հասունցած անոր գայտին ու գիշութեանը մէջ: Հարցուցին անոր.

«Ի՞նչ է աշխարհը»:

— Յիմար հրախաղութիւն:

«Լուցկիները»:

— Ձիտները կրկներուն:

Անիկա իմացական ամէն երեւոյթ միտի կը կապէր ու կ'ընէր ատիկա բնազդական իմաստութեամբ, գուշակի նման ու նման վրահի:

Հարցուցին անոր.

«Ի՞նչ է երկինքը»:

— Ամայի կապոյտ, աղի ու անպէտ, ատենին՝ ապակի էր գոնէ, հիմա՞՝ լէզոք օդ:

«Մա՞րդը»:

— Անասուն կամ զազան:

կը լուսարանէր պատկերը՝ ստամոքսով կամ ճիւղաններով։
Երբ դիտել տուին, թէ «նոր» չէր տակիտ։

— Հիներուն մէջ թերահաւատ էր տարազը, հիմա՝ ուղղա-
փառ ու անսխալական։

«Ամէնքը»։

— Ոչ իսկ ի՞նքը, որ ըլլար զուրս տարազէն։

«Ուրիշ ոչինչ, առ աշխարհէն»։

— Անշուշտ. կիները։

«Այսինքն»։

— Հանգիստի պատահ, գաղանին վայրդ։

«Աղմուկը, որ անոնցմով կը լուզէ աշխարհը»։

— Որպէսզի փրկուի կերտուքը ակռաներուն ու հառաւաճքը
սրտուածներուն։

«Աղջիկը»։

— Խո՛տ՝ անասուններուն։

«Այսինքն»։

— Համբիւրի հատիկ։

«Այսինքն»։

— Նայեցէք ասոր։

Մօրուն էր բռնէր։ Մարդիկ հասկցան, թէ ինքզինքը կը Նը-
մանցնէր տէրիւններուն, որոնք աղօթքին տուները համբիւրով կ'ա-
ղան ու... Երբ նեղեցին զինքը, պահանջելով պարզումը փարատոք-
սին, լուս, նշանացի ցոյց տալով հասուն կիները, որոնք գաղջիկ
չէին ա՛լ։

«Աւելին»։

— Այն հասկնար, ինչ կ'ուզէին հարցումով։

«Մա՛յրը»։

— Պատահական ջլախտ։

«Այսինքն»։

— Յիմարութիւնը կարգ մը գեղմերու։

«Ուրեմն»։

— Ի՞նչ։

«Առհա՛կ Պարզեւհա՞նք»։

Թոթուեց ուսը ու անցու անդին։

«Ուրիշ, ուրիշ»։

«Այսինքն»։

«Ա՛ղջը»։

— Այո՛, շուրջառուած սողում, փերեզակներու ածու, պան-
դոյրներու մրգաստան։

«Ի՞նք, այդ ազգին մէջ»։

— Դուրս էր անկէ։

«Ազգէ՞րը»։

— Մեծցուցէ՛ք շուրջառը։

Մրաժի՛տ, այս ամէնը։

Ոչ անշուշտ։ Անոր ցաւերէն մէկն ալ անկարողութիւնն էր սը-
բամիտ ըլլալու։ Կտրուկ՝ անոր մտածումը ժխտումի զառիթափէն
կ'իյնար պարսաւ, խանդի ջուրերէն՝ դէպի հեղեղատները հոնաորու-
թեան։ Իր հիացումը անհուն էր, իր գիծէն ու տաղանդէն իրեն ժա-
մանակակից ուրիշ գրողի մը մասին, որ, կրթող ու յեղինակ, կը

զոգմանար իր մեղուի, պիծակի խայթումներովը ու կը շարունակէր տառապիլ, հարուածէն վեր: Խնդա՛լը, կրնալ ատ քանը ընձ՛լը: Զուրկ էր ծնած այդ բախտէն: Վասնդի կը տեսնէր, որ միւսը, անօթին ու իրեն պէս հալածուածը, այդ պուտիկ մը ժպտով տանելի կ'ընէր ինքզինքը իրեն ու զինքն ալ աշխարհին: Սահակ Պարպեւեան իր տարազները կը հանէր իր մազմին դուբերէն ու ոսկորներէն: Հարցուցին անոր.

«Թուրքին դերի իր ժողովուրդը»:

Մտածեց ու խոնարհեց աչքերը:

Ու ամէն անգամ, նոյնիսկ ամէնէն անսիրտ պարտաւին տենդին մէջ, անիկա պարտաւոր զգաց ինքզինքը զուտ ընելու այդ հարցականին դէմ: Զէր կրնար հերքել իր գոյութեան իսկ պատկե՛րը: Քառորդ դար ուժըղի, այդ կենդանակերպէն, անիկա շողացուց (իւրաքանչիւր, սուտը ինք միայն պիտի վճռէր) մեծ իր իմացականութիւնը, ու «հսկայ» սիրտն ու սէրը ի սպաս դրաւ այդ սրբազան դատին, երբ կանաճի, անգնդային իր սուղումներուն մըրը պուկին՝ ելլէր վեր, ջուրի երեսին: Կապո՛յտ, հո՛ւ, զո՛ւ փնտռելու: Օ՛, ո՛չ: Ի՞նչ կար հոն արդէն: Զէ՛ որ պատմած էր տառք փարանոց այդ ապակիին անվերածելի ու անհուն փռչին, կարճ իր պատգամովը: Զուրացաւ անշուշտ մեր տղերքութիւնն ու շեղաւ մէկ քանինքու չափ իմաստուն, մեր մորթուելուն պատճառը մեզ ընդունելու, ինչպէս ըրին աւելի վերջը նոյնիսկ պարկելու մարդէր, մուկին շնորհած յանդգնութիւն մը պատուական անելով: Բայց շահագործեց մեր աղէտով մեր մէջ մարտազնուած թերութիւնները: Ըսի, թէ անոր պորտին կապը կտրուած էր Բիւզանդիոն: Ըսել կ'ուզեմ՝ եղելութիւնները նանքութիւններու վերածելը հո՞մանիչ է մայրաքաղաքացի ծնելուն: Մասնաւորելով մեր վրայ, ըսել կ'ուզեմ՝ անգամ մը Թուրքին ահէն ինքզինքը դուրս զգալէ յետոյ, անիկա պիտի մանչր շատ բարակ, ու հակառակ անաւոր իր սրտաւետութեան, իրատեսութեան, պատրանքաւոր փնտրելին, եղաւ անիկա կամովի կոյր ու պոռպոտն: Զոտաւ, թէ ինչ կ'արժէ՛ր իր տերունդը, ի՞նչ՝ որ իր արժածը զիտէր շատ լաւ: Ինքն էր, որ մեր ժողովուրդին հայտնելու քիչ մըն ալ հասարակ կեցուածքը փրկել փորձեց, զայն՝ այդ կերպը, վերցնելով ոճագեղ պարտաւոր ու իր ընկերները զգիտելու տենդին մէջ բարձրացաւ վաւերական դայրոյթին: Զուրացաւ հայուն: Բայց անոր սրբազան, անպաշտպան զօրախառնութիւնը նիւթ ըրաւ զահանդազին, կեղծ, զայնթակողութեամբ միայն տպաւորիչ պատմումներու ու երգել կտրած ախքան սրտառույ մեր սուգը կորակոր լղբճեց ու ըրաւ զազրելի: Սիրտ այն պատմութեան մէջ, ուր մեր կիներն ու աղջիկները կը պտուկեցուն անդամահատութեան, զարշանքը կը պտուի, ծածր ու խղզող, նման Էլքրոֆորմի: Ու պարտկելու համար անհուն ու ապարարտ իր օտարութիւնը (անորակելի պատրա՛ւքը մեր բոլորին, երբ մեր ցաւին մեծութեամբը տպաւորել փորձեցինք ու ստեղծեցինք լացի գրական նութիւն, չկասկածելով, թէ ազգերը օտար են ազգերուն ընդմիջ: Զիրար պիտի առնեն, հետեւած ըլլալու համար օրէնքին, որ հաստատակ տեղիք է արդէն: Մեր Նւրոպա մեծցած սերունդը հազիւ պահեց բակ տեղիք է արդէն: Մեր Նւրոպա մեծցած սերունդը հազիւ պահեց իր կապը իր ժողովուրդին հետ) անիկա մթերեց, սեւեռեց այդ լրբութիւնը: Զուրացաւ արնաշաղախ փտումներուն վրայ ծիրանի ու բզգուն ճանճերը ոճին, զարդ, շող, գոհար, փոխաբերութիւն: Միւս կողմէ՛ ա-

ճեցուց մեր ժխտական, կոտորակուած, ճճի փոքրութիւնները, վեարածելով զանոնք ցեղարանական բջիջներու ու ճգմեց մեր պարտութիւնը, կրկնակի, մեղքէն զառածած ու արժէք զարժած առաքինութեանց ծանրոցին ներքեւ: Մեղքեաւ անուշտ մեծ ողջակէզը, բայց ամէնէն շատ իր իսկ տաղանդը, որ պիտի ճզուէր, ճզոած էր զատականիքովը ցեղային ծնունդին: Երբ դիտել տուին իր պատանութեան շրջանի խանգաւառ մտաւորականութիւնը, աւելի վերջը, այդ դատին համար թափառական, տարադիր, ողբուհոծային, մեծաթորէ, «սահմանցնող» իր գրականութիւնը:

— Հաց, — պատասխանեց ու անցաւ:

Երբ դիտել տուին միւսները, ընկեր կամ ոչ, որոնք չէին դատարիք, իրմէն աւելի զժխտմ պայմաններու տակ:

— Զհաց մեր հանապազորդ տուր մեզ... — կրկնեց ու անցաւ:

Երբ շօշափեցին իր արամադրութիւնը, աւելի ճիշդ՝ դատումին կերպը տէրունական աղօթքին միւս համարին մասին, որուն մէջ պաղատանք կայ «փորձութեան չտարուելու»:

— Թո՛ղ կարգուէր... — պատասխանեց:

Ամերիկացի միսիոնար մըն էր այդ բնդգիմախօսը, քաջածանօթ գրադէտին անցեալին: Որ մնաց կարկամ՝ լրբութեան ու չափէն, բայց շնահանջեց: Անիկա պաղարիւնը գտնելէ ետքը վէճը փոխադրեց բարոյախօսական մարզին ու դրաւ մէջտեղ «մարդկային արժանապատուութիւն» որակուած ոսկեհատիկը:

— Մարդկայինը, բայց ինչ դործ ունիք հոս, — պոռաց Սահակ Պարզեւանը անոր երեսին: Ի՞նչ դործ ունիք հոս մեր մէջը փնտռելու: Անոր հայրենիքը, Ամերիկան է, ա՛ն՝ որ Տէրոջ փառքին համար, փորձութեան դաշտը արարածները լինելով կը սպաննէ, անուշտ, յանուն Սուրբ Հոգւոյն: Սահակ Պարզեւանն մասնագէտն էր թատերական դաշտի թիւերուն: Մի մոռնաք, որ պորտին կտպրէին կած էր Պոլիս: Ան կը նմանէր մարդոց, որոնք իրաւունքը կը շահին իրենց կողորդով: Ամէն հռետոր, մեծ մասով՝ եթէ ոչ ամբողջ, ինքզինքը կը պարտի իր ձայնին: Անիկա ջախջախեց միսիոնարը, հայերու մէջ գործած առաքելայ, աստուածաբան, բժիշկ «հոգւոց եւ մարմնաց», քառարդ ժամ տեսող հեղեղի մը մէջ ոչ թէ մեղքի, այլ՝ «անառարկելի» առաքինութիւններու, որոնք մեր ժողովուրդին նըւէրները եղան իր կազմակերպութեան կողմէ: Անիկա ամբաստանեց Պոքալը, լուսաւորականներու զստական զէնքերով, որոնք անոր պերճ բարբառին տակ ծիրանի, մեծվայելուչ քղամիջներ եղան: Սահակ Պարզեւանին նախասիրած գետինն էր ատիկա: Ամբաստանեց հրակայ ու «քառակուսի» կազմակերպութիւնը, որ զանազան անուններով ու մարզերու վրայ բեր էր ամէն բան՝ խրամատելու, նոր ժամանակներու ամէնէն լի զէնքերով, արդէն խարխուլ գրաւէր մեր ժողովուրդի հաւատքին: Որ խաթարեւ էր ազգային աւանդական բարոյականը ու խորտակեւ հողեկան միութիւնը, ապականելով նենդ ու պղտոր միջոցներով, հաւատքին իոյ վեհութիւնը, զայն վերածելով հացի, ազդեցութեան, գործի ամենազօր ջաղացի մը: Ի դուր, բնդգիմախօսը, պարկեշտ մարդ, փորձեց տրբունը բերել իրողութեանց, հաստատել իրենց գործին իսկական արժէքը մեր բարբերուն մէջ բերած բարոյական աւելի պարզ, աւելի մաքուր ըմբռնումներուն:

փաստերով: Մահակ Պարզեհեան անուանոր ձեռքէն մանրադիր աւետարտոնը ու բացաւ գլուխը, ուր դրուած է դալթիսկոթիան անուանակը: «Լաւ կ'ընէ, որ երկանաքար կապէ ճիւղին ու մտնէ ծով ա'ն՝ որուն ձեռքովը դալթիսկոթիանը պիտի դաշ: «Փրկիչին» բերնով այս մեծ ճամբարտութիւնը կամացուկ կրկնեց անիկա միսիոնարին ականջին ու համարն ալ քսեց զիթին: Անիկա քաշուելու ատեն կը հրաւիրէր բոլոր պատուելիները հետեւիլ «Տէլոնը» օրինակին: Հայ ժողովուրդը սենէր իր ֆրիստսը Ամերիկաներէն եւ Եւրոպաներէն շատ տալի: Ինչ էր իրենց դերը, եթէ ոչ՝ դալթիսկոթիանը ժուռածել տանիքէ տանիք: Անիկա ամբաստանեց Մայրապոյն Արեւմտաքի այդ քրիստոնեայ, մեծափարթոմ ու արդար հասարակապետութիւնը, որ, ձեռքով վաշկատուն, «Երջի իրապէս կարօտ», բարբարոս ցեղերը ճաւառարանելու» զեղեցիկ, թերեւ ճաղաքակիրթ ալ գործը, եկեր էր Արեւելք, իր միսիոնարներու օպայակոյտով, ու շտեմելով թուրքերը, կը քանդէր, ասանց խղճահարութեան, դարաւոր հիւղեցի մը, խաղաղութեան ու սիրոյ զիրէ մը հանելով մոլեռանդութեան, աւերութեան, կիրքի կարմիր փոթորիկ մը, լարելով եղբայրը եղբոր, դաւաղել՝ հօր, ու մայրը՝ աղջկան դէմ: արիւնոտ բարեմանք անգամ չվարանելով քրքրել Անատոլիոյ հեռաւոր գիւղերուն խկ խորը: Ս', օրինապահ անոնց կեղծաւորութիւնը, որով հաճելի ըլլալու համար թուրքերուն, ինքնաբերաբար մեր երկրին անունը ընկնելու իրենց մտաւորական, ու գիրքերէն՝ մեր լեզուով գործող: Ս', անոնց աշխարհագրական կեղծանունը գոչնէնքը, որոնք մեր ժողովուրդին ընտրանին, մեր պաւստոսներուն ծաղիկը պատուելիներու սեւերամ ջուրի մը վերածեցին: Ու ասկէ աւելի ահաւոր, անոնց մերազգի փրօֆեսէօրները, հաստ ազդեցութեան ու «հաւապինք» գիւղախանութեան կիտուածաղարդ շմոյշները, որոնք չիրենց Ամերիկային» քարտէսներովը կը ծածկէին իրենց տան պատերը և աղքատներու համար հոս ու հոն հաստատած ուսումնաթոշակները անյուր, օրբաղան ճարտարութեամբ մը կը շնորհեցնէին իրենց օրինաւոր հասցէներէն, իրենց աղոյցը կամ պարագաներուն, անուանազն բողոքականներուն դիմուն ուղղութիւն տալով նպաստներուն: Պարզեհեան չէ դադրած հրապարակել իր խոր տուելութիւնը անոնց գործնապաշտ, անհորիզոն ու տափալ կրթութեան դէմ, անիրաւ իր մոլուցքին մէջ տարածելով իր ռիւք միջնեւ ժխտումը անոնց կրթանութիւն գործին, զայն որակելով ճանքանացուցիչ ու անբարոյ: Անիկա կը խօսէր անունովը բանի մը, զոր վախճանէր էր սենեակու: Ու կը պոռար պարիշաւ քարոզիչին երեսին:

— Մըցանի՛ւր ձեր ատաքնութեանց:

Ու չտալով միջոց՝

— Հանդիսալ թոշակ ու դէլ ծերութիւն...

Կապուտեցեր էին անոր այտերը: Մեղին դարաւոր զարոյթը, էմիլիանի միակտուր, «կրանիթ» արեղաններուն անմահ տուելութիւնն էր, որ կը յառնէր անոր բերնով ցեղին յաւիտենական թշնամիին, պառակտումի վիշապին, հերետիկոսին ընդդէմ:

✱

Ու որպէսզի տմբողջ ըլլար, գոնէ իր մասին մէջ, զնացքը աս վերլուծումին, անցնելէ ատալ բուն արամին, եւ հարկ կը զգամ տուելու, միշտ ամփոփ, պալմանները, ճախարարամբն, որոնք սկզբը

կ'առնեն Արեւելքի գեղեցիկ մէկ քաղաքէն: Ան՝ որ տիկին Գոհարեան տնունով կ'երեւայ այս վէպին մէջ, հիմա այդքան ջնջուած, տառնին որքենի, փառաւոր տիպար մըն է, գլխաւոր զոպանակը այս ողբեր-լութեան:

Տասը տարի առաջ արքենի կնիկ մըն էր ան, փրիտասարգութեան վերջնական կաղապարովը, մեծավայելուչ ու կատարեալ, որքան խոր ու ցանկալարոյց: Կիները քիչ անգամ զգալի կ'ընեն իրենց խորութիւնը: Բայց ցանկութիւնը չ'ըմբռնուիր առանց անդունդի: Այն ատեն անկաւ երկրորդ ամուսնութիւնն էր կնքեր, մոռնալու համար օտար լինին մոռալ ու ներքնապէս փուտ պերճանքը: Ամուսնութիւնը, քաղաքներու մէջ, բախտախաղ մըն է, առեւտագն զանխորհուրդ արարք մը: Օրերով Արտեմիս (հարկ չկայ աղջիկութեան ծննդին, տրուած բլլալով ծագումին համեմատութիւնը) ըրաւ այդ անխել ճաշը, ինչպէս որակեր էին իր ընկերուհիները այդ ընտրութիւնը, հօրը տարիքէն մէկուն վրայով: Ըրաւ համութեամբ ու վատահամութեամբ, ապաւինած իր աստղին, որ ջուլհակ Կարապետին խոնար տունին մէջ իրեն պէս գոնար մը բուսցուց հրաշքով: Միտն սուտ բաներու կարգին, հաւատքը դէպի մեր աստղը եղբարեան է երբեմն: Ու երեք տղեղ աղջիկներու մէջէն — իր քոյրերը, որոնք ծընած էին Տրապիզոնի կողմերը ու հօրերնուն բախտին հետ ինկած Իզմիր, հարս երթալու համար Իզմիրի ներքին քաղաքիկները, ստնկ ու նանկ փերկակներու եւ սափրիչներու — զինքը զատող ու փառք առաջնորդող հրաշքը եղջերուաբաղ չէ: Մորթի ու աչքի յարգաբանք մը՝ խրճիթէն մինչեւ պայտառ բացուած անդունդը բաւ է լեցնելու: Կեղեցկութիւնը, դրամին գնով, առանց անոր ալ, կը տեսնուի այդ պատրանքները, ընկնով կիները անկարելի բան մը, իրենց իսկ աչքին: Հարցուցէ՛ք սա թոռմած պառաւին, թէ ի՞նչ կը ճանչնայ իր մզելիք աշխարհէն: Իր հարսնութիւնը, պիտի պատասխատէ անկաւ: Մեր էր անոր էրկը, բայց հարուստ: Տիկին Արտեմիս տարաւ իր կամաւոր դերութիւնը հան ու պարկէ՛շտ, եթէ չուզէ՛ք դադարիլ դիւային անոր հնարամտութեամբը, որ անոր փրկութիւնը կ'երաշխաւորէր զանվրէպ ստուգութեամբ մը: Սեռային անկիւնայափութիւնը մաղիտոբաներ ունի նաեւ կիներուն, մանաւանդ կիներուն կանառէն: Այդ քիտութիւնը անոր շնորհեց վկայականը, — արդար վաստակ աւոր զձգանց ու եռանդին: Անոր էրկանը մահը, անշուշտ տարիքի արդիւնք աշխարհի աչքին, ու անխուսափելի հետեւանքը եղաւ անոր ճարտար հաշիւներուն: Թուզի, աֆրոնի, մանածի ու տակաւին սրիչ շատ մը հաստատ ճշմարտ ու չհոռոց բաներու վաճառական, ատենին արիւնէն փաթթած, հիմա հիմնովին շիջած ընտանիքի մը վերջին շատաւիղը (աւելորդ չեն այս պիծերը, քանի որ տեսանելի կ'ընծայեն մարդոց կարգ մը անյայտ կողմերը, եւ հասկնալի՝ զանոնք զարնող աղէտները), վաթսուրի մօտ, հետեւաբար ներսէն մաշած, անոր էրկը իր ո՞ր խելովը կը գնէր այս կինը, առատ աղաւմանով: Միտնէն ձախորդը, փոքրճաճը՝ անոր զործերուն: Ուրիշ՝ ուր՝ իր իրկները պարսպած այս գառամութեան մէջ սա եղբրական կրակը: Բայց մենք, որք կը դատենք ուրիշները, կը դատենք միշտ իրք հանդիսատես, այսինքն՝ դուրսէն: Կրակէն առնուողը այրուիլը պիտի յիշէ ամէնէն ուշ: Անիկա գնեց իր խնկ մանը, ինչպէս տրուած մութեամբ սրախօսեց բանդէտ, փորձառու դատակորդը սպրած մարդերու: Յաճախ տարբեր ոկիւր չունին մեր դժբախտութիւնները:

Մենք մեր ձեռքովը կը բանանք դուռը անոնց երեսին, որոնցմէ պիտի յորդի մեզ զապառասպուռ ծախող՝ հրդեհէր։ Ու աղբերանները մտրդոց երեսներ են, կին կամ երիտասարդ։ Չնչին այս պատահմունքը կը նմանի փոքրիկ, ոննչոն պալարիկին, որ աչքն է խլիբիկին։ Ուշ է արդէն, երբ կ'ափսոսանք մեր միամտութիւնը, բարութիւնը, առնուազն գթութիւնը։ Կէսը մեղքով սէրերուն կու դայ այս պարունակէն։ Անշուշտ, ուղղակի, ոճրածնունդ մահ մը չէր, որ կը նիւթուէր թուղի մեծ վաճառականին դէմ։ Ընդհակառակն։ Անոր կը նիկը, հարեմական կարգերու ինքնադէր երկրպագու, պարանոցէս իսկ չէլու, հակառակ էրիկին յայտնի արտոնութեան։ Սուսիկ-փուսիկ, ինքզինքը ծածկած իր ապարանքին ոսկեղոծ մեծութեամբը, զարծացոց բաժնատոյններուն ապառանները։ Բայց գործեց տակէն։ Երկու տարին բաւ եղաւ, որպէսզի անխնայ, անյազուրդ, փաղաղիչ ու անդիմադրելի, անոր կինը քամէ, չորցնէ անոր արդէն զնուրէ պակասն երակները, ճամբաները։ Մարդը մեռաւ։ Աւելի ճիշդ՝ չորացաւ։ Ողջ-ողջ մոմիայ դառնալով, առանց ցաւի, բայց նման մէկու մը, որմէ քնքքած ըլլան, ոչ թէ քամած արեան վերջին կայլակը։ Մարդը մեռաւ, կնկանը ծոցին, անշունչ պուպիկի մը պէս, միտէն իսկ չէլած, օրտառու չեղանքի մը մէջ իջնելով անդունդը պարսպին։ Ճարտար այս խաղաղութեան իբր պսակ, քրիտոնեայ, ամէն երեսով օրինաւոր այս մահը տիկինին կը պարզեւէր իր իրի մանա-դեղեցիկ աղիկը, լիբը վաճառատուն ու ճանապարհի դրամ — հաշիւը մենք չենք բռնած, որպէսզի ստուգենք — ինչպէս շատ շքեղ, շատ հնօրեայ, Պարսկաստանէն թէ Հնդկաստանէն իշխանութի կուրծքերը վառող, տաճարող քառամանեակը, դուրս-գործոց մը ասիական ողորդութեան, որ միւսմիտակը հարթեր, գլուխ էր հաներ դժուարաշատ հակադրութիւնը տարիներուն։ Մարդը մեռաւ, իրտաւոր ընկու համար դասական առածը ու փաստելու համար, աւելորդ անգամ մը, օրէնքը, որ կը զարնէ իր փառախոփը ապրող բոլոր կապակերպութիւնները, անհատներէն մինչեւ կայսրութիւնները։ Այս կարգի մոնետութիւններ կանխող տարիներուն շատ ցանցաւոր, վերջին դարուն համար յատկանշական դէպքեր են, մեր քաղաքին դասակարգին նոյնիսկ ամէնէն բարգաւաճ շրջանին, անոր արդէ ալ անձնակերպ կործանումը յայտարարող սանկ 50-60 տարիներ տառնուց։ Հարատուութեան մը շրջումը նման է գերդաստանակա՞ն շրջումներու։ Վաճառաչան կեդրոններու մէջ, ով գիտէ ի՞նչ զրկանքներու, հերոսական աշխատանքի դնով, չեղան ու կրակն զեղացի մը, երբ կը տիրէ դրամին, կոտորած կ'ըլլայ իր պարտքը հանդէպ իր ցեղին։ Բայց անիկա պարտաւոր է վճարել իր միւս պարտքն ալ, հանդէպ իր ընտանիքին, աշխարհիկ փառքերէն ստէնէն հզօրը, ազնուոր ու փառքամ կնիկ մը պատին կանգնելով(՝)։ Վսիկա կը նուիրադործէ ցեղը կամ դուրսը ծապումին։ Մայր հայրենիքէն կտրուած, հեռաւոր ու անուր-բող քաղաքներու մէջ ամուրիութիւնը կը լրացնէ աղէտը։ Կարելի է, որ երկուսից ընդունուի իբր փաստ աւելի դարդուն քաղաքակր-որ երկուսից ընդունուի իբր փաստ աւելի դարդուն քաղաքակր-թութեան։ Բայց մերիները, երբ իրենց արեւը չկտակեցին, իրենց ոսկորներուն հետ կտակեցին իրենց մեղքերը մեր տարագիր քաղաք-

Պատիմ կանգնիլ—հարս առնել։ Նոր հարսը, ամուսինի տան մէջ տառջին օրը կ'անցընէ պատին դէմ կանգնած, այսինքն՝ ոտքի, յարգելու համար մեծերը։

ներուն...: Թաղեց անիկա իր էրիկը ու անցաւ: Քիչ մը շատ անտա-
վարտա, երկրորդին: Միջնարարին, անիկա Հազիւ-Հազ գրադեցուց
իր քաղաքացիները, մշտապէս ծերունի գրադէտէ մը — այսպէս կը
կոչուէին ու դեռ կը կոչուին բոլոր անոնք, որոնք Թարգմանած, լրա-
դրի մէջ յօդուած սրբադրած կամ որեւէ դատապարտ չհրատարակած —
Հեղինակա՞ծ են գոգուտ օգգայլիմ մանկուայն ոչր ուսմամբ կուանիլը
սպաւէլն մեծագոյն տեսլականն է գարդիս համարց գրագիտաց», —
տոնելով չի յիշէր լաւ ի՞նչ է դասը, բայց Հաւանաբար դադիւրէն,
քանի որ մարդկայրոս մը կը նկատուէր կարճահասակ դրադէտ Լա-
ֆոնթէնի լեզուին մէջ: Փոքրամարմին, հիւանդկախ, մեծաշունչ ու
ստղծնդաւոր դրագէտ-կապալառուն Հանրահաշի մականունն էր, —
որ մեր նոր պատմութեան ընծայած է զօրեղ գէժքեր, — փախաւ Ե-
դիպատոս, հեղադուրուելու: Իրողութիւն: Ո՞վ գիտէ: Մարդկային
հնարողութիւնը կանգ չ'առնէր անհեթեթին, որքան անկարելիին առ-
ջէ: Խօսեցաւ տիկինին խաթարուած զգայարաններուն վրայ, երբ
նոյն այդ կարճ աչքութեան շրջանին անիկա իր տունը բացաւ եօ-
թանասնամեայ եպիսկոպոսի մը, կաթողիկոսոցու, բայց վրիպած,
տարօրէն գրաւիչ, լիք ու կանանչ: Մեր կուսակիցն եկեղեցականու-
թիւնը իր ո՞ր հմայքով կը թելադրէ այս կարգի զգացումներ կիսե-
րու սիրտին մէջ: Գազանիք: Իրողութիւն: Պատահարը չունեցաւ
վստիստիւն շրջանակը: Իրմիւրի մէջ գայթակղութիւններ կը նմո-
շին անոր կիներուն: Ուշքի իյնալու համար պէտք է անին, ու իյնան
աւելի, ինչպէս կը պատահի ատկեա մարմինին մարդկէն, մեծակա-
ռոյց արիւստարդունիւններուն, այդպէս հաղած իրենց մեւը, զրգուիչ
ու անհոգ, բնութեան մեծ տեսիլներուն նման, հաշիւը չտալով ի-
րենց խռովքին ու անցնելով վէս, վեր, կոխկռտող: Ո՞չ դրագէտը,
ու՛չ եպիսկոպոսը դիմացան բաւարար չափով, որպէսզի լեզուէր ան-
ջըրպետը աչքութեան: Երկրորդ ամուսնութիւնը գոցեց հին բաներ,
բանալու համար լեզուները նորէն, խելացի-խելացի, կանգուն-կան-
գուն: Տարեթի նոյնքան մեծ անջրպետ մը, զոր հոսկից կամուրջ մը
կ'ընծայէր անդոյ, անիմաստ (քանի որ կամուրջներուն պաշտօնը ու-
րիշ բան չէ, եթէ ոչ անդունդներուն վրայէն ցատկել) գուշակելի ը-
լաւ: Հին հաշիւները: Մարդիկ դատեցին պատահարը միշտ իրենց ակ-
նոցով ու առաջինին մահէն առաջ երկրորդը — որ ընկեր էր անփո-
նի մեծ վաճառականին, թուղի գործին մէջ — ենթադրեցին, ենթա-
դրեք էին արդէն անկողնի կէտերդ, վստեղի տիպարը բարիքադիկ
անձնաւորութիւն մըն էր: Եփուն, շատ աւելի լայն հորիզոններէ եկող
մորդ մըն էր այս վաճառականը, յիսունի մօտիկ, բայց հանած-վա-
րած: Որ ապրանքի պէս կը վարուէր կիներուն հետ, այսինքն՝ մա-
տուցումի-խնդրանքի արդար օրէնքով ու աղջիկներէ, աչքիներէ —
վանազան ցեղերէ ու զանազան խաւերէ, հաւասար անտարբերու-
թեամբ մը մարմինի՝ ինչպէս հողեկան տուրքերու հանդէպ — իր ա-
ւորէն գուշակները կը տեղաւորէր մեծ ճարտարութեամբ: Լեզուանի,
վեզանմն, ազգային ակամաւոր անձնաւորութիւն, անիկա չափած
ըլալով հանդերձ այսպիսի իր ապրանքին, բրաւ գերազոյն յի-
մարութիւնը, խորտակելու համար տիկինին՝ ընդդիմութիւնը,
յամառ մերժումը... ամուսնանալով: Այս ամուսնութիւնը, նոյն-
քան դժբախտ, տիկինին պիտի բերէր առաջին պարտութիւնը,
լախտէն արդար տարուողը, զոր բանաձեւեց խոր բեկումով, չհաշ-
ուելով անոր անհեթեթի իրականութեան հետ: Պարտութիւնը: Ան-

չուշտ: — Ձմայրիկի, տրձոնաղեղ անոր մարմինէն ծնունդ առին, կապկաղէմ, մանրադուլիս, ճղճիմ աղջիկներ, չոր, չոր, տախտակ, կռնած, մորթի տեղ կրկնով մուխի բռնուած, աղտահար, գորշ, չրնթէ չորջուա յաթի կտորներ, տարօրէն ցցուն ոսկորներու վրայ տնխնամ հագցուած, ճմուռ-ճմուռ, իսկ եւ իսկ կապիկ: Ապշեցաւ ըաղարը: Ամէնէն առաջ անոր էրիկը: Որ, ողորտ ու անխիղ, հաւրուատի վայրոգ արձակութեամբ ու մենադար մարդու անորոտութեամբ, ամբաստանեց զայն տունին պարտիզպանին հետ, զպտիկ կտոր մը, նոյն շրջալա մորթով ու ճմուռ-ճմուռ անոտով, որ հագիւ կը քաշէր կտորտած իր մարմինը, պարտէզէն անբաժան, իր հիւղակին մէջ մսկոտ ու դէրի, երազելով իր տափաստաններուն գաղջ ու շոր աւազները ու կը ծածէր իր կինը, ան ալ չորջուա, աղտահար տախտակ, մէկ ճմալքով տիկինին, որ ինքնատիպ՝ իր անորժանեւորուն՝ ինչպէս արարքներուն մէջ, փոխարինած էր իզմիրեան սալուններուն ընտանի յոյն աղջիկը, այդ տարերկրեայ արարածով: Երբոյս անոր մարմինը ծրարած ձիւնասպիտակ համազգեստի մը մէջ, տիկինը զայն կը սպասցնէր օրահի մուտքին, անշարժ՝ ինչպէս անհետն արձան մը, ձեռքերը պորտին հոնգուցած: Ու անոր ականջներէն պղղիմ օղերը, խոշոր-խոշոր, կը վառէին, երեսի անուխին վրայ բըռնկցնելով տարերկրեայ հրախաղութիւն: Ընդունելութեան օրերուն այս պատկերը կը թողարդ տուննին տղաւորութիւն: Երջանակի չափ անոր օղերը, հասա՝ ինչպէս Եփրատը, Նիւթ էին անդուլ կատակել: Եւ տիրուհիին ակնովի հրահանգովը, երբ անիկա կը քակուէր իր անձանային համալցէն ու կ'առաջանար դէպի հիւրերը, պատկերները ռարաւիւած իրենց մօրերուն ծոցը կ'ապաստանէին՝ ստեղծելով մարդակերութեան շրջաններու տեսակ մը սարսափ: Անիկա կը հաւաքէր սուրճին պաւաթները ու կը դաժուէր կրկին իր հանգուցին: Երբեք ուրիշ պաւաթներ չէր տիկինին գարգահեցեակին, ուր ոչ ոք արտօնուած էր մուտք ունենալու: Անիկա յարգարիչը, խնամիչը, բուծանողն էր անոր արձանային մարմինին, զոր կը շաղուէր ջղուտ, անձաններ, անխոնջ իր մատուցներովը՝ ազնուական, յորդ, արբազան իմորի մը պէս: Այս ամէնորեայ մարմնով իջա՞ւ աւելի խոր անդունդներ, ուրիշ հաճոյքներու կաթսաները մինչեւ: Գաղտնիք է ատիկա, ինչ որ ծանօթն է, չորջուա կնիկին անեքեակայիք ուժն է, երբ իր ըստ գաղտնիքուն մէջ կը կշռէր տիկինին հսկայ մարմինը, կը ճմուէր երանքներուն յորդ ալիքները, կը կռկէր գիտները ու կ'անցնէր լանջքին արդէն առատ խոյանքները: Յետոյ զայն կը ցայէր(") կաթով, մանր-մունր, խնամքով, գիտութեամբ ու կը շորցնէր անհուն ըղձաւորութեամբ մը ու կը հիւսուէր անոր պիւրկ, պիւր, անգիւղիմադրելի, արուէն անդին խորութեամբ մը նուաճելով այդ միսեւորուն պարարտ իզութիւնը, հաճոյքէն սարսուռն, արձակելով արիւնի կեան մաւրիւն մը եւ ուտելով անոր շունչը, ինչպէս արիւնի կեան աստուածունհիի մը հողին: Այս երջանկութեան տուգանքը կ'առնէր անիկա գիշերը՝ ուտելով, հիւղակին խորը, հրկանը փայտը: Բիրա, զօրաւոր, անողոր ու սպաննող, զոր պարտաւոր էր հանդուրժելու սնունդն ու երջանիկ, պապնելով անոր ոտքերը ու տարածելով իր մարմինը իրերէ պատուանդան իր աստծոյն: Իրողութիւն էր դարձ-

եալ, որ յղութեան ամիսներուն անիկա միշտ իր հետն ունէր շոգո-
լայէ սպասուհին: Աւելի անդին: Այսինքն՝ հիւզա՛կը անոր էրիկին:
Չտեսան ոչ մէկ ատեն: Չտեսան կուզ ու կազ մարդն ալ, ան ալ ըն-
թուա, տունէն ներս որեւէ ատեն: Ա՛յն ատեն: Այո՛: Բայց մենք չենք
նկրի որ աղքատ կիներուն՝ տրամի փառքը ու կը լսենք մեր իմաստու-
թիւնը: Յղութեան օրէնքները խորհրդաւոր յօրինուածք ունին: Բայց
կը ձգեմ անոնք: Անիկա անխելք էր, զանոնք սորված չըլլալուն ու
նոյնքան հպարտ: Կապկածնունդ այս աղջիկներուն ամօթը անիկա
բեռցուց էրկանը քամակին, պուպրիկի պէս հազցնելով, պարտցնելով
իւր աղջիկները, ձախորդ ամուսնութեան պտուղ, որ ժառանգութեան
ու զարդին ծանրահիւս տուրքերը դիտէր վալիցնել անհուն քաղց-
րութեամբ, խոր, խելացի, զգայուն իւր բխումովը կենսաւորելով
ինչ որ ոսկին ու աղամանդը ու բէ՛նգը կը հիւսնէ մեր մորթին վրայ,
կը սեւեռնէ մեր աչքերուն անհաս ցանցերուն ու մեզ կ'ընեն ձախոր-
դօրէն անիրական: Սոնա՛ն, երբ տասը տարեկան չկար: Ու կոխ: Ու
զայթակղութիւն: Վասնզի անոնց տունը յաճախել առին բազմաթիւ
կիներ, քանի մը ազգէ, ձեռքերուն աղայ, ու... պահուցիւտէր:
Նոյնքան յիմար էր անոր էրիկը, այս տեսարաններով, երբ հերքել կը
փորձէր իւր կնոյն վերադարձները: Գո՛միք: Հարկաւ: Այնքան՝ որ
զժախտ պարտիկները որբի պէս ապրեցան, աստուելով հաւասարապէս
մօրմէ ու հօրմէ ու շոգոլա սպասուհիին մէջ փնտռելով դժնդակ խա-
ղաղութիւն մը, բնագդակած ու տարօրինակ, խուսափելով որուննե-
րու պերճանքէն, ամշնալով երեւիլ եկող-զացողին, «հայրիկ» կան-
չելով կուզ ու կազ պարտիկանը, քանալով անոր ջարդուած ծուն-
կերուն վրայ, ու լալով, երբ ստիպուէին տուն դառնալու: Տիկին
Արամիս Գոհարեան ի՞նչ զգացումներու հպատակելով իւր զաւակներ-
ը յիշեց շոգոլա սպասուհիին: Գաղտնիք: Գութը հո՞ր էր անոր մէջ
ու թողուց, որ այդ զժախտ «որբերը» դրաւ ան պահին իւր մարմի-
նին մէծ յարգարիշ, միշտ: որ հայթայթուի իրական յարգարիշը:
Այս պատմութեան սա՛մանէն դուրս է Սոնային ու իւր ճշդութեան
տարադէպ ողբերգութիւնը, մանկութեան պարտէզներէն: Կ'անցնիմ
արագ, թէ և ակամայ: Մինչև որ արհաւիր մը հայթայթումը տիկինը
նյարդացուցած էր աղջիկները, բրած «կարգին օրիորդիկ» ու լեցուցած
իւր սնտուկները զոյգ էրիկներուն սնտոկներով, — աղամանով, գոհար
ու ոսկի: Աւելի՛, Ի՛նչ կ'աչքէ կիներէն: Աւելի՛, Այսինքն: Մինչև
Պարզեւանին գիւտը, առջի էրիկին մօտ այնքան ազդու էր առաջա-
վարութեան դասէն, ոնիկա դործածեց իւր էրիկը յայտատ, «ծախիշ,
սպառիչ» շոգոլութեամբ մը ու... պարտուեցաւ: Երկրորդ իւր ան-
կո՛ւմը: «Փորձ», «դիւանագէտ», «որոպայթ շինկոյ» վաճառականը
սապալեց էգի անոր նենգ ծուլակները: Դեւէ մը աւելի հզօր առնա-
կանութիւն մը, որ կը շնչտուէր կեդրոնէն ու քիթէն հաւասար փար-
թամութեամբ, միշտ յառաջխաղաց, աննահանջ, խորտակեց զեղանի
տիկինին բոլոր սաղարանները: Ոչ միայն այդքան: Անիկա դարձաւ
իւր հին վարժութիւններուն. «ուտելէն զօրացած անորժակով մը», ու
լատցուց ապօրէն իւր զաւակները, զեղեցիկ դիւրութեամբ մը, հա-
րուտ մարդու բազմապիսի միջոցներով, ամէն մարդէ, միշտ լայն
հորիզոնով, դրեթէ «կրկէս ի՛րած» ըմբիշի մը պէս, ասպարէզ կար-
գալով պարտուած կնիկին: Զգացական այս սպասումները կ'ինքն ըրաւ
անտանելի: Զարեգ կ'ինքն անորակելի բան է արարածներու դասին
մէջ: Ու սէրը՝ ձեզի ծանօթ յիմարութիւն ալ չէ տիկին Գոհարեանի

այս օգտագործման մէջ: Անիկա տնտեսելի էր ամէնէն առաջ իր իսկ անձին: Դէպի շօքոյա սպասուհիներ: Ո՛վ գիտէ: Իրողութիւն էր, որ ան որ ցերեկները տւելի կը յոգնեցնէին զինքը ու իր յիմարութեան մէջ չէր անդրադառնար այս ջղատկարութիւն վաւերական ազդեցիկն: Սեւուհիին թեւերուն մէջ անիկա «շուրջ» կը դառնար յուղումէ եւ հեշտանքէ ու հիւանդազին զոտանքով կը դէտէր տարիանքը էրկանը ծոցին: Մօտ էր խենթենայութեան, երբ ճանչցաւ փարթամ, պարզաւ, տնձնեայ ու խրոխտ արձակագիրը, որ այդ օրերուն կը խմբագրէր Խոփիւրի մէկ օրաթերթը ու կը խօսէր, կործանարար ջերմութեամբ, ակումբներու մէջ, ամէն բանի վրայ, սրահներուն մէջ փափուկ ու մոռալէ հարցերու շուրջ, աչքերովը «ուտելով», այդ չըջանին (կատարուած էր 908 թուրքերու Սահմանադրութիւնը: Ասկորդ է գրադիւ հետեւանքներով) անպակաս հազար ու մէկ համախմբումներու մէջ, իրենք զիրենք ցուցադրող «կտոր» միւլթիւնները, իրենց կատարողին հրապուրիչ մայելչութեամբ ու «սլոյտին» բաց, խոստացող ճշտողներովը, դրամի՝ ինչպէս մորթի մարդերէն, իրենց անհրաժեշտ ազգի աշխատանքներով, որով կը տարբերին այնքան ուրիշներէ: Բոնիակաւնի յշտոյնն այդ փարթամ, նրբաւարտ, ողորդիչ դէմքերը: Անոնց հայեցի կրթութիւնը — որ զօրաւոր ասանդութիւններով կը վերանայ մինչեւ մէկ-երկու սերունդ, դրամարի եւ ձերեմուտքի միախառնուրդ, ու կաղապարէ մտած անմոռանալի տիպարներու վերայ — կ'աւարտի Փրանսական կամ անգլիական թերուկ ջնարակով մը: Կը խօսին քանի մը լեզու, խօսած ըլլալու փառքին կշիւով՝ օրուտն քիչ մը «աղի» վէպերուն, նորութիւններուն ալ ծանօթ իշխուլու նախաժողովները: Պատերազմէն քիչ առաջ ու անմիջապէս վերջը, հարուստներու սփռուէն այս կիներուն դէպի հանրային հետաքրքրութիւններ երկարումը, ազատագրումի ժեթ մը ըլլալէ աւելի, փաստ մըն է տխուր հակումներու: Մենք տեսանք Պոլիս, թէ ինչպէս անոնք դերասանի մը սեւ աչքերուն համար յանձնախօսման կազմեցին ու ծրագիր մշակեցին: Անգամ մը դարաւոր իր կաղապարէն ազատուելէ ետքը, մեր կիները — հարուստ պարսէզներու հոգեւէն կը խօսին — ընդօրինակումի իրենց աճապարանքին մէջ, կը վազեն հակադէմ արձակութիւններ, մոռնալով, ուրանալով էրիկը, ցեղը, միջնադարը, ամէնէն առաջ էրեկները, որոնք իրենց դրամին, գործին խոր ձգտողութեամբ կաշկանդուած, կը մնան հաւատարմի իրենց շրջապատին, աւանդութեանց, հակայ ջիւղերուն ու թանձր ու տգեղ շրթունքներուն, իրենց կարգին անդիտելով, մոռնալով իրենց տունը ու անուղղակի պատճառ դառնալով, որպէսզի իրենց կիները վիպական, հերոսանան մշտօրէն մշակուած ուժանձիք իրենց ձանձրոյթէն, հողին ձայներէն ու ծոցին նուազումներէն, փնտռելով terre à terre իրենց էրեկներէն անդին, ասոնց հակադրուած կիսակրթ, բայց օտար արուններուն կրկնեւորութիւն: Հիւսկատոսներ կամ թարգմաններ, ծովակալներ ու նաւապետներ, պանքաներու անօրէններ բնարանին կու տային սիրահարներուն: Վաճառականին, դրամի արկղին դէմ այս արհամարհանքը կ'իյնար հետեւանքէ Փրանսական վէպերուն, ինչպէս մերիւններուն խոր ասիականութեան: Թիշ շեղան թիւով այն համեստափայլ տիկիները, որոնք իրենց լիակական դատարարութիւնը արժեցուցին կեանքին մէջ, մեր պահպանողական քնկերութեան հարկադրելով իրենց թիթեւութիւնը սէրէ ու խելքէ, անողուստ ու ձրի արկածներու հետամտութեան մէջ

դեմքով պշրտնք, վսերում ու շամբշտնք, զաւկի հանդէպ ուրանալով կանխող սերունդէն պաշտպանուած սկզբունքներ, ու, «ոգի ի բոխն» հայածելով իրենց կերպերէն, լեզուէն, քառամթերքէն ու զուարճութիւններէն հետքն ու հոտը Ակնին, Կարինին, Կեօարիային, բիւրեղանայու, ոստանիկ, դշխոյական դառնալու իրենց ճիգին մէջ կանգ շտանդով անհեթեթին՝ ինչպէս ծիծաղելիին առջեւ: Զուր չէ, որ Ալեքսանդր Տիւմայի վէպերը սովորէն սուսջ Իգմիր Թարգմանուեցան: Ու զուր չէ, որ «Թշուառներ»-ը Թարգմանութիւնը գրագէտ օծեց պետական պաշտօնէի մը: Անդունել կայ այս սերունդէն բխող այժմու կիներուն եւ այն միւսներուն մէջտեղ, որոնք ազգատիկ տուններու մէջ մնացին հաստատար իրենց ցեղային դիմերուն եւ մինչեւ այսօր, կայաններու եւ վրաններու տակն անդամ կ'աշխատին մէկը ցեղին անմահ սկզբունքներուն, վսեմ ու անպէտ, բայց կ'աշխատին, երբ իրենց այլասերած քոյրերը, Պոլիս ու Իզմիր նմանելու համար I'USTAGIORI մէջ հրատարակուած վէպերու կամ խաղերու հերոսուհիներուն, արեւմտադոյն բռնկումներու իրենց պապակին մէջ, լքելին իրենց օճախները խօսքի, ձեւի եւ շարժումի առպաններէ բռնա՝ վար: Մեր տնիսայ արհամարհուած արուեստն էր, որ կը վարէր այդ խոսքները, թէ մեր կիներուն արդէն խաթարուած, օտարացած պայտարանականութիւնը: Ուր որ կիներու օտար վարժարաններ դործելին, հոն մեր ցեղը ընկրկեցաւ, հարուածուած խորագոյն արձա՝ աւել, մեր աղջիկները մեզի դարձան իբր այլասերումի պատրաստ խմոր, մեր ձեռքերովը, ուղեկովը, դրամովը, փելլու համար մեր դարեւոր, մեր սովորէն մեծ կաթմակերպութիւնը, ընտանեկան բարոյնուած: Կր ձգեմ երակը բարձրու ուսումնասիրողի մը ուղին, որ հետաքրքրական հաստատումներու պիտի բարձրանար, երեւոյթին ներքին ծայրերուն ծօտեցած աստեղ: Իրողութիւնը այն է, որ կանխող սերունդին մէջ նստատակած, առնուագն անողորձօրէն հեզուած մեր քանդարաւոր, բայց անկուտի արուեստագէտները նուաճումներ գործեցին դեղին մարգերու դեղին պուպրիկներու դեղին սիրտերէն: Անշուշտ ստանցմով դրողում մը չըլուած փառասիրութեան մը զոհաւորութիւնն անհաւան անոնք, որ զեռ մեր մաքին աղբիւրները փակաւորին եւ զարկած իրենց դրամի արկղներուն ու կը վարեն մեր միտքը, խմացականութիւնը, արուեստը՝ իրենց դարձապարտով: Բայց ժօտ է աստեղ, երբ կը քայքայուի այդ բռնապետութիւնը ու գարծը կը դառնայ գործը գործաւորին, ոչ թէ անոր կապալառուին կամ թշնամիին: Վէպերու այս եռակը, Եռանկարը, կը ձգտի այդ սկսած քայքայումը արձանագրել, արուեստի քանի մը ճամբաներու վրայով: Այդ ճամբաներէն սովորէն տիտքը, եղբրակները, յատկանշական ու բազմակողմանին Սահակ Պարզեւեանն է, խօսքի ու բառի կայտութեան ինքնակալ, տարիներով փարիզ ըրած, այսինքն՝ արուեստներու մայրաքաղաքին մէջ ջիղ-ջիղ օտարութեան, բիւրեղացած պրագէտը: Որ, ապրեցաւ, առանց որոշ գործի, առանց դրամի, կիներու քամակին ու սորվեցաւ, միշտ իբր մեծատաղանդ արձակագիր, կիներու մօտենալու անօրինակ, արդասարեք արձակութիւններ: Անիկա կը խօսէր սովորէն լեզու, այսինքն՝ աչքին ու ձեւին լեզուն, առանց բառի, ու էր հասկնալի, հետը, զուարթ: Ու անոր շարժումները, մատներուն եպիսկոպոսական կլորութեամբը ու տարփանքին խոր, խուլ Թրթիտովը դող կը հանէին հուկայ հոտող իւրենց էրկներէն յափրացած սիրտերը Պուրթէ եւ Մօփասան կարդա-

ցած մեր կիներուն։ Գրականութիւնը, մանաւանդ յարապակիքը, լը-
սքրեծուն զեւտին է, ուր կը սփռուին շեշտերը մեղքերուն, մեծ-մեծ,
ու ամբողջացում հետապնդող ճարտարադիտութեամբ։ Հերոսուհի-
ներ, վէպերէ, պատրաստ տարազներ են, զորոս անիկա կը հագնէր
քա՛րքով ու շնորհով, զեղանի կնիկի մը ու այդ կիները բողբոջող
դժբախտութիւնը վերլուծած ատեն, թեթեւ, անփաստ, բայց որոշ
հղանակով մը վերլուծումը կ'ընէր զէմինին սիրտին, ճարտար, խոր,
սպասով ու անփրկելի խաղարկութեամբ մը, ու կը խօսէր անիկա հա-
մեմտ, թափանցիկ, բայց մեղմորէն սքողուն ակնարկութիւններով
բնդլույց բարբառ մը, տեսակ մը արկած, հէնքին մէջ փարիզեան, չաա
«կանանչ», ինչպէս կը ճշդեն գաղիացիները, ու շատ ալ խողտիչ, մի-
սերուն վրայ փշտող սրութեամբ մը։ Որուն գրական յիութիւնը պատ-
շահեցուցեր էր սայուններու մեղայատուկ ոյրտին, միշտ այդ գիծէ
լուսեւորով գործարկուած, դարձեալ զխոյ ոչն քաղաքէն քրոնիկա-
դիր-պոնեկագիր մը, այդ օրերուն անմահ, հիմա քննուած, հետա-
խաղաղ, այդ անպարարութեան համար վարձատրուած երգիծագիր
տիտղոսով, հիւր րոշածը հայհոյանք էր կամ լրբութիւն, բառի բղջա-
խոնութիւն։ «Անմահ» ու սրամիտ պոնեկագիրը, երկու թիւոց իր
սիրտնարով, կանանչ ֆրանսերէնով ու սեռային ծաղկաստանէն փնջը-
ւած կալիպիւններով ակնդճուն աշխարհարարով, բայց մանաւանդ
սրունքներու անհասարար կարկինովը (խաղատունին պիտի ըսէր
«կաղարիւն») ծաղրի նիւթ էր ըրած ինքզինքը, ինչպէս մեր լեզուն
այդ հայ-յայթ տիկնիներուն, կըտանալով դանդաղ խնդացուցած
բլլալու ապառիկ հասոյթով, բայց անդիտակցարար ճամբայ հարձած
տաղանդաւոր արձակագրին, որ Փարիզէն հեռանալու ատեն Եթի-
պիան էր անուանած զժառանգ Մեղիմեք մը, երբ զայն կ'ընէր դուրս
իր մահճակալէն, անոր աշխատանքին արդիւնքը պարզելով իր քառ-
կին, օրհնելով կիներուն բարիքը։ Եթիպիան։ Հարկաւ, երբ Ե-
դիան Հիւկոն էր հրապարակին։ Բայց Եթիպիան, այսինքն՝ մար-
գը, որուն առջեւ զոց իմա շէր մեալու։ Անիկա Իզմիր հասնելուն
յաջորդ շարժումն իսկ ջախջախած էր իր հակայ, անբարեկամ ծաղրին
ներքեւ, խեղանդամ, ցաւողաբ, ախաւաքաւ ու յիմարցու պոնեկա-
գիրը, զայն արժանի անուանելով եթէ ոչ բոնաշաղկիկ, գէթ Ազգա-
յին Հիւանդանոցին մէջ «զարիպ»ի փառաւոր հոգեվարքի մը, ի փո-
խարէն իր մեծ-մեծ ծառայութեանց սա հոլապեղ, սա պշրուն, սա
խոռովիչ, հերարձակ զշխոններուն, միշտ յոնիականեան։ Անիկա նոյն
այդ շարժումն տարադրեց «օտար փետուր» երգիծագիրին յիշատակն
անդամ՝ զայն քշելէ հոգը Պոլիս, Եթի Գուլէ Ազգային Հիւանդանոց,
ուր պիտի սպասէր գրագէտէն պատգամուած փառաւոր շիջումը ու
ինք ինչու կրկէս։ Պարտաւագի՞ր։ Բայց անոր աստուածն էր անիկա։
Նորութիւն, անձ ու լեզու։ Մեղմորուած թեթեւ հիմուրով, որ իր
աստղալէզին տուրքն էր իրեն, գիշեր ու ցերեկ ուռնակով աշխատան-
քին, ու թեթեւ գալկութիւն մը կը ձգէր հաստ անոր միսերուն, ու
սլաշուպանուած իմացական երանդէ փարիզատուր ներութեամբ՝ որ
մշակուած, սնդմիրաբուած, պուպրիկուած սինիզմն էր ապրողին,
անիկա, քաան տարեկանին, աշխարհը դատած, շափած ու պակաս
դատած մարգարէի մը նման կը թթուէր զայրոյթէն, կրակ կտրելով
ապականութեան անագնէն, որ կը փոխարեւէր իր ժամանակի մար-
գոյ մեղսահղեղ երակները։ Ան «աւաքստած» էր սիրտը, զայն կոտ-


բերով, դուք գիտե՞ք ինչ պայմաններով, ու կը մուտար գեղանի տի-
կիներուն։

Սիրտը, որ կայ՝ շուշայ է,
Որ կտորուի՝ ճար չկայ...

Անշուշտ։ Ու աւելի խորունկ ու խորհրդաւորը, ան կ'ուրանար խել-
քը, տաղանդը, իրը սակայն, շնորհիւ ասպարէզին մեծամոլ յի-
մարհերուն, որոնք գրագէտի կամ արուեստագէտի իրենց տուրքերը
չալկած՝ զանոնք ցուցադրելու միտին հետամուտ, թուղթին ծուխէն
գիւղովցած, կը պտտէին խմբագրատունէ խմբագրատուն, հանդէսէ
հանդէս ու կ'արդարացնէին քաղքենիին, դրամաւորին արհամար-
հանքը իրենց քիթին ու բերին։ Ու աւելի սրտառու՛ւնք, անիկա իր
ընդհատումը, հոգիին անթեքելի յեղափոխականութիւնը, քաղքենիին
դէմ անհաճանջ իր ատելութիւնը գիտէր պարտկել ոչ-ընթացիկ
կեղծիքով, լուացողականութեամբ, այլ՝ ազնուական ու անմատոյց
համակերպութեամբ մը իր աղքատութիւնը արժեւորելով իբր բառ ու
առդանդ։ Չունենալով աշխարհիկ որեւէ հոգ, բացի փորէն ու սեռէն,
անիկա հնօրեայ իր փիլիսոփայի մը անկախութիւնը ժուռ կ'ածէր իր
ետեւէն ու, բացառիկ մա'րդ, իր բառերուն անապառ հմայքովը խոր-
հորդի մշուշ մը կ'արտարձակէր իր շուրջը։

(Շար. 5)

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ



Վ. ՕՇԱԿԱՆ

ՌԻՒԼԵՐՄ ՍԱՐՈՅԵԱՆ, ԵՒԱՅԼՆ

Սարոյեանի մահը անկիւնադարձ է հայ գրականութեան ու յատկապէս Սփիւռքի գրականութեան մէջ: Դէպքը կը նշանակէ, որ ամերիկացի հայերու գրականութիւնը իր անցեալն ու իր պատմութիւնը ունի այլեւս, հրապարակ իջած է, իր առանձին դասական հեղինակը ունի, գրական անողութեան մը հիմը դրուած է եւ մարդիկ կրնան այս հողին խառնուած մարդու մը ու փորձի մը յիշատակները ստեղծել, իրարու քով բերել ու նախահայր մը ունենալ: Ասանկը եկած է ուրեմն, որ անդիւրէն լեզուով հայ գրականութեան մը յոյսերը ձեւ առնէ անգլիալիը գրողներուն մտքին մէջ ամէնէն առաջ եւ այդ գրականութեան ծնունդը աւետուի մեղի բուն իսկ անոր մշակներուն կողմէ, հոգ չէ թէ անդիւրէն լեզուով: Այսօր հարիւրի կը հասնի թիւը այդ գրական մտաւորականութեան եւ տեղին է, որ այս օրերուն հարց տան իրենք իրենց խոհմտանքին, թէ ինչպէ՞ս կը սահմանեն իրենց ընդթը, ո՞վ են իրենք, ի՞նչ է իրենց ծագումն ու յանգումը, ո՞ւր է իրենց հաւատարմութիւնը՝ Հայութեան ու Ամերիկայի միջեւ: Եւ, մանաւանդ՝ հարց տան, թէ իրենց մայր ժողովուրդի գրուող մշակոյթի հետ անհրաժեշտ է մտերմանալ, ներսէն ճանչնալ, թէ կը բաւէ պատահական ծանոթութիւն մը, մակերեսային բարեկամութիւն մը: Այս երկրին մէջ փերլին տարիները բանալէն մը ծագած է, որուն երկարածողումը կրնայ ջլատել մեր ժողովուրդի գրական ճիւղը եւ ատոր իբր հետեւանք՝ Հայութեան դիմադրական ու ստեղծագործական ուժը: Կ'ակնարկուի հայագիր ու անգլիագիր հայ գրողներու հարցին ու այդ երկու լեզուներով դարգացող գրականութեանց յարաբերութեան, որ, իրականութեան մէջ, ինքնութեան տողնապ մըն է, մէկ կողմէ անոր տարատումին, միւս կողմէ՝ անոր փնտռութիւն: Անշուշտ շատ քիչ անգլիագիր հայ գրողի քունը կը փախի ինքնութեան այս տագնապին իրրեւ արդիւնք ու հաւանաբար հաղիւ քանի մը հոգի անոնցմէ դիտակից են նման խնդրի մը դոյութեան — պարագայ մը, որ սակայն ոչինչ կը փոխէ կացութեան պրկուածքին: Միւս կողմէ՝ քիչ չէ թիւը այն հայ գրողներուն ու գրող-բրոցներուն, որոնք առիթ չեն փախցներ Սարոյեանի հայկականութեամբ հպարտանալու ու անոր միջազգային վարկով ինքզինքնին պնդելու եւ որոնք, սակայն, Սարոյեանին ի-

բաւումը կը պահանջայ գրականութեան մէջ ընդունուելու: Ինչպէս կ'ընդհատուի, երկուստեք թերացումի ու անընդունելի պատենքներ կան, որոնց կառուցումին մէջ բոլորովին անմասն չէր Սարգիսը ինքը: Ինչպէս կը մատնանշէր վերջերս եւրոպացի հայ մատուցական մը՝ երկու կողմէ շահագործում կար հայերուն կողմէ իր համբաւին, իսկ Սարգիսանի կողմէ՝ իր հայութեան: Հայաստանն ալ ունեցած է իր մեծ բաժինը ատոր մէջ: Սառն Բաւումը:

Մինչեւ հիմա Սարգիսանի մասին միայն աւուր պատշաճ ներքող (հայաստանցիք պիտի ըսէին «հանձնախօսութիւն») լսեցինք ու կարգացինք հայ մամուլին մէջ: Շատ հաւանաբար ինդիքը հող ալ մնայ ու չըլլայ երբեք լուրջ, խոհուն քննութիւնը անոր երկին, ըստ մեր բարի սովորութեան: Մա՛նաւանդ՝ հիմա որ մեռաւ, ինչ գրոց-քրոց կայ հրապարակը՝ մէջտեղ կ'աւառ ու իբրեւ ազգային պարտականութիւն՝ պիտցածը-չպիտցածը թափեց թերթերուն մէջ: Տա՛ւր որ կու տաս... Կարծես չէր բաւեր այն միջոցին, առաւելը ներու շաճանդաղը, որ իր ողջուցը ինչ ստեղծած էր իր լուրջ՝ մէյ մըն ալ այս նոր յաւելումները կը սպառնան բոլորովին խեղաթիւրել ու անճանաչելի դարձնել անոր գրական խնդիրները: Այնպէս որ՝ այս հանգրուանին անտեղի պիտի չըլլար քանի մը արագ նոթեր իր մասին կապել թուղթին՝ պարզապէս կենդանի պահելու համար իր հարցը:

Ինչպէ՞ս ընտրել Սարգիսան երեւոյթը: Կայ անձը՝ իր կենսեքի գուշակող ոճով, յետոյ կայ առաւելը այդ անձին լուրջ եւ, վերջապէս, կայ երկը — երեք տարբեր իրողութիւններ, որոնց իւրաքանչիւրը իրեն յատուկ պրիմապին տակ դնելու է եւ առանձին քննելու է, որպէսզի զիրոյ շխանդարեն:

Անձը — գարաուդի, հաղորդական ու պարզունակ՝ որքան որ կարելի է դատել իր լուրջ թողած տպաւորութիւններէն եւ օխաներով յիշատակներէն, զորս թափած է իր անցած ճամբուն: Մէկը, որ օրերն ու քիչերները զմուր խմած է, վայելած դառնութիւնն ու հեշտանքը, մէկը, որ բարեք, ոչ ուրիշութիւն չողորձակած է իր լուրջ գտնուողներուն անխտիր: Ձեռքաւ, ինքնավստահ, կենսախայտ, հայ օղիւ հույ: Այս է պատկերը, զոր կ'ունենանք «Հանգիպումներ Ռիչարդ Սարգիսանի հետ» հատորէն, խմբագրւած Պօղոս Մնուպեանի կողմէ, Պէյրութ, 1978ին:

Սակայն երբ այս կերպարը գործին լոյսին տակ դնենք ու քննենք մօտէն՝ ուրիշ պատկեր դուրս կու գայ, աւելի ամբողջական ու մարդկային, առանց նախկինը ժխտելու: Ո՛վ էր իրականութեան մէջ Սարգիսան կոչուած պարզ մահկանացուն — կենսեքի անյաղ ախորժակ մը, անյետաճախի ու հրամայական պահանջ մը զգայնութիւններով՝ իրականութեան բոլոր առողջ աղբէն եւ միեւնոյն ժամանակ՝ կենսեքի ապրած չըլլալու վախ մը, մշտադաւն անթոթութիւն մը, որ կը կրծէ օրտն ու ինքնավստահութիւնը, եւ, վերջապէս, յիշատակներու, կարօտներու, անստոյգ տենչերու հապճեպ ամբարուած իմաստութեան մը լեռնակուտակ քառս մը, որ կը թաւալի մտքին մէջ — անանկ մարդ մը եղած ըլլալու է Սարգիսանը, դատելով իր գրածներէն: Եւ ինչ որ կը յաջողէր այս իրաբանցումէն զտուել, խտանալ ու գրչին կամ մատնեղան ծայրը հասնել, ինչ որ Սարգիսան կենսեքի անապատի մէջէն կրնար փախցնել, ապրեցնել քրկվայրկեան մը իբրեւ թափ, տողի ու պատկերի թրթրոցում, իբրեւ հառապայթում մթին բաւիղներուն մէջ գիտակցութեան — ա՛յդ էր, որ մեզի մնաց քրկի ձեւին տակ: Իսկ միւս ամբողջը, որ ըրաւ հանրութիւնը զուարճացնելու համար, բոլոր մեծխօսիկութիւնները, դերասանական կեցուածքները, փախապիտի թելադրականութիւնը, իր ամբողջ սարսափանականութիւնը, աւա՛ղ, զուտ կորուստ են ու գրեթէ չեն լահագրուէր դրա-

կանոնադրություն: Կասկած չկայ, որ ինք զորք չէր իր խաղին, գիտէր, թէ այդ ամբողջը Փոլիսը էր եւ այդ վատնումը՝ նուազագոյնի ինքնուրույն էր: Ստակային, ատով հանդերձ, մեծ էր մտնում: Մարդոց քիթին խնդալը ի վերջոյ իր գիտն ալ ունի խնդացողին համար ու Սարոյեան, անկասկած, իր մենութեան, առանձնութեան ու խոլումի պահերուն՝ գիտակց էր ատոր: Այս չէ՞ ճակատագրէրը ամէն դրոշի, որ թէ՛ կը փորձէ ապրիլ եւ թէ՛ ալ կը դիտէ իր այդ փորձը ապրելու եւ որ նաեւ հարկադրուած է իր այդ երկու արարքներուն գիտակցիլ եւ միեւնոյն ժամանակ այդ եղանքը բառի, տողի վերածել, ու տակաւին քայլ մըն ալ անդին՝ ամբողջ պարագայական, անհեթեթ ու անատրագիլի այդ կացութիւններէն հանել իմաստ մը, որ այլեւս կապ ալ չունի իր անձին հետ...: Սարոյեան, ամէն պարկէլա դարգէտի ոչնչ՝ փորձեց ընել անկարելին — կեանքը տարելու համը, հինէն մնացած կեանքի անկցուքները փոխել դրականութեան, այսինքն՝ տարել ու մոռնալ ապրիլը նոյն ատեն, տունց վատնումի ու կոտորակի: Եւ ուղիով դեռ պահել ապրող մը ըլլալու իր հիմնական էութիւնը, որ կարմիր պղպեղի ոչնչ, գէշ-մորթուած անասունի սարսափալի, չհաստացող արտայայտութեան պէս անմիջական բան մը ըլլալու է: Եւ որովհետեւ կարիք չէր այս ամբողջը ընել՝ ոճը պարզացուց, դիւրացուց, սկսաւ բառերը ճշդել ու տխարները պարպել, բոլոր բարդութիւններէ մերկացնել: Երեխայական դարձուց, կոփեց բոլոր խրթին ու խորհրդաւոր կողմերը մարդոց տաղանդներուն, Աստուած, Պատմութիւն ու խմաստասիրական բարդութիւնները հեռացուց իր աշխարհէն ու անսու, որ ամէն ինչ վերածուեցաւ մեղի ծանօթ դիւրասահ, հաղորդական ու հաճելի ստորանական աշխարհին...: Եւ շատ հաւանաբար ի վերջոյ ինքզինքն ալ համոզեց, թէ մարդիկ ու կեանքը բառած իր նկարագրածէն շատ տարբեր բաներ ըլլալու չեն: Այսպէս էր, որ այս աշխարհէն մեկնեցաւ, առանց կարենալ կեանքն ու արուեստը իրարմէ զատելու եւ մնալով անկուքէն ալ դժուո՞ր ու անօթի, հակա պատանի մը նման, որ դիտէն վեր տաղանդով ծանրաբեռն՝ ժամանակը կ'անցընէ հալածելով երկվայրկեանները, որոնք գոյնզգոյն ու քմայքոտ պղպղակներու պէս կը ծփային ու կ'երթային Աստուած գիտէ ուր...: Թորապէս մարդկային ու յաւիտենական է հաւատքը, որ ունէր իր անմահութեան եւ սակայն նոյնքան տարօրինակ է իր հարցումը մահուան դժբախտ ըրով — «ՆԱՄՈՒ ՈՒԱՅ»: Պատասխանը հոն էր — «ՆԱՄՔԻՄԼԻ»: Պատասխան մը, որուն արդի գրողները կը հանդիպին իրենց կեանքի մուտքին եւ ոչ, իրեն նման՝ ելքին:

Հաւանաբար անկեղծ էր այդ հարցումը, այդ միամտութիւնը: Ու հոս է Սարոյեանի հայկականութիւնը, այս է ճշմարտութիւնը հայութեան այնպէս՝ ինչպէս կը ճանչնանք զայն մեր մշակոյթէն — բարեմիտ ու գուրգուրոտ հաւատքը կեանքի միայն եւ որուն ուժը այնքան է, որ կը չըջնացէ մահուան յարատեւ անդահանքը: Եւ որ պարզութիւնը տարելու մէջ, տղայական յատահութիւնը մարդէն հանդէպ, դպրականութիւնը եւ մարդկայնութիւնը: Այս առաքինութիւններուն շնորհիւ է, որ Սարոյեան կ'ազատագրուի ու կը զետեղուի հայկական դրականութեան ու ժողովուրդին մէջ, եւ ոչ այնքան իր հայ ծնած ըլլալուն, հայութիւնն ու Հայաստանը ուրիշուն եւ կամ զղացական պահերու բերումով Հայաստանէն Թրքիոյն եւ քիչ մը ամէն կողմ հայ մշակոյթի ու հայութեան մասին յաճախ նետուած հապճեպ, պարագայական ընդհանրացումներուն համար:

Ասոնք բոլորը անկասկած հոյակապ արժանիքներ են ու կը փրկեն մարդը, գէթ հայերու աչքին: Սակայն չի բաւեր փրկել անձը — պէտք է տակաւին մեկուսացնել, անջատել զայն իր գրութիւնէն, ինքն ու իր առասպելը,

չընելու համար համբար: Որովհետեւ Կթէ կայ բան մը, որ հանրութեան տէքին կը պզտորէ գործին իսկութեան պատկերը, որ կ'արգելէ երկին ամբողջական ու ճշմարիտ գնահատումը՝ այդ ալ ինքն է, իր փոփոխիլ, տարաշխարհիկ անձն է: Ահաւասիկ մարդ մը, որ ամբողջ ՅՅ տարի ուղեց զբաղանութեամբ ինքնիրեն փաստել իր կեանքին իրականութիւնը, իր էութեան բարութիւնը եւ իր ինքնութեան գոյութիւնը: Իր բոլոր գործութիւններուն զազանի կամ յայտնի հերոսը՝ միայն ինքն է (ասիկա ճիշդ է անշուշտ ամէն զրոյի համար, սակայն Սարոյեանի պարագային գործը կատարեալ ճիշդեան կենսագրականն նկարագիր մը առած է): Օր մը հարկաւ աչքը-բաց ուստեոսդին մէկը մէջնեղ կ'իլլէ ու Սարոյեանի գործին վրայ իր գրեթէ անարտաճառին համար կը սկսի հաշուել, թէ ան էջ գլուխ քանի՞ անգամ ճեշ անձնական դերանունը կը գործածէ...: Սարոյեան սխալահարած է ինքզինքին, կը վախճայ շատ հեռանալու իր անձէն, մանաւանդ՝ իր պատմութեան կախարդուած դրախտէն, որ 70 տարեկանին դեռ կը վերապրի իր երեսակայութեան ու հաւանաբար զգայնութիւններուն մէջ: Առով հանդերձ, փորձելու է մոռնալ այս դրախտ անձը, հակառակ իր վաւերականութեան, հակառակ, որ այդ իսկ վճ հմայքը իր գրականութեան — ամէն ընթերցող այն տպաւորութիւնը կ'ունենայ, որ Սարոյեանի պատմութիւնը մ. երիտասարդութիւնը, նոյնիսկ չափահասութիւնը՝ Հեթաթային, իտէալական այն կեանքը եղած է, որուն կը հանդիպինք իր պատմութեան, վէպերուն ու թատերախաղերուն մէջ: Սարոյեանի ամբողջ արուեստը ու արհեստը կը կայանայ ասիկա համոզիչ դարձնելու մէջ, եւ մեր մտքին մէջ, իր հերոսն ու իր անձը նոյնացնելու մէջ: Այս նոյնացումին համար չէ՞ արդեօք այն խաղը, որ այնքան բնական ու ճարտար կերպով կ'ընէ՝ անդձնու համար իր անձին զառապելը, բան մը, որ աւելի վաւերականութիւն տայ իր վիպային կերպարին: Իր տիպարներուն զգացումներուն նախնականութիւնը, անոնց կենցաղին ու անգոնականութեան մէծ մասին պարզութիւնը, խօսակցութեանց առհասարակ միաժիտ բնոյթը, կեանքի ողորդութեան ու մարդոց բուն էութեան ծպտումը, այլակերպումը ու վերածուիլը բարի, անվնաս դերակատարներու — այս բոլորը շատ քիչ ազերս ունին աշխարհի բուն իրականութեան հետ, ոչ ալ իր կեանքին հետ:

Սարոյեանի ստեղծած «առաքելը», որ բարի, պարզ, ուժով մարդուն առաքելն է ու կը թելադրէ նաեւ հաւատք մարդկային խառնուածքի բնածին բարութեան վրայ՝ աւելի բան մը ունի, քան ես դէպի անմեղութեան աշխարհ մը վերադարձի կարօտը: Եւ շատ ալ կարեւոր չէ գրողին անկեղծութիւնը — այսօրուան գրապէսներուն առջեւ անկեղծութեան հարց մը չի դրուիր ու կ'ընդունինք արուեստագէտին դերասանութեան, կեղծիքին վաւերականութիւնը: Այս մթին աշխարհին մէջ կ'իյնայ նաեւ անոր ամբողջ զապախարարանութիւնը — Սարոյեան, հետեւելով իր վարպետին՝ Սարք Թուէյին, մարդկային ընկերութեան էրթիքին շրջեր, բնագոյնական ու փոխադրական մեծ տաղանդներ չեն ցնցեր իր հերոսները, սրտնք իրեն նման համակերպի ու պարզունակ մարդիկ են: Սարոյեան իր նէո-ռոմանթիզմը կը հակադրէ իջ՝ նիւթապաշտութեան եւ թէ ալ իմացապաշտութեան, կ'անգիտանայ ընկերային, յեղափոխական կամ պատմական մեծ շարժումները մեր դարուն ու՝ ո՛չ Աստուծոյ, ոչ ալ կրօնքի հարցերը անդ կը դնեն իր արամներուն մէջ:

Բայց ան վարպետ, նոյնիսկ ներշնչեալ զրոյ է: Իր գաղտնիքը — տալ իր վիպական հերոսին այնպիսի ապրումներ, մտածումներ ու հոգեբանական վիճակներ, ու այդ ընթացքում, որ կը խօսի, կը սիրէ ու կը տառապի, վերածել այնպիսի անսարսափի, անանձնական ու համամարդկային էակի մը, որ ա-

մէն ընթերցող կարենայ անոր հետ նոյնանալ ու ցանկալ այդ անձը հղած ըլլալ: Ու այս տիպարը ուրիշ մէկը չէ, եթէ ոչ գիւղաղնեւդական, հերոսապաշտական, ազնիւ, բարոյալից կերպարը, կամ, աւելի մօտ մեզի՝ աշուղական տիպարը, մարդը, որուն ցաւն ու հրճուանքը, ցանկութիւններն ու յիշատակները աշխարհ անկեղծութիւն ու հասարակաց, համամարդկային պիտի ըլլան, որ ամէն ունկնդիր, որ նոյն ա.ի.բ.ի վրայ է՝ իր ցուրը, փորձառութեան իր բոլոր գոնէ հոն, իրը նկատէ: Եթէ այս է Տշմարտութիւնը աշուղական արուեստին ու յաջող աշուղը այն անձն է, որ չէ սիրած ու սիրուած ու եթէ Սարոյեանի կեանքն ու երկը մօտ են մեր քանի մը մատնանումներու թելադրածին, ուրեմն՝ այս արուեստին ունակին օրէնքը դերասանութիւնն է, հսկայ, համայնական ու արուեստական ԵՍի մը կատուցումը: Անշուշտ շատ ալ կարեւոր չէ ուրիշ եւ ինչպէս գրող մը կը բերէ իր շինանիւթը, եւ ինչպէս ըսուեցաւ ասկէ առաջ՝ անկեղծութեան կամ կեցիքի հարց չկայ նոր բնութեամբով, ոչ ալ ենթակայութեան-ստորկայականութեան արժատական հակադրութիւն մը կամ ձեւի ու խորքի տարբեր Գալիլէոսներ: Քակայն կտրեւոր է գիտնալթ թէ ինչու Սարոյեանի երկէն բացակայ են մարդկային մեծ տրամերը, ինչու անոր իրապաշտութիւնը կը խորշի մերկ իրականութենէն եւ ինչու ան կը սքողէ ամէն ինչ, մարդիկ ու աշխարհ՝ բարոյական ու զգացական շղարշով մը: Բեմագրութիւն մըն է իր գրեթէ ամբողջ երկը, մտերմիկ, ինքնաբերական յարաբերութիւններու եւ խօսակցութիւններու ընթացք մը, Լիւմաւրով ու հեղեղանութեամբ բարեխառնուած, ու ինքը հապտեթաւոր մըն է աւելի, քան վիպասան:

Միեւնոյն ժամանակ ըլլաւ ըսել, թէ Սարոյեան կ'անգիտանար շուրջը թափուած մարդկային ողբերգութիւնը: Հաւանաբար, կեանքին տաքն ու պաղը ճանցած մէկը չէր կրնար անտեսել տիեզերական անհնթեթեթութիւնը ու մարդկային գոյութեան եղբրական նկարագրեր: Ինքը սակայն գիտակցորար ընտրած էր միայն այն իրականութիւնը, որուն դրական ու բարոյական ուժը, կեանքի բովանդակութիւնը կը գերազանցէին մահուան սարսափը: Ու մահը, մահուան անձկութիւնը, մարդոց ցաւը ու ցաւի երեւակայումը իր մէջ՝ մեղաւոր, բայց թաքուն թեմաներ եղած են իր գործին:

Պէտք չունենէք մենք մեզ խաբելու — Սարոյեանի գրականութիւնը իր ժամանակին մեծ աղմուկ հանեց ու արտակարգ դրաւութիւն ունէր ընդհին իր դիւրահաղորդ ոճին, բարոյական կլիմային եւ ընդհանուր լուսատեսութեան՝ հակադրուած Ամերիկայի տնտեսական համատարած տազնալին: Բայց այսօր, կէս դար ետք, փոխուած է կացութիւնը: Ո՛չ Ամերիկան, ոչ ալ հայութիւնը նոյնը մնացած են: Միայն ինքը, Սարոյեանը չէ փոխուած, ո՛չ անձը, ոչ ալ անասպելը: Իր սոճը, իր գաղափարները, սկզբունքները, կեանքի ու մահուան փիլիսոփայութիւնը, իր աշխարհայեացքը — գրեթէ անփոփոխ են ու վերածուած են առասպելին ալ աւելի բանի մը՝ խորհրդանշանի մը, որ իր մէջ կը խտացնէ երեք տարբեր իրողութիւններ — իր ապրած կեանքը, կեանքի սէրը ու կեանքի դրականութիւնը: Ապրելու այս կիրքէն, անապարանքէն, գէշ-մարտուած ապրումներէն ու գաղափարներէն, հեռն ի հեռ. իրարու քով բերուած այդ հոգեբանական երեք կացութիւններու թափէն է, որ կը բխին իր գրականութեան հիմնական թերութիւնները — ոճին միօրինակութիւնը, խորունկ ու լուրջ մտածումի հանդէպ իր արհամարհանքը եւ իր մտածումի ծանծաղութիւնը, զգացումներու անհակահիշիւ հեղեղը, որ ի վերջոյ սիրտ կ'անէ, գրական չէզոքութեան շուրջը կուտակուած ու աչք-ծաղկող ընկերային անարդարութեան հանդէպ, հակառակ անօր, որ իր ժամանակակիցներէն շատեր, ինչպէս Տոս Փասոս, Սթայնպէք, նետուած էին այդ

թեմայի նուաճումին, եւայլն: Մեր դարուն, օրինակ, արեւմտեան քաղաքակրթութեան իմացական ու բարոյական հիմունքներուն հանդէպ քննադատական կեցուածքը, բնկերութեան եւ ինստիտուցիան գէժ պայքարը, կրօնի ճշմարտութիւններուն հանդէպ սկիզբակ դիրքը մաս կը կազմեն Արեւմուտքի մտայնական գոտակարգին նկարագրին ու բացակայ են իրմէ: Սակայն ինչ փոյթ — իր 40 հատորները միշտ պիտի հրամցնեն իրենց ամօքէ փիլիսոփայութիւնը միջին ամերիկացիին ու իր մտերմիկ ոճին ու համակրելի հերոսներու իմաստութեան ծարաւ միլիոններուն: Ինչ փոյթ, որ ան պիտի վճարէ ահաւոր պինդ, որ կը վճարեն դործերը բոլոր գրողներուն, որոնք զիւրահաճ հանրութեան մը գոհացումով կը բաւարարուին — այսինքն՝ կորսնցնել իրենց տրդիականութիւնը, մէյ մը որ ճաշակները փոխուին: Սարոյիանի գործը արեւմտապահ էր, ու է՝ այսօր՝ դատան ժամանակներու աստեղ միջին մարդոց արտի էն խորուկ տկերէն բխող երջանկութեան, քիչ մը փայտի ու մարդկային ջերմութեան պահանջին: Յեղափոխական գրականութեան նման, որ կը սմբի, մէյ մը որ մարդկութիւնը վերանորոգելու խանդավառութիւնը արիւնի մէջ խեղդուի, անցնի փոթորիկը ու հանդարտին ջիղերը: Սարոյիանին գրականութիւնն ալ պէտք է դիմագրաւէ անյեղափոխական ժամանակներու փոսնդը:

Այս հարցական կացութեան արդիւնքը կախում ունի որոշ խուզարկումներու պատասխանէն: Ինչ որ կը կեդրոնացնէ մեր ուշադրութիւնը իր երկին յատակը դանդաղ մէկ-երկու կարեւոր հարցումներու — կըցած է հասկնալ մարդ էակին ճշմարտութիւնը, գիտակից է կեանքի ներքին հակասութեանց, ի՞նչ եղած է արուեստի իր ըմբռնումը: Ու ասելի մօտենալով դործին, դեռ կան երեք հիմնական հարցումներ, զորս ամէն գրական քննադատ կը փորձէ հարցնել ու պատասխանել — ի՞նչ կ'ըսէ այս գործը, երկրորդ հարցում՝ արժէք մը ունի՞ այդ ըսուածը եւ, վերջապէս, որքա՞ն յաջող կ'երպով կ'ըսուի ատիկա:

Այս քանի մը հարցումներուն պատասխանները երեւան կը հանեն որոշ ճամբարութիւններ, որոնք ասելի կը պղտորեն ցարդ ճանչցուած պատկերը: Հարցումին, թէ կը ճանչնա՞ր մարդ էակը ու իր գրականութեան մէջլէն կարելի՞ է մարդ էակի մասին վաւերական, ամբողջական իմացում մը հանել՝ պատասխանն է՝ հարկա՛ւ: Սարոյիան խոր ճանաչումը ունէր մարդկային բնոյթին, սակայն իր 40 հատորներու մէջ մի էլլէն կը զգացուի, թէ այդ հասկացողութիւնը մնացեր էր անբանաձեւելի ու խառնակ իր մտքին մէջ, ներշնչումի նման ապրում մը, որ ամէն բոլոր կը փոխուէր, ինքզինքին կը հակասէր ու շատ հաւանարար կը գուզադիպէր իր անձի սահմանումին. «Միշտ ամբարշտորդի կառկածը ունեցած եմ, — կ'ըսէ ան հատորի մը մէջ, — քէ աշխատանք կ'ընումը կ'ըմբռնէ, մեմէ՛ մարդերս, մեր վրիպումը արդարացրեցիս: Խախտեմ: Ամէն իմիջի մէջ ձայնագած եմ — ճանաչումի մէջ, հասկնալու մէջ, սիրտի մէջ, հաստի մէջ (...): Վերջ ու ծայր չունի ասիկա: Ամէն գործ տեսիլ մը փայտուտ է: Սակայն փնչէ՛մ — այն գիտակցութեան, քէ մարդ արարածին համար չկայ աստուածային շնորհ ու փրկութիւն, քէ մարդկային էակը ամբողջիկ ու անհեթեթ թան մըն է»(1):

Սարոյիան ծայրայեղութիւններու մարդ էր, որովհետեւ քիչ անգամ կըցած էր մտածում մը արամարանական ու հետեւողական կերպով զարգացնել: Ատոր համար հեռու կը կենար մտածումի գրականութենէն, եթէ այդ մտածումը իր ապրումներուն հետ անմիջական աւելցութիւն մը չունէր: Ահա ինչ գրած է Սամուէլ Պէթթի «Waiting For Godot» թատերախաղին մասին: — «Այս խաղին միւր» ոչնչութիւնն է: Ամէն ինչ ոչնչութիւն է ու ամէն ինչ

ռչինչի կը յամգի: Արդէն սկիզբէն ամէն ինչ աչիմէ էր, կեանքի նման, ման-
ւամ նման: Եթէ չես հաւատար այս ըսածիս՝ մի՛ հաւատար, սակայն միշտ
այդ իսկ վայրկեանին՝ կը գգաւ, թէ կը հաւատաս ու գիտես, որ այդ է մըշ-
մարտութիւնը» (2): Տարօրինակօրէն միամիտ ու խակ այս դատումը տուողը
ինքը թատերագիր մըն է...: Եւ, վերջապէս, «Մանկագութիւն» կոչուած
լուրջ հատորին մէջ, որ իր կեանքին է՛ն հասուն շրջանին գրած է, հազար
բանի մասին խօսելէ ետք, Սարոյեան կը գրէ, իր ասպարէզին ակնարկելով.
«Մաստիկ տար է մրցակցութիւնը գրական ասպարէզին մէջ (...) ու ասոր
վրայ խորհեցայ երկէ իրիկուն, երբ ամառնա ու գրութեան վրայ նետառած
սա նախադիմքը կարդացի: Լաւ գիտցէ՛ք, որ աշխարհի երեսին ինձմէ լաւ գը-
րող չկայ, լսել կ'ուզեմ՝ բոլոր մակարդակներու վրայ ինձմէ լաւ չկայ, մէջն
ստանդով նաեւ բծախնդրութիւնը, որ անգլիերէնը ակամայ ցիտալ չգրելու
հարցն է» (3):

Ամէնէն սխալ բանը պիտի ըլլար այս տողերուն անկեղծութիւնը կա-
կածի տակ առնելը: Եթէ Սարոյեան մէկ իտէալ ունի՝ այդ ալ իր ձգտումն է
անկեղծ ըլլալու, թանաւորաբար լուրջ, կարեւոր խնդիրներու մասին: Լուր-
ջի առեկու է իր ամբողջ գործը — նոյնիսկ այն գրութիւններուն մէջ, ուր
ան կը թուի գուարճանալ բառերու եւ յղացքներու հետ, իր դերին մէջ մտած՝
մեզ կ'ուզէ գուարճացնել, օրինակ. «Ընթերցող, ակամայ տար ըսածիս, մի
մեռնիր, չըլլայ որ մեռնիս, ուրիշ քանիք չունիմ քնքի, չ'արժեր մեռնիլ ի-
րապէս, մարդիկ այդքան ալ անկեղծ չեն, գիտցած եղիք, անկեղծ չեն, երբ
սնանկ կը ձեւացնեն, որ կը ցայտնի է ու մանաւանդ հասար, իրականութեամբ
մէջ շատ ալ ինքզինքն չէ, իրենց հարցնես՝ շատ ալ քնակամ բան էր, որ մե-
ռար (...) Բայց քնակամ բան չէ, քնալ չէ (...) Անոնկ որ՝ մի՛ մեռնիր,
չըլլայ որ մեռնիս, մեռ մը գտիր ու մի մեռնիր, եղած տեղը կեցիր, դեռ անա-
գին ժամանակ կայ մեռնելու, այս ամսան ու մեռնի ալ անցար ու լաւ մը մը-
տածէ այդ մասին...» (4): Այս տողերը իսկ չեն սակայն ու նոյնիսկ աւելի
լուրջ են, քան իր է՛ն պիտի տողերը վէպերու կամ թատերադրերու մէջ:

Ասկէ ետք, պէտք կ'այ հարցնելու, թէ Սարոյեանի գրականութիւնը
ինչ փոխադրութիւն ունի: Ինչ ըլլար՝ պիտի ըսէր — «Ոչ մէկ — կեան-
քի՛ փոխադրութիւնը»: Զուարթաբար, կենսունակ, առհասարակ լաւատես,
միամիտ ու, մանաւանդ՝ ինքնարտօն այս գրականութիւնը սակայն չէր կըր-
նար չհասնել նաեւ մարդկային օղբերգութեան խոր վիճերուն ու յատկենե-
րուն: Այս պարագան չի փաստուի անուշտ, միայն կարելի է զգալ ցաւին
դուին ու վախին թափը անոր տողերուն ընդմէջէն: Սարոյեանի հիմնուրը,
զուարթաբարութիւնը կը թուի ըլլալ գիտակցուած ու փորձով հաստատուած
պատենէ մը ճիշդ այդ օղբերգութեան դէմ եւ որուն շնորհիւ ան յաջողած է
դուին հետեւ պահել իր կեանքի ընթացքին: «Առողջ» գրականութիւն մըն է
Սարոյեանինը, ոճային, բարոյական ու գեղարվեստական խմաստներով, հակա-
ռակ իր հոկայական ուսմաննականութեան, թեքելիք ու կերպարային տը-
կարութիւններուն եւ, մանաւանդ՝ մտածումի բաժնի անբաւարարութեան
(այս «առողջ» բառը կը կործանուի շատ յարաբերական խմաստով կամ չի-
մաստով): Ոչ մէկ տեղ Սարոյեան ծաղրի, պարսաւի, գատապարտութեան,
նիմիզմի կամ սաքսալմի խօսք ունի մարդոց կամ ընկերային երեւոյթներու
հանդէպ, ոչ մէկ տեղ կը ծաղկէ ընկերութեան «անբարոյական» երեւոյթնե-
րը: Ինչո՞ւ — կեանքի նուաճումին ձգտող մարդիկ մը բարոյական կեց-
ւածքներ պէտք չէ որդեգրէ, կամ տակի ճշգրիտ բառերով՝ իր գործը կը
փորձէ վերականգնել կեանքի համատարած ՍՅՄ, անժխտելի, անառար-
կելի, անսակարկելի խանդավառութիւնը, որ կեանք կը կոչուի, իր բառե-

լուծման մեջ կ'ուզեք բանտել ապրելու արարքին գրական ու պատանեկան հոգե-
բուժության անհիգուսթեան մէջ գետնիցէն իրականութիւնը:

Կենսաբի փիլիսոփայութիւն մը անպարման տառապանքի շէղի մը պիտի
զգնայ, ուչ կամ կանուխ: Ինչ որ իրեն պատահեցաւ եւ զոր սակայն ջանաց
ծածկել, իր անձին մտերիմ խաւերուն մէջ պահել, ու չձգել, որ իր գրական-
նոթեան մակերեսը ելլէ, որպէսզի փրկուէր հերոսապաշտական ու առնական
ողին, քաջութեան բարոյականը եւ ամբիկեան «ուժի» միթը: Այսպէս է, որ
մահուան յաճախանքի թեման, որուն կը հանդիպինք իր վերջին տարիներու
դիրքերուն մէջ, ու իր այդ տղայական գուարթախոհութիւնը, որ 70ը տնց,
փորձառու մարդու մը մէջ քիչ մը բռնադրօսիկ կը հնչէ՝ կը թուին կրկին նը-
շանները ըլլալ տառապանքին, որ կը կրծէր իր աշխարհը ու իր անհաստա-
լի, անկարելի ու գէթ արտաքինապէս՝ անկործանելի լաւատեսութիւնը, որ
իրականութեան մէջ փիլիսոփայական կեցուածքի մը դերը կը կատարէր իրեն
համար: Մարդ այն ազատութիւնը կ'ունենայ, որ թէ՛ իր ստեղծած վիպա-
կան աշխարհով եւ թէ՛ ալ առողջ մէջ գործող համակրելի, միակողմանի կեր-
պով մշակուած հերոսներով՝ ան կը ջանար իր անբաւարարութիւններն ու
դազանի տառապանքը մեղմել, ուժ եւ ոգի տալ իր անձին, ամէն բանէ ա-
ռաջ: Ու ըստ երեւոյթին, չպարտուած, պատրանքները չկորսնցուցած, ցեխը
միւսին շխառնուած՝ հասաւ իր կեանքի վախճանին: Ասկէ զատ, հոս-հոն կան
նաեւ այն պահերը, երբ իր վէպերն ու թատերախաղերը կը դադարէին, շատ ա-
րագ մեղով մը՝ մարդկային մեծ տառապանքին, երկվայրկեան մը կը տպա-
ւորեն մեզ ու կ'անցնին: Եւ իր հիմունքն ալ կարելի է ասանել իբրեւ յուսա-
բակ, պատրանքաւոր ըլլալ մերժող, բայց անխուսափելիին համակերպած
մարդուն տրուած խնդուքը...

Արտաքինապէս պարզ, բայց ներքնապէս շատ բարդ, բանականութեան
ու անբանականութեան սահմանը ապրող, կեանքով ու մահուան վախով յոր-
դող, իր բարձրութիւն ուսմանափակումներուն գիտակից, խոցելի, նոյնիսկ
տկար, բայց արի ու տաղանդաւոր մարդու մը հետ է, որ դործ ունինք: Ու
հիմա հարց կու տանք — կը ներդի՞ ասանկ բացառիկ մարդու մը, քոր մեր
ազգային մշակութիւնի մեծերուն ու մեր հպարտութեան խորհրդանշաններուն
մասին անպատասխանատու յայտարարութիւններ կ'ընէ՞ ասանկ հիմնադր,
անձնական տեսակէտ ունենալու: Գեր-խանդավառ դրոց-բրոցներու եւ Հա-
յաստան գացած թուրիսթներու բերնէն լսած ենք ասանկ բաներ — սակայն
ի՞նքը ինչու պիտի ընէր...: Եթէ կը սերէր այս ժողովուրդը՝ պէտք է հա-
մեատ, նորընծայ արեւայի չափ խոնարհ ըլլալ, ընդունէր իր տղիսութիւնը,
առնուածքն սորվէր անոր լեզուն, փոխանակ ալ ու մախ շահագործելու անոր
միաժիտ գաւակներուն յաճախ անսակարկ, բուխ համակրանքը, ակնածանքը
իր հանդէպ: Ու խնայէր մեզի սապէս միւս, խակ խօսքեր — «Ամոնց մէջ (Մ.
Մեծարեց ու Պ. Դուրեան) Խորհրդակցութիւն խորհուրդը կը գգամ» (5), «Նարեկ
Իրկաբա ալ կը հասկնամք (...) Նարեկացի ալ կը խորհէր տիեզերքի, աշ-
խարհի, Աստուծո վրայ» (6), «Հայ մը քմալ չի կրնար հայ չըլլալ» (7), «Դաշ-
նակցականները եւ «Հայրենիք» (8) կը մերկայացնեն գիւղացիութիւնը: «Հայ-
րենիք» կը ճգնի աշխարհի վրայ ամենուրեք վառ պաշտի հայ ռզիթ» (8), եւ-
այլն, եւ այլն: Փաստօրէն, Սարգիսեան երբ հայոց մէջ գտնուած է՝ անձնա-
տուր եղած է իր յորդ գղացուներուն ու շատ խելացի խօսքերուն քով՝ նոյն-
քան անուրջ բաներ ըսած է: Իր մօտ մտածումը միշտ երկարած դումն է, օր-

(*) Պոսթ ըմբ հայրենիքին կ'ակնարկուի:

կանական շարունակութիւնն է իր անձին ու այս միացումը որոշ անկիւնէ պիտոյւն՝ առաքինութիւնն է մարդոց, որոնք կը հակադրուին մեր ժամանակներու իմացապաշտ ոգիին, բարձր մշակոյթի տէր ու սոփեհասացած գրող-մտաւորականներու մտայնութեան: Կապած է վեր է, որ վերի խօսքերը անկողն մարդու մը խօսքերն են, ինչպէս մէկ դերասանի մը, որ ամէն վայրկեան կը հսկէ իր խաղին վրայ ու զինքը դիտող հանրութեան վրայ: Սարոյեան տարերային ուժ մըն էր, հսկայ կաթսայ մը զդացումի, խօսքի խառնուած բառեղծումի, կեանքի բուխ տենչի, սիրոյ պայծառի, մարդկային կենտառու ջերմութեան եւ խաղի, քէֆի:

Ահա մարդը, իր զգացական եւ իմացական աշխարհը: Հիմա, հարցումը ետ կու գայ — Սարոյեան ի՞նչ կ'ըսէ մեզի իր գործով: Քանի մը բառով՝ հետեւեալը — պարզ, տարրական, կենսական ու անվերաճնելի՝ ճշմարտութիւններ կան կեանքի մէջ, մարդկային բնոյթը բարի է ու վատահելու է աջ բնոյթի յաղթանակին, ու կը բաւէ, որ մարդիկ քաջութեամբ, հաւատքով ու սիրով դարձնեն կեանքի քանի մը հիմնական իրողութիւններուն — երկիր, տուն, ընտանիք, բարեկամութիւն, աշխատանք, գեղեցկութիւն, երազանք, արուեստ, բարոյական ակզբունքներ, առողջութիւն, եւ այլն, որպէսզի ապրիլը իմաստ ստանայ ու համ ունենայ: Ատկէ աւելի ազատելու չէ կեանքէն: Ինչ կը վերաբերի մարդկային արկածախնդրութեան մեծագոյն թիւաներուն — Աստուծոյ, պատմութիւն, ճակատագիր, բնագոյնական ճշմարտութիւնները, մահուն եւ ծնունդի խորհուրդները, ազատութիւն, քաղաքակրթութիւն, եւ այլն — Սարոյեան առոնց հանդէպ միայն կողմնակի եւ պարզապական հետաքրքրութիւն ցոյց տուած է:

Ի՞նչ արժէք կը ներկայացնէ սարոյեանական մասնողութեան այս պատկերը, կ'արժէ՞ր ամբողջ կեանք մը տալ բացառապէս քաները անգամ մը եւս կրկնելու համար: Պատասխանը երրորդ հարցումին ծայրը կը գտնուի: Այսինքն՝ Սարոյեանի տրուած տին արտաքին իրականութիւնն է, որ կը փրկէ բնականութիւնը, մարդը աւելի շահեկան է, քան երկը: Ոճի բնածին ճարտարութեամբ օժտուած գրողն է ան, որ այդ արժանիքին բերումով հեռու կը մնայ մարդոց կեանքի անգութ, ահաւոր իրականութիւնէն, արժանիք՝ որմէ ինքն անգամ կը խաբուի: Այսինքն՝ ինքը ամէն անձէ ունի՞լ՝ գիտէ, թէ մարդկային այն զգացումները, որոնք կը կազմեն էութիւնը իր արուեստին՝ բառով ու տողով չեն արտայայտուիր եւ թէ գրական երկ մը կեանքէն տարբեր իրականութեան պատկեր մը, մասնականերու կառույց մը, հոգեբանական ճշգրիտ ու դատն վերլուծում մը կը պահանջէ առնուազն՝ հասնելու համար իր խոստումին: Ինքը, զգացումի մարդ, ինչպէ՞ս կը վստահի լեզուի հնարքներուն ու ոճային առաքինութիւններուն՝ իր յուզումը արտայայտելու եւ ապրելու համար: Ինչո՞ւ կը փորձէր անկարելին... Սկիզբի հարցումին պատասխանը «այո» մըն էր, որ կախում ունի ընթերցողի խառնուածքէն ու գըրականութիւնէն իր ակնկալածէն: Թէ ինչու կը փորձէր անկարելին՝ պատասխանը ինքը կու տայ, գրելով «որոշումութեան» զգացումի մասին: «Հաւանաբար, — կ'ըսէ Սարոյեան, — միմյնեւ գերեզման մամբայ մը գտնելն ու յարապարհելն մեզմէ իւրաքանչիւրիս կեանքը լեցնելու չափ աշխատանք կը պահանջէ, ու մամբայ ելլելու լաւագոյն եղանակը՝ չճգելն է, որ այդ երկար, երկար նամբան ու այդ վերջին կայանը՝ սոսկալի քափն, այլ՝ երկուքն ալ գրաւել լլլան, թէ՛ իքսիւ երեսնայ, թէ՛ ալ իքսիւ իրականութիւն: Արդէն, ո՞ւր կըլլանք մերքեւ, որ, եւ այդ մանապաղիւղ դէպի մահ՝ մեզ կըմար աւելի վայր: Երեսնայ, վայր մը, որ որեւէ ճիշտ տարբեր ըլլաւ մեր վերջին կայանէն: Որքան որ գիտեմք՝ ո՛չ: Լաւ ապրիլ՝ կը նշանակէ չմեռնիլ, կը նշանակէ գա-

լիք օրը այնքան լաւ պատրաստել, որ անոր ժամանակը ցաւ չպատճառէ մեզի, այլ՝ համոյճ մը, ինչպէս կ'ըսեն՝ ամակնկալ համոյճ մը անուագն, եթէ ոչ վայելի մը: Կատակի պէս բան մըն ալ այս է, անշուշտ, մարդկային մարմնի մէջ մտած՝ մարդկային էակ մը ըլլալնիս...: Կատակէ մը չեմք կրնար առնուագն պահանջել, որ մեզի արտօնէ իրմէ համոյճ առնել: Եւ յարկէ քով կայ կամ ի՞նչ կայ մարդէն զատ, որ այդ կացութենէն համոյճ առնէ: Իրապէս չեմ գիտեր, թէ կ'այ: Հասցա Աստուած, ամ համոյճ չ'առնե՞ր: Անշուշտ թէ կ'առնէ: Բայց ասիկա պարէն շատ կրկնուած է ու ինծի կը թուի, թէ քիչ մըն ալ անհիշող է: Իրականութեան մէջ, իրաքանչիւրս պէտք է ձեռք գտնայ՝ ու ծիծաղելի եւ խեղի չպատկող սա կացութենէն համոյճ առնէ: Լաւ ապրելու համար, սակայն, ամէն մարդ բանի մը հիմնական բաներ ունենալու է ու մերկայ կացութեան մէջ՝ մարդիկ մեծ մասով այդ բաները չունին, հակառակ անոր, որ ես ու դուք հասկնաքաք ունինք...»(9):

Ահա ո՞նք ու ահա խորքը — նոյն նիւթեղէնէն, նոյն նիւթէն շինուած, ախիւնքն՝ նոյն ընտանի, խորխորտն, շահապարուած զառեղու պահեստէն եկած կտաւով: Հետաքրքրական են Սարոյեանին վերելք ներկայացուած քանի մը գաղափարները, որոնք ապստոյնող դպրոցին ու գոյապաշտ փիլիսոփայութեան տյնքան կը մօտենան: Յատկապէս շահական ու նշանակալից է իր «The Time Of Your Life» թատերախաղը, ուր Սարոյեան կը թուի կանխել 15 տարեկոյ Սամուէլ Պէթթի հանրածանօթ խաղը՝ «Սպասելով Կատոյին»: Ահա այդ յատկանշական տեսարանը.

ձօ — ... Ոչ մէկ կարեւորութիւն ունի, թէ ով ես դուք կամ ինչ կ'ընես օրուան քանքընդ փամբերէն քանքերէն... ինչ որ ընես՝ կ'ես սպասելով կ'անցնի:

Մէրի — Սպասելով:

ձօ (Թեւեղ շարժելով ու քարծրածայն) — Եւ որքան անլի ապաստ՝ այնքան քիչ սպասելիք բան կայ:

Մէրի (Ուշադիր) — Ս'ի:

ձօ (Շարունակելով) — Աս տանկ կ'երթայ օրերով, շաբաթներով ու ամիսներով, ասանկ կ'երթայ տարիներով, տարիներով եւ յանկարծ կ'անդադրուի, որ բոլոր տարիները մեռած են: Ա՛յ սպասելիք բան չէ մեռացած: Միայն ժամացոյցիդ վրայի վայրկեանները մնացած են, բայց ոչ՝ ապրելու ժամանակը: Կան, չկան՝ միայն վայրկեանները, կայ եւ յիմարութիւնը: Գեղեցիկ, փայլուն եւ խելացի յիմարութիւնը... (10):

Այս անգոյս, նոյնիսկ յոռետես աշխարհաշայնացիին հիշող հակառակն ալ կը գտնուի Սարոյեանին մօտ, նոյն թատերախաղին մէջ...: Ահա ինչպէս տն կը ներկայացնէ Էրջանկութեան տեսարանը, Նիքին ձգտաքը.

«Նիքին պառը այլեւս տափուկ, քնական բան մը ունի, ամերիկեան այդ գոռունակ, համգտաւէտ մթնոլորտը, որ Ամերիկային այնքան յատուկ է: Անմեղ է ամէն մարդ ու բարի եւ իրաքանչիւրը իր պարտականութիւնը կը կատարէ եւ իրաքանչիւրին ըրածին մէջ ամերիկեան խոր միամտութիւն մը, հաւատք մը կայ: Իրարու հետ չեն մրցիր, զիրար չեն ատեր. ամէն մէկը կ'ենթադրէ իրմին կը վայելէ ու կը թողու, որ ուրիշներն ալ գայն վայելեն: Ամէն մէկը իր նակատագրին կը հետեւի այնպէս՝ ինչպէս որ կը խորհի, թէ պէտք է հետեւի, կամ ալ՝ լքած է իր նակատագիրը, այնպէս՝ ինչպէս կը զգայ, թէ պէտք է լքուի կամ մտապահութեամբ կու տայ գայն այդ վայրկեանին, այնպէս՝

digitised by A.R.A.R.®

իմպլետ կը կարծէ, թէ պէտք է մոռցուի անիկա: Հակառակ ամուր, որ ամէն մարդ ծայր աստիճան լուրջ է՝ կարելի է գզալ ժպիտի ու գուարթութեամբ մերկայութիւն մը: Կարելի է նաեւ գզալ, թէ իմպլետ մարդկային մարմինն ու ուզիմ կ'ազատագրեն իրենից գիրքն: Իրենց աշխարհի պարտադրած գնշումներէն, վախերէն եւ անհանգստութիւնէն ու կը մտնեն շատ աւելի բնական, մտերմիկ ու շնորհալի վիճակի մը մէջ...»(11):

Այս է կեղծ-գրախոսային, երեւակայական պատկերը, ուր կը ցուայ Սարգիսեանի երազներուն աշխարհը, բան մը, որուն անտրամադրելի, անմահ նշանները ամէն միջոցով, բարեկեցիկ սոսկալիցի իր մանկութենէն կը բերէ հասուն տարիքին, պատանութեան Միջին-մասուտեան մտայնութեան միջոցառումին մէջ ստեղծուած «միջոց», որ կը կառչէ իր մտքին մինչեւ մահ եւ որուն յանձնարարական համար հազար տեսակ երգեր, պատմութիւններ, հեքիաթներ ու կենցաղային սովորութիւններ ստեղծուած են իր շուրջը, տեսակ մը ապաքարոյ ճարտարարարութեամբ որուն շնորհիւ միջոցներ իրենց ապրումները կը ճարեն: Այս սուտ Դրախտը իր դրականութեանն ալ ենթահողն ու աշխարհն է ու մարդ չի կրնար չզարմանալ, թէ ինչպէս եւ ինչու իրեն նման թրծուած, կեանքին տաքն ու պաղը ճանցած գրող (արդեօք ճիշդ է «հասուն մարդու» այս վերադրումը եւ միջոցէն ունի Սարգիսեանը խալ, անճարակ, վանքէն փախած, խռչր ու թաց արեւոյ սարկաւազ մը չէ՝ պէշապէր կեանքի իրականութեան մասին եւ միջոցէն իր ամբողջ թիփը պէտքով-միտով, քաղուածքով, շնչով, կեցւածքներով, կրնորու, դրամի, քաղցրներու «հերոսութիւններով» դերասանական իրադ մը չէր, մեր ու իր աչքին նետուած...), իրեն պէս գրող մը կոյր մնացած է իր շուրջ դիպուած տառապանքին, անել, կոյր թշուառութեան մէջ տապալուող սեւ ու ճերմակ ցանկաւորներու քաղածին: Եթէ աչքերը կոյր էին՝ հուանաբար սիրտը դոց էր, եւ եթէ սիրտն ալ բաց էր՝ ուրեմն մարդոց պատրանքները շոյելու եւ քնացնելու, աճպարարի մը նման խաբկանք մը «ստեղծելու» եւ յետոյ քիթերնու խնդալու յանցանքով մեղադրելու էր զայն: Եւ ուրեմն, յետին նպատակը՝ իր համբաւին պատուանդանը, իր շահեղէ գլխաւորին աղբիւրը սպառնովէն էր՝ զրելով միայն ճերմակ, բարեկեցիկ ու առանձնանշանաւ զասակարգներուն համար: Հոյակապ — դրականութեան մէջ իրար յակասութիւն չեն խողար ու եթէ անբարոյականութիւնն իսկ արուեստով տրուած է՝ կը բաւէ ու կ'աւելնայ: Եւ եթէ մարդ ինչ Թոլսթոյի մը վիթխարի տաղանդը ունի՝ իրեն կ'արտօնուի հակառակը պնդել, ինչպէս ան ըրած է Շէքսպիրի մասին իր ծանօթ քննադատութեան մէջ: Սակայն ինչ որ սեւէ մէկուն չ'արտօնուի՝ այդ ալ մարդիկ խաբէն է, անոնց հաւատացնելն է, թէ ինք հասարակ մարդու շահերուն արտայայն է, մինչ իրականութեան մէջ ինք այդ անձը չէ: Այս երկուքէն ո՞րն էր Սարգիսեան:

Իտէալ աշխարհամաս մը, Ռեյանդիսի մը նման, հեքիաթէն դուրս բերելու, հաւատալի դարձնելու եւ դրական իրականութեան շատ մօտիկը դնելու եւ անոր գրեթէ զուգահեռ ցնցելու ճարտարութեան կը պարտի Սարգիսեան իր համաշխարհային համբաւը: Համեստ, պարզունակ մարդիկ են իր վիպակներուն, վէպերուն եւ թատերախաղերուն «հերոսները», որոնք առանց մեծ մեծ բառեր նետելու ալ ու ձախ, առանց ճակատադրական, ճգնաժամային կացութիւններ ապրելու՝ կը յաջողին երջանկութեան իրենց երազները համոզիչ դարձնել ու խաբել իրենց գիրքերը: Ու մեզ ալ, շատ յաճախ, իրենց հետ: Այս ալ տաղանդ եւ ուժ կը պահանջէ ու Սարգիսեանի բացառիկ առաքելութեան իրենցներուն մաս կը կազմէ:

Եւ, վերջապէս, ի՞նչ կը մնայ վառարկէն, տնձէն, ապրումէն ու շտապումէն: Լուկ Համբա՛ւ մը, պատրանքի մը պատրա՞նքը, ընթերցումի հանելիքի ժամերու յիշատակ մը, առասպելական հայու մը արտակարգ օրինա՞կը: Կը մնա՞յ գրական տարածք մը, որուն նուաճումին նետուէին գալիք սերունդները՝ բացառիկ արկածախնդրութեան մը սարսուռով վարակելով իրենց ժամանակակիցները: Պատասխանը պարզ է — չի՛ մը բոլորէն, անշուշտ, ինչպէ՞ս ինքը՝ Սարոյեան պիտի ուզէր: «Շատ ալ հոգս չէ՝ ինչ կը մնայ կամ ինչ կը մտածէ՛ք Գրծիւ մասին: Կարեւորը ես էի ու ես ալ եխմա չկամ» պիտի աւելցնէր շատ հաւանաբար, գիտնալով մահէն առաջ ու, մանաւանդ՝ հիմա, մահէն ետք, թէ ոչինչ կը վերապրի մարդ էակին անցքէն, ո՛չ աշխարհի, ոչ ալ երկնքի մէջ:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Յունուք, 1982

Ն Ո Ր Ե Ր

- 1 William Saroyan, **Not Dying**, Harcourt, Brace & World, New York, 1963, էջ 191-192:
- 2 William Saroyan, **I used to believe it, I had forever, now I'm not so sure**, Cowles edition, New York, 1968, էջ 101:
- 3 William Saroyan, **Obituaries**, Creative Arts Book Co., Berkeley, 1979, էջ 345:
- 4 Անդ, էջ 276:
- 5 «Հանդիպումներ...», իմը՝ Պ. Սմապեան, Համագրայիմի վ. Սէքեան ստալամ, Պէյրուք, 1978, էջ 62:
- 6 Անդ, էջ 277:
- 7 Անդ, էջ 216-217:
- 8 «Հայրենիք» օրաթերթ, 1981, Ապրիլ 18:
- 9 William Saroyan, **Obituaries**, էջ 326-327:
- 10 William Saroyan, **The Time of your life**, Harcourt, Brace and Company, New York, 1939, Արաք Բ., էջ 75:
- 11 Անդ, Արաք Ա., էջ 60:

Մ. Ս. Հ Ե Ր Կ Ե Լ Ե Ա Ն

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԸ ԱՅՍՈՐ

Մարդուն մտքին ու հոգիին սաղմնաւորման ընթացքին ծնունդ կ'առնէր Աստուծոյ դադափարը եւ, անոր հետ միասին, կրօնական ծէսերն ու արարողութիւնները՝ իբրեւ ներքին պահանջներու եւ անուղներու աղբիւր։ Հնադարեան այս ծէսերը — կրգ, պար, ամուսնք — հետզհետէ դարձանալով հիմը դրին թատրոնին, որ դարձաւ ժողովուրդներու ամենատիրած դրաղումներէն մէկը։

Հակառակ շարժապատկերի եւ Վիլտէօ-Բաւլէքսներու դարձացման, այսօր թատրոնը կը շարունակէ պահել իր կենսական իմաստն ու հետաքրքրականութիւնը ժողովուրդի բոլոր խաւերուն համար։

Լիբանանահայ թատրոնը, լիբանանեան տաղնապէն առաջ, իր բարդաւածման մէջ էր եւ ձեռք բերած էր համալիբանանեան առումով նախանձելի մակարդակ մը, յանձին յատկապէս երկարամեայ վաստակի տէր եւ ծանօթ դերասան Ժորժ Մարգիսեանի եւ անոր հետեւող սերունդին ներկայացուցիչներ Գրիգոր Սաթաւանի եւ Վարուժան Պարլեանի։

Լիբանանի տաղնապէն հետեւանքով, Ժորժ Մարգիսեան հազուադէպօրէն երեւցաւ լիբանանահայ բեմին վրայ եւ վերջին երկու տարիներուն, Արժանթինի եւ Գանատայի Համադղայինի վարչութիւններուն կողմէ հրաւիրուելով, իր ուժերը տրամադրեց այդ դաղութիւններուն թատերական կեանքի աշխուժացման ու ծաւալման։

Ամերիկայի Բարեգործական Միութեան կողմէ հրաւիրուելով, Սաթաւան իր մասնակցութիւնը քերաւ Նիւ Եորքի եւ Լոս Անճելէսի մեր բեմերուն։ Իսկ Վարուժան Պարլեան, այդ ժամանակաշրջանին Պէյրութի եւ Հալէպի մէջ քանի մը ժողովրդական ներկայացումներ տալէ ետք, ընդառաջելով Միփուրաւհայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի հրահանգին՝ մեկնեցաւ Հայաստան, ուր արժանի մակարդակով բեմադրեց երկու թատերապիւրներ։

Մէկ կողմէ Լիբանանի տաղնապէն առաջացուցած դժուարութիւնները եւ, միւս կողմէ՝ այս Լրեք դերասան-բեմադրիչներուն պարբերական բացակայութիւնը, զրալի հարուած մը տուին լիբանանահայ թատրոնին։

Նոյն պատճառներով ասպարէզը բաց մնաց նոր կամ նուազ փորձառու բեմադրիչներու եւ դերասաններու առկա, որոնք չկրցան եւ չէին կրնար գոհացում տալ նախորդներուն ստեղծած թատերասէր Հասարակութեան, իսկ նոր ասպարէզ իջածներէն ոմանք նպաստելէ աւելի վնասեցին եւ թատրոնին յաջողութեան, եւ ժողովուրդի դեղադիտական ճաշակի վարձացման։ Այս վերջինները բազմիցս ընդառաջեցան թէ՛ մամուլին կողմէ եւ թէ՛ հրապարակային ելոյթներու ընթացքին, թատրոնին անունով ժողովուրդին ներկայացուցած իրենց անարուեստ ու թեթիւ բեմադրութիւններուն համար։

Ու յանկարծ, թատերական նոր տարեւրջանին 180 աստիճան ետդարձ մը առաջացաւ անոնց ընտրած Նիւ Եորքուն մէջ, որոնք ունին լուրջ եւ ծանր բովանդակութիւն։

Ու յանկարծ, թատերական նոր տարեւրջանին 180 աստիճան ետդարձ մը առաջացաւ անոնց ընտրած Նիւ Եորքուն մէջ, որոնք ունին լուրջ եւ ծանր բովանդակութիւն։

Ա.— Կոկալի «Ենկեթի մը օրագիրը».

Բ.— Պէրճ Զէյթունցեանի «Աստուծոյ 12 օրը».

Գ. — Վահէ Քալայի «Գիշատիչներու խրախուսէր».

Դ. — Լեւոն Շանթի «Հիմն աստուածներ»:

Թեմայի այս ընտրութեան մէջ հասարակարգի դեր ունին թէ՛ լուրջ գործեր բեմադրելու հրամայականը եւ թէ լիքահասնեան ճշիշդ զգացերը, որոնք մեծ շարժերու հասան վերջին տարիներուն:


Դեռ անցեալ տարի, Ջոհնսոն Մազուսեան կը պիշէր բեմադրել լիբանանահայ կեսնորէն առնուած Վառլի մը, «Համբոյններ Պուրմէ Համուտէմ» խորագրով: Հակառակ բեմադրիչին ի գործ դրած ճիշդերուն եւ նիւթապէս խոստմանքի խորագիրին, բնագրին թեթեւութեան պատճառով ձեռնարկը մնաց միջակութենէն վար աստիճանի մը վրայ: Իսկ այս տարեշրջանին, կարծես մոռցրելու համար նախորդին զեղարուեստական գրիպները, ձեռք նետեց դժուար նուաճելի գործի մը, բեմադրելով Գոկոլի «Խեմքի մը օրագիրը», որ բարդ հոգեվիճակներով առցուն կուռ թատերակ մըն է, որ խելագարուող կերպարի մը միջոցով կը պատկերացուի տնտեսարար իշխանութեան ու քաղաքականացած ու աշխատանքի հասարակութեան կեանքը եւ այդ պատճառով գոյացած մարդկային տառապանքի տարբեր գրեւորումները: Մէկ զերանկատարով սկսող ու վերջացող «Խեմքի մը օրագիրը» բեմադրելով ու մենակատարելով Ջոհնսոն Մազուսեան իրապէս կը կատարէր յանդուգն փորձ մը, որ պիտի գտնար իր զոյգ շնորհներուն փորձաքարը: Մէկ զերանկատարով ամբողջ երեկոյթ մը լեցնելու փորձը նոր երեւոյթ էր լիբանանահայ հանդիսատեսին համար եւ Մազուսեանի գիտնալով հանդերձ, որ մեր հասարակութիւնը պիտի չկարենայ պէտք եղածին պէս գնահատել իր յանդուգնութիւնը եւ նիւթական վնասներու պիտի ենթարկուէր, չվարանեցաւ առնել այդ խիզախ քայլը, հրապուրուած գործին բովանդակութենէն, արուեստէն ու ինքնասպասութենէն: «Խեմքի մը օրագիրը» թատերախաղի պարագային, բեմադրութեան յաջողութիւնը սուսեւաբար կախում ունէր մենակատար-դերասանին ցուցարարած դերասանի իսկական շնորհներէն,



«Խեմքի մը օրագիրը»

որովհետեւ խենթացողի կերպարի յաջող մարմնաւորումը ի՛նք պիտի ճշդէր ներկայացման մակարդակը: Պէտք է ընդունիլ, որ Մազուսեան կարգ մը տեսարաններու մէջ իրապէս կը յաջողէր ստեղծել պահանջուած մթնոլորտը, ինչպէս շան ինտ ամենցած խեմքի մը գրոյցը եւ կամ դիմակներով տեղի ամենցող երկխօսութիւնը: Սակայն, «Խեմքի մը օրագիրը» բեմադրութեան տեղեկութեան ընթացքին, հանդիսատեսը ապրեցաւ նաեւ ոչ-լարուած պահեր, երբ ստեղծուած տաղանդաւալից կացութիւնը կը չէզոքանար խաղարկութեան եւ յատկապէս օրագիրներու ընթերցման կամ գրառման տեսն: Եթէ օրագիրներու պարագային զգացուած այս թերութիւնները դարձանուած ըլլային եւ տեղի չունենային թեքիք կարեւոր թերութիւններ, բեմականացումը կարելի էր համարել իրապէս յաջողած ներկայացում մը իր տեսակին մէջ:

Նկատի առնուած երկրորդ բեմադրութիւնը իրագործեց Երեւանի Քեղարուեստ-թատերական ինստիտուտը աւարտած Մուշեղ Մուրադեան, բեմադրելով



Ներդաշնակ եւ կուռ քեմադրութիւն մը՝ Փաշայի շէնքի տնային խորհրդարանը

Պերճ Զէյթունցեանի «Աստուծոյ 12 օրը» թատերախաղը՝ Փիկսը որոշ չափերով թիւն մը կը ներկայացնէր Պէյրութի Հասարակութեան Համար, բայց տնոնք, որ Սունդուկեանի անուան թատրոնին մէջ Հանդիսատես եղած էին դարձեալ Պերճ Զէյթունցեանի Հեղինակութիւնը եզոզ «Աւերած քաղաքի առապելը» փիեսին. Մուղալեանի ձեռնարկը կրնար պարզապէս միջոցաւ թուիլ, անո՛ր Համար, որ կեդրոնական կերպար Մեծն Տիգրանը (Մուշեղ Մուղալեան) ձախող նմանակութիւն էր «Աւերած քաղաքի առապելը» թատերախաղի գլխաւոր հերոսի՝ Արշակ Երկրորդը մարմնաւորած, Հայրենի տաղանդաւոր դերասան Խորէն Աբրահամեանի մեկնարանութեան։ Պերճ Զէյթունցեանի թատերախաղին մէջ թէեւ կը հնչէ տասներկու օրուան արքայական տառապանք մը, բայց Մուղալեանի բեմադրութեան մէջ հազիւ թէ նշմարելի էր տառապող կերպարի ներկայութիւնը։ Ուրեմն, թատերական տառապանքի գիպաւոր, մասնապէս բեմադրիչ, անփորձ եւ անմեղ դերակատարներ, կեղծ խաղա-

կութիւն, բեմական յարմարցուած ձեւաւորում ու բեմական աւելորդ շարժումներ, հետեւաբար՝ ձախող բեմադրութիւն ու, բնականաբար՝ նաեւ ձախող... Հայրենասիրութիւնը։

Ներկայացումներու շարքին սկսելէ առաջ, հարցազրոյցի մը ընթացքին Մուղալեան կը խոստանար ծախսալից (68 հազար լ. ո.) բեմադրութիւն մը ներկայացնել Հասարակութեան ու ներկայացման օրը, վարապօյրը բացօթեայն առաջ, մունետիկի կերպարով, ինքնամատուց յայտարարութիւններ կ'ընէր այն յաւակնութեամբ, թէ լուրջ, ծանր ու հայրենասիրական բեմադրութիւն մը պիտի մատուցուի Հանդիսատեսին։

Ինքնամատուցութիւնը, ի հարկէ, արեւտագէտի մը լաւ յատկութիւններէն մէկն է, պայմանաւ սակայն, որ անիկա չ'վերածուի ինքնախաբէնութեան, որ աղէտ կը դառնայ ենթակային եւ ինքնաբերաբար նաեւ անոր արուեստին համար։ Մուղալեան պէտք է գիտնայ, որ բեմադրութիւնը «ծախսալից» յայտարարելով ու մունետիկներու բերնին դատարարա-

չական ճառերը դնելով շատ հեռուները կարելի չէ երթալ եւ թատերական հասարակութիւն չի պատրաստուիր: Հասարակութեան մակարդակը կը բարձրանայ իրաւ ու ինքնուրոյն արուեստ ստեղծելով միայն:

Այժմ զարնող երկրորդ ներկայացումը Վահէ Քաչայի «Գիշտութիւնը խախտման էր» էր, բեմադրութեամբ՝ դարձեալ երեւանի գեղարուեստա-թատերական ինքնաշարժութեան շրջանաւարտ Վահէ Ատրուինի: Վահէ Քաչայ իր նիւթը առած է Համալսարանին երկրորդ պատերազմէն: Գերմանացիները գրաւած են Ֆրանսան: Բարեկամներ կը հաւաքուին Վիքթորի (Մանուէլ Մարգարեան) տունը, աւեր կը տը (Լանա Քոչարեան) ծննդեան տարեգարմը տօնելու համար: Ամէն ինչ լաւ կ'ընթանայ: Ներկաները ուրախ են, բայց յանկարծ դուրսէն կրակոցներ կը լսուին ու կը պարզուի, որ Ֆրանսացի ահաբեկիչներ գերման երկու գինուոր ահաբեկած են: Այս յուրը հաղորդող գերմանացի սպան՝ Կորթ Կառապախ (Վահէ Ատրուին), չէնքի իւրաքանչիւր յարկաւորութիւնէն պահանջած երկու պատանդներու կարգին, Վիքթորի տունէն եւս կը պահանջէ երկու պատանդ, ահաբեկուած գերմանացի գինուորներուն փոխարէն: Ներկաներուն, որոնք եօթը հոգի են, կը ձգուի պատանդներուն ընտրութիւնը: Կը սկսի անսպասելի սադնապն ու ահաւոր տատապանքը: Ի գերեւ կ'ելլեն գերմանացի սառնասիրտ սպան համոզելու բոլոր փորձերը: Հետզհետէ կը մերկանան մարդկային հոգիները ու բեմին վրայ կը ցուցադրուին ենթականերուն իրական բնաւորութիւնները: Ի յայտ կու գան մինչ այդ զոդարկուած գիծեր անոնց մէջ: Եսասիրտութիւն, անբարոյականութիւն, հիւանդութիւններ, դաւելու արամադրութիւններ, եւայլն: Բարեկամները կը թշնաման իրարու, մէկըմէկ կ'ոռորակեն մահուան իրրեւ թեկնածու ու բեմին վրայ կը թաւալի գիշտութիւնը: Ժողովուրդը մը: Երկու ժամ շարունակ եօթը անհասներ շիրտը դէպի մահ կը շրկեն՝ իրենց գիրենց փրկելու համար: Կ'ուզեն ապրել: Այս ճշգրտ ու անկանխելի պահը

digitised by

կը վերջանայ յանկարծօրէն, այնպէս՝ ինչպէս սկսած էր: Գերմանացի սպան ներս կը մտնէ ու կը յայտարարէ, որ ահաբեկիչները բռնուած են ու ներկաները ազատ: Կիրքերը կը հանդարտին, մարդիկ նորէն գիծակներ կը հագնին, կը մոռնան մահուան սարսափն ու գիրար ոչընչացնելու անասնական բնազդները, կը ժպտին իրարու ու այս անգամ գիտակցաբար կը կեղծեն եւ շատ բնականօրէն, որտի ամենայն հանդարտութեամբ կը շարունակեն իրենց կէս ձգած խորախճանարը:

Բեմադրիչը, Վահէ Ատրուին, չի գիտեր աւելորդ ու փակցուած գիտեմք, պահուածքներու, որ շատ բնորոշ էր մօտիկ անցեալին դիտուած լիբանանեան կարգ մը բեմադրութիւններուն, այլ կը փորձէ ներդաշնակուիլ փիեսին բովանդակութեան՝ իր ուժերուն ներած շափոյ:

Վահէ Քաչայ կ'ըսէ. «Իմ բոլոր գիրքերը կառուցուած են այս քեմային շուրջ, պատերազմի, սիրոյ քէ ցոյցադրի տագնապի»:


Այս պարագային, խօսքը պատերազմի տագնապին մասին է, զոր, այսօրուան իրաւանքան մղձաւանջը ապրած արուեստագէտի մը վայել կեցրածքով՝ Ատրուին կը յաջողի փոխանցել հանդիսատեսին:

Պէտք է ըսել, որ զլիսաւոր գերակատարները Լանա Քոչարեան (Պրիտիթ) եւ Մանուէլ Մարգարեան (Վիքթոր) իրենց գոհացուցիչ խաղարկութեամբ ապահովեցին ներկայացման վարկը, ապա, իր քաջ առեալ Վահէ Ատրուինին, համեմատաբար իր կարճ գերութ, ուր ցուցաբերեց զուսպ ու ըմբռնուած խաղարկութիւն մը, միւսները, հակառակ իրենց գերասանական շնորհներուն, իրարմէ քիչ տարբերութեամբ, նուազ յաջողութեամբ մարմնաւորեցին իրենց կերպարները:

Վահէ Ատրուին կ'ըսէ. «Թերաւ քիւններ շատ պիտի ըլլան... Նանե՛ լեզուական, մայնպէս՝ ստեղծագործական, նմանապէս՝ դերակատարման ու քեմադրական (...) կարեւորը ստեղծագործական ազնուութիւնն է»:

Այո՛, կարեւորը ստեղծագործական առնչութիւնն է: Եւ, բարեխախտաբար,

A.R.A.R.®



Ուշագրաւ Բայլ մը մանկական քառորդի սեմին՝ «Վար ու չկար»

իր մօտ կար այդ սղնու ութիւնը, յատկապէս ինք իր կարողութիւնները ժողովուրթեամբ պնդատելու ազնուութիւնը:

Իր այս բեմադրութեամբ, Վաչէ Ատրուսի ազնիւ յոյսեր կը ներշնչէ եւ մեզ կ'ուրախացնէ միջնակութենէն վեր բարձրանալու իր ճիգով, որովհետեւ այսօրւան լիբանանահայ թատրոնը ո՛չ միայն միջնակութիւններով կը տառապի, այլեւ կը հանդուրժէ Զարութիւն Գնդունիի բեմադրած Լեւոն Շանթի «Լին աստուածներ»-ը ունեւորած «բեմադրութիւններ», ուր ներկայ չէին ո՛չ Շանթի ստեղծած կերպարները եւ ոչ ալ մեծանուն թատերագիրին փիլիսոփայութիւնը «ճոր մեկնաբանութեամբ», ինչպէս յաւանած էր յայտարարել բեմադրիչը: Հակառակ Գնդունիի յայտարարութեան, իր բեմադրութիւնը ո՛չ կ'ընդգնցնէ, ոչ ալ վիճելի հարցեր կ'առաջացնէ հանդիսատեսին մէջ, այլ հանդիսատեսէն դուրս ելելու ցանկութիւնը զսպելէ ետք, կ'եզրակացնէ, թէ որոշ չափով գերասանի շնորհը ունեցող այս երկասարդը եթէ «ճոր» բառին իմաստը գիտէ ու կը փորձէ կիրարկել զայն, ապա «թատերական

մեկնաբանութիւն» հասկացողութեան իմաստը մտահարար կը վրիպի իրմէ:

Թատերական այս տարնշըման ցարդ բեմադրուած ուրիշ թատերախաղեր զանց կ'ընենք դիտակցարար, սակայն պատկերը ամբողջական ըլլալու համար չենք կրնար չլիւնել փոքրիկներու համար պրած ու բեմադրած Վաչէ Ատրուսի «Վար ու չկար» հեքիաթը: Թատերական անհրաժեշտ սեռ: Անտիքընթաց երեւոյթ: Մուգիչ եւ հետաքրքրական պատմութիւն: Գոհացուցիչ խաղարկութիւն եւ բեմական յաջող ձեւաւորում: Մանուկներու հարազատ միջավայրի ստեղծում ու, ամենակարեւորը՝ հանդիսատես մանուկներուն ապրած բուռն խանդավառութիւնը: Ու այս բոլորը՝ մտածուած ու հետեւողական ուղիւստանքի արդիւնք: Խոցելի մէկ կէտ միայն, — թերի լեզու: Մաքուրական է այս թերութեան դարձանումը, որպէսզի մանուկներուն մատուցուածը պատշաճօցուի անոնց բառամթերքին ու լեզուամտածողութեան ու կարելի ըլլայ աւելի մեծ ու մեայուն յաջողութիւններ ձեռք բերել:

**

Ինչպէս տեսանք, լիբանանահայ թատերական կեանքը այնքան նախանձէյթ վիճակ մը չի ներկայացներ այսօր: Եթէ մշակութային մեր միութիւններն ու պատկան մարմինները իրապէս մտահոգ են թատրոնով, կը հաւատան անոր առաքելութեան, տիրող անմիջեան կացութիւնը փրկելու համար հարկ է տէր կանգնիլ արժանիքներ մատուցող տղոց, որովհետեւ անոնք, մեր պայմաններուն իսկ հարկադրանքով, լուրջ դժուարութիւններու առջեւ կը գտնուին: Թատերական ուսման հետեւած ու վկայուած այս նոր երիտաւորդները կը տառապին լրացուցիչ մասնագիտանալու, այսինքն՝ բեմայարդարներու, երաժիշտներու, դիմադրարարներու, տարազազ տներու պակասէն: Այս մասնագիտանալու բերած օժանդակութեամբ, այս նոր ուժերը խնայած պիտի լայն իրենց միաժամանակ քանի մը դժուարեւոր հարկադրանքին բոլոր հետեւանքները, եւ պիտի ունենան իրենց իսկական կոչումին թափ տալու հնարաւորութիւնը:

Մշակութային միութիւններու եւ պատկան մարմիններու կողքին, թատերական շարժումներու մէջ կարեւոր դեր ունեցած է եւ այսօր ալ կը շարունակէ ունենալ մամուլը: Թատերական այս տարելիշանին բեմադրուած թատերախաղերէն առաջ, բեմադրիչներուն եւ մամուլայնախաղատակիցներուն միջեւ կայացած հարցազրոյցները անպայման իրենց անդրադարձը ունեցան թէ՛ հանդիսատեսներու եւ թէ՛ դերասաններու ու բեմադրիչներու պարապմունքին: Կը մնայ առաւել չափով մը որակ տալ այդ հարցազրոյցներուն, դուրս գալով բեմադրիչին անձնական քարոզչութեան նպատակը սահմաններէն: Ձմարանն ինչ կողմնակալ վերաբերումներ, ինչպէս, օրինակ, թատերական այս տարելիշանին պատահեցաւ առաջին բեմադրութիւնը իրադարձած Զորքայ Ծագուպեանին, որուն բեմադրած փիեսը («Խնձքի մը օրագիրը») ամէնէն աւելի պէտք ունէր ծանօթացման ու մեկնաբանման, որովհետեւ բարդ, բայց զեղեցիկ ու իրաւ ծաղիկներով բեղմնաւոր այս թատերախաղը,



Ջ. Ծագուպեան՝ Խնձքի դերով

որ տասնամեակ մը առաջ տարիներով բեմադրուած ու աղմուկ հանած էր եւրոպական եւ ամերիկեան բեմերուն վրայ, իր չօչափած յախտնական հարցերուն եւ արուեստի զօրեղ հնչեղութեան համար, որպէս հանդիսատեսին կը ներկայանար իբրեւ դժուարամտ չելի թատերախաղ մը: Յաւոք, «Խնձքի մը օրագիրը» ըստ արժանւոյն չլնահատուեցաւ ո՛չ քննադատներուն եւ ոչ ալ, նոյն պատճառով՝ հասարակութեան կողմէ:

Ինչպէս որ առանց քննադատի դրողը չի կրնար զարգացում արձանագրել, այնպէս ալ առանց թատերական մասնագէտ քննադատի՝ թատրոնը կը մնայ տեղաշարժի մէջ, որ ինքնին յետադիմութիւն կ'ենթադրէ: Կ'ընդգծենք մասնագէտ քննադատը, որովհետեւ մեր մտածումին մէջ անիկա մերկուծող, թափանցող, մեծ մըշակութի տէր անձն է, գործածած լեզուին նրբութիւններուն քաջատեղեակ, եւ ոչ թէ լեզուով ու ըմբռնումներով պատահական թատերասէր մը:

Կարելի չէ ճիշդ գնահատել թատերախաղ մը, առանց հեղինակին եւ անոր

դործերուն (առնուազն բեմադրած դործին) ծանօթ ըլլալու, միայն բեմադրութեան հերկայացումը տեսնելով:

Հիմա նախնաւոր բեմադրիչներէն մէկը՝ Ռեմոն ժպարա, անցեալ տարի, «Նահապետաբարձրութիւն» մէջ երեւցած բազմաժան գրոյցի մը ընթացքին, թատերական քննադատութեան բացառիկ կարեւորութեան վրայ շեշտը դնելէ ետք, կ'աւելցընէր.

«Թատերական քննադատութիւնը շատ կարեւոր է: Անկա մերկայութիւն է, որովհետեւ երբեք մերկայութեան բացակայութիւնը: Կը պատրաստէ մարդիկը եւ ամենց կ'ըսէ. «Երանք չգալիք»: Ես կ'ըսեմ, որ քննադատութիւնը մերկայութիւն չառնայ: Ետեւէ չապաշի Աշխարհ իրաւունք ունի, որովհետեւ ես պիտի ունիմ այն քննադատին, որ ինքի պիտի ըզէ՝ «տես այս կամ այն ժպարաւեր»: Վստահութիւնը անհրաժեշտ է եւ քննադատութեան, որովհետեւ տեսակ եմ, զիրար կ'ամբողջացնեն: Կայ Յանս Էրրիքսոն տեսակը», որուն գոյութեան վերջ տալը խորաբացարկանքն պարտականութիւնն է»:

Շարունակելով, ժպարա կ'ընդգծէ.

«Առաջինը՝ թեմէն քննադատութիւնն է, ինչ որ քիչ է եւ հազուադէպ: Այս մակարդակի քննադատը Ռեմոն ժպարայէն աւելի շատ բան պիտի տեսնուի, քան մասին, եղբայրացի մասին, եւ այլն...: Ան պիտի տեսնուի ըլլալ լայն մշակոյթի մը: Եւ այսօր, միայն շատ քիչեր մերկայ կը գտնուին թատերական մերկայացումներու, երբ օտար երկիր մը կը ճամբորդեն:

«Երկրորդ տեսակը ա՛յն քննադատ-

ներն են, որոնք իրենց կարծիքները կը յայտնեն քննադատական քաղաքականութեամբ. անմիջական, զգայուն եւ բանաստեղծական կարծիքներ են ասոնք, եւ ասիկա քննադատական լաւ ձեւ մըն է:

«Իսկ երրորդ տեսակը անմիջական, անզգայ քննադատութիւնն է, որ կը վնասէ ե՛ւ թատերական, ե՛ւ քննադատական գործին: Այլ խօսքով՝ սգեւտ քննադատութիւն մը, որ լայն տարածում գտաւ վերջին տարիներուն եւ որուն մեծ մասը կըրմար վերջ տալ: Վերջապէս, քննադատութեան մէկ պարտականութիւնն է յստակ կեցածով ճշդել քննադատութեան այս նիւթը տեսակին դէմ»:

Եթէ լիբանանեան թատերական քննադատները կարելի է բաժնել երեք խումբերու, որոնց մէջ կան նաեւ մասնագէտներ եւ իրենց ստորագրութիւնը յարգող քննադատներ, ապա մեր պարագային գոյութիւն չունի թատերական այն քննադատը, որ բեմադրիչին աւելի բան դիտեալ, առնուազն տեղեկ ըլլալ թատերական գրականութեան, անոր ազդեցին ու միջազգային պատմութեան եւ քիչ թէ շատ ծանօթ ըլլալ մնացեալ արուեստներուն:

Եթէ Սփիւռքը այսօր չունի պատրաստուած ու մասնագէտ քննադատներ, եղած ուժերուն ճշգրիտ եւ բժախելի օգտագործումով կարելի է բարձրացնել որակը մեր մամուլի արուեստի էջերուն, ինչպէս նաեւ կազմակերպել հաւաքներ, գրոյց-քննարկումներ, որոնք եթէ ակունկայուն չպատշաճ չեն բերեր թատերի զարգացման, առնուազն կ'աշխուժացնեն եւ որոշ նպաստ մը կը բերեն մեր թատերական եւ մշակութային կեանքին:

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ ԵՒ ՏԱԳՆԱԴՐ

ԻՇԱԿԵԼԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀՈՂԵՐ

Պէտք էէ կարծել, որ Նոր Վէպը մահացու հարուած մը տուաւ աւան-
դական վէպին եւ գրական անոր տեղը: Ընկերահոգեբանական, տիրային,
պատմական եւ արկածախնդրական վէպերը միշտ կը տիրեն հրապարակի վը-
րայ, ինչպէս կը տիրէին անցեալին: Անոնք համրու եւ սպրուտ կը հա-
թայթեն իրենց հեղինակներուն եւ անոնց շարքերէն կը նշանակուին տարուան
մրցանակաւորները՝ Նոպլէիան, Կոնքուր, Փուլիցըր, Ֆեմինա, Եւայն: Հրա-
տարակիչները կը գոյատեւեն ու կը բարգաւաճին շնորհիւ այդ վէպերուն եւ
ընթերցող հասարակութիւնը կը կարդայ ու կ'ըմբռնէ զանոնք:

Սակայն աւանդական վէպի կողքին սկսած մն հասակ նետել ու բար-
դաւոր մարդու զգայնութիւններուն եւ հետաքրքրութիւններուն: Վիպական
այդ նոր սեռերը կը կոչուին ռատիկանական, գիտաբեւեակայական եւ ֆոլթիք:

ՈՒՐՄԱՓԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ոստիկանական վէպը մօտ հարիւր տարուան կեանք ունի, քիչ նկատի
տանենք անոր սեղմ իմաստը, իսկ եթէ լայնցնենք անոր իմաստին սահմանը
եւ նկատի ունենանք այն վէպերը, որոնց մէջ կը տիրեն ոճերն ու սարսափը,
այն ատեն կրնանք անոր կեանքը հրկարել մինչեւ երկու հարիւր տարի:

Իր բառացի առումով, ռատիկանական կը կոչուի այն վէպը, որուն մէջ
գաղտնի ռատիկան մը, կամ տեքսթիւ մը, ռատիկանութիւնը եւ կամ ար-
դարութիւնը ներկայացնող անձ մը կ'աշխատի լուսաբանել խորհրդաւոր ոճի-
րի մը ծալքերը եւ գիմականործել ոճապարծը:

Վերջին հաշուով ռատիկանական վէպը մէկ շարունակութիւնն է Մի-
ջին դարու ապօքտական վէպերուն, որոնց մէջ հերոսը՝ անվախ, մաքուր եւ
փորձառու անձ մը, այս պարագային ասպետը, պայքար կը մղէր Զարին գե-
րազանց ուժերուն եւ սաղարանքներուն դէմ՝ պաշտպանելու համար սկարը, ա-
նիքաւուածը եւ անմեղը, եւ կամ՝ այդ շարին ճիւղաններէն փրկելու իր ու-
րած կրնը:

Սկզբնական շրջանին, այսինքն՝ երկու հարիւր տարի առաջ, ռատիկա-
նական վէպը առանձին եւ անկախ սեռ մը չէր հանդիսանար: Անոր սերմերը
կարելի է նշմարել ԺԹ. դարու սկիզբներուն եւ կէսերուն ընկերային եւ ար-
կածախնդրական վէպերու հիւսքին մէջ: Պէտք է ըսել, որ սարսափի եւ ոճի-
րի վէպերը ունին աւելի հին ու փառաւոր անցեալ մը:

Առնենք հեքիաթները: Անոնք ընդհանրապէս լաւ վերջաւորութիւն կ'ու-
նենան, երբ վերստին լուծուած ու սահմանուած են մանուկներուն, բայց իրենց
նախնական ձեւին մէջ անոնք իրաւաւոր են, անգուր եւ վայրագ:

digitised by A.R.A.R.®

Քանի որ օրինակներ :

Մեզի ծանօթ բոլոր հեղինակներն մէջ կան լար ուղիներ, անգութ հակառակ ու դեռեր, որոնց դէմ կը պայքարի մարդը եւ յաճախ զոհը կ'ըլլայ անոնց : Մարդը կը ներկայանայ իր կատարեալ անմեղութեան մէջ՝ մանուկի կերպարանքին տակ :

Աշխարհի ամէնէն ծանօթ հեղինակներէն մէկը Վալտեր Գլխարկիլին է : Աղջնակ մը, կողով մը ուտելիք առած՝ այցելութեան կ'երթայ իր մեծ մօր տունը, որ հիւանդ պառկած է : Գայլը, որ կը սերէ թարմ միսը՝ թակարդ մը կը լարէ : Կը մտնէ մեծ մօր խրճիթը, կ'ուտէ զայն ու կը պառկէ անոր անկողինն մէջ ու կը սպասէ աղջնակին, որ կը ներկայանայ իր կողովով : Աղջնակը կը զարմանայ մեծ մօր կերպարանքէն եւ անոր հարցումներ կը հարցընէ : Եւ վերջին հարցումին եւ պատասխանին վրայ :

— Մեծ մայրիկ, ինչո՞ւ ահապէք աչքքան երկար են :

— Քեզ ուտելու համար, դաւա՛կս :

Գայլը կը նետուի աղջնակին վրայ ու կ'ուտէ զայն :

Այս է հեղինակը՝ իր բուն ու նախնական ձեւին մէջ :

Սակայն կարելի է այսպիսի պատմութիւն մը պատմել մանուկներուն :

Ուտի, հետագային անոր այս իրապաշտ վերջաւորութիւնը փոխարինուած է Հեփփի Էնտով մը, որ հետեւեալն է : Երբ գայլը կ'ելլէ անկողինէն ու կը նետուի աղջնակին վրայ, որսորդ մը, որ հկած էր սպաստան խնդրելու այս հասմեստ տան մէջ, պատուհանէն կը տեսնէ եղելութիւնը եւ, հրացանը քաշելով՝ կը սպաննէ գայլը :

«Կապոյտ-մօրուսը եւ իր բառասում կիները» հեղինակն մէջ, վերջին կնոջ հօթը եղբայրները կը հասնին ժամանակին, կը սպաննեն հրէշը եւ կը փրկեն իրենց քոյրը :

Եթէ հեղինակն անցնինք իրականութեան, հին ժամանակները, ինչպէ՞ս նաեւ Միլին դարը հարուստ փնայազան եւ խորհրդաւոր ոճրագործներով, որոնց արարքները կրնան հարուստ նիւթ հայթայթել սարսափի վէպերուն :

Գրական գեանի վրայ՝ սարսափի տառջին վէպերը սկսան լոյս տեսնել ԹԻ. դարու վերջերուն : Անոնք շատ քիչ անգամ ներշնչուած են իրականութենէն : Հեղինակները կ'ապաւինէին իրենց երեւակայութեան՝ ստեղծելու համար սարսափի մթնոլորտ մը :

Հետագային, սակայն, երբ հին արխիւները կը դադրին անձեռնմխելի դառնալէ, երբ երթեւեկի եւ հաղորդակցութեան միջոցները կը դառնան մատչելի, հետաքրքիր դրապտները կը տեղեկանան իրական դէպքերու եւ իրական դէմքերու, որոնք աւելի զարհուրելի են, քան իրենց երեւակայածը : Այդ զարհուրելի դէմքերէն յիշենք երկու հատ՝ Ժիլ Թէ, Փրանսացի իշխան մը, որ իր զղեակին մէջ քաշուած՝ կը զրազէր հոգեհարցութեամբ եւ հարիւրաւոր մանուկներ զոհեց՝ անոնց արեան մէջ գոհացնելու համար իր կիրքը եւ սատանային պահանջները : Երկրորդը՝ բոլորիս ծանօթ Տրաքուլան է, բուժանացի իշխան մը, որ թուրքերուն դէմ պայքարեցաւ՝ կրկնապատկելով անոնց մայրաքույր իւնները :

Մեզի ծանօթ սարսափի առաջին վէպին հեղինակը անգլիացի արկին մըն է՝ Անն Ռատքլիֆ, որուն «Ուտով փայլի դիւանակիմ խառնուրդները» գործը լոյս տեսաւ 1794ին : Այս մարգին մէջ սխալ հանդիպինք անգլիացի շատ հեղինակներու եւ, մասնաւորապէս՝ հեղինակուհիներու : Այս երեւոյթը կը բացատրուի իրիտանական կղզիներու մթնոլորտով : Չմբան գիշերներու երկարութիւնը, քաղաքներն ու գաշտերը ծածկող անաղական մշուշը եւ ծովու մութ ջուրերուն մոլեգնութիւնը կը ստեղծեն վտխի եւ անապահովութեան մթնոլորտ :

յարտ մը, որմէ ազդուած են մասնաւորաբար մանուկներն ու կիները: Միշտ մնալով անպիտան գրականութեան ծիրին մէջ՝ յիշենք սարսափի եւ ոճերի բանի մը ուրիշ դործեր: Ուրիշը Կոտուրինի «Փալէպ Ուրիշամզը», Թոմըս աբ Քուինսի «Էվանգելիստ», Ճէյմս Մայքըլի «Մայքըլի Վարմէն», Էսկար Ալըն Փոյի «Տարօրինակ պատմութիւններ», Տիքընդի «Պիլի Կառազը», Ռոպերթ Լուիս Սթիվենսընի «Տոքթ. Յեֆլի եւ մըսքըր Հայտը», Նոյն Հեդինսկին «Ռեթրոսփեկտիւ», Պրամ Սթոքըրի «Տրաֆալգա», Էւայլը: Այս բոլորն ալ արտադրուած են փթ. դարուն, առանց մոռնալու Մերի Շելլին, Հըռլանկուր բանաստեղծին կողակիցը, որուն գրիչին կը պատկանի սարսափի դասական եւ աշխարհահռչակ «Տոքթ. Ֆրանկֆելդայն» վէպը:

Անկո-աւքսոն գրականութեան կողքին եւ անոր բաղդատուելու միակ արժանի գործերը կը պատկանին ֆրանսական գրականութեան, որմէ յիշենք Բանի մը գործեր. Վիտորի «Յիշատակներ», Պալպաքի «Ճեռակիւսք», Լէօ Լեսֆոնի «Դիակատման կանաչ աչքեր», Փոնսոն տիւ Թերայի «Ռեֆլեկտիւ», Պուսկոպի «Կոլորաւծ ձեռք», Էւայլը:

Մինչեւ փթ. դարու կէսերուն, երբ շնորհիւ Կապրիոյի եւ Էսկար Ալըն Փոյի ձեւ պիտի առնէր ռոմանական վէպը, ան վէպերու մէջ տիրապետողը ոճերն է ու սարսափը: Հոն գործող մութ ուժերուն դէմ պայքարողը արհեստավարժ տեթերթիւը չէ, այլ՝ արդարաւէր անհատը: Յաճախ վէպին զխաւսր անձը ոճրագործն է, մանաւանդ՝ երբ այդ ոճրագործը ունի համակրելի կողմեր:

Ձուտ ոճերի ու սարսափի վէպերու կողքին՝ կան հանրածանօթ վէպեր, որոնց մէջ կը գործեն մութ դէմքեր: Այս վէպերէն յիշենք Էսկար Ալընի «Փալիդի Գազանիքներ», «Թափառական երեսն», Վիքթոր Հիւկոյի «Թշուառանքներ», Տիւմայի «Մոնթֆրէսիս», Տոստոեւսկիի «Ոմիր եւ պատիժը», Պալպաքի «Երթնալուր Կարգ մը», Տիքընդի «Մեծ անկախութիւններ», Էւայլը: Թթ. դարու կէսերուն, մամուլին մէջ տեղի ունեցաւ աննախընթաց յեղաշրջում մը, որ նպաստեց նաեւ մամուլին բարդաւաճման, նաև վիպասաններու արտադրութեան, նաև բարօրութեան, Հրապարակագիր Էմիլ աբ Ժերարէն կ'որոշէր ինքնիշխան օրաթերթներու գրիչը եւ տանապատեկաւ անոնց տպագրանակը: Ան իր օրաթերթին էջերը լայն կը բանար փխալիսիքի եւ կը հաստատէր թերթին դրութիւնը: Թերթները կը վճարուէին տողի հաշուով: Հեղինակներուն շահը կը պահանջէր, որ բազմապատկէին իրենց վէպերուն էջերը:

Այս դրութեան քաջաբերուած՝ Փոնսոն տիւ Թերա ստեղծեց առասպելական իր հերոսը, որ լոյսի եւ խաւարի խառնուրդ մըն է եւ պատմեց անոր արկածախնդրութիւնները անհատնում հատորներու մէջ:

1866ին լոյս կը տեսնէին երկու վէպեր, մէկը՝ աշխարհահռչակ, միւսը՝ գրեթէ անծանօթ: Առաջինը Տոստոեւսկիի «Ոմիր եւ պատիժ» էր, իսկ երկրորդը՝ Էմիլ Կապրիոյի «Էլընալտ անեղծուածը»:

Էմիլ Կապրիո կը նկատուի հիմնադիրը արդի ռոմանական վէպին՝ իր խորհրդաւոր ոճերով, իր կասկածելիով եւ, մանաւանդ՝ իր տեթերթիւի արկարարով, որ այս պարագային կը կոչուի Էմիլիէթտ Լըֆոն եւ որ նախատիպարը կը նկատուի բոլոր Շելլոյի Հոմերոս, Մեկրէնի, Հերքիւլ Փուստոնի, Նիք Քարթլընի, Նիք Փիլիքթընի եւ Հարրի Տիքընի:

Ռոմանական վէպը նկատուի սարսափի եւ ոճերի վէպերուն մէկ ձիւղը, թէեւ այնքան կարեւոր, որքան ծաղիկ բուռը, զայն ուսումնասիրելէ առաջ, լարունակենք մազիցիլ այդ բունէն յեր:

Սարսափի եւ ոճերի վէպերուն մէջ մարդ արարածը մեզի կը ներկայանայ անստեղծութեան մէջ թափառող անստեղծութեան բնազդներով, ուր չափին եւ

բարեխիտ գաղափարը կը մնայ երկրորդական: Հոն կտն գաղափարները եւ անոնց գործերը: Յիշէ այս բոլորը առնենք բառացի իմաստով, պիտի բռնենք, որ մարդ-դաշակին համար գերագոյն ոճերը պիտի ըլլար ուտել իր նմանները: Քաղաքակրթութեան երկիրներուն մէջ մարդակերութիւնը կը նկատուի նողկալի եւ աններելի ոճեր, մինչդեռ Ուկրաինայի բնիկները ամենայն գոհունակութեամբ կ'ուտէին իրենց թշնամիներուն միսը:

Իր նմաններէն ետք, մարդուն մեծագոյն թշնամին պէտք է փնտռել առնառններու աշխարհին մէջ: Այդ առնառնները ընդհանրապէս երեւակայածին կամ առասպելական հրէշներ են, կամ մեղի ծանօթ եւ անփնտս կարծուած շատ մը կենդանիներ: Հոս եւս ժամանակային տաղանթիւնը կ'երթայ համեմարել խոկար Ալլան Փոյլի, որ իր հուշակաւոր «Զայդ Եմիլի» Մոսկովի լիւթագիմ Վէյց պատմութեան մէջ, ոճագործի դերը կը վստահէր ճարպիկ ու խոշոր կապիկի մը: Այս սեռի դասականներէն մէկը անպայման որ Արթուր Գոնըն Տոյլի «Պատմական զամբռ»ն է, եւ կամ «Կիտաւար Երիզ»ի մարդասպան օձը: Հարկաւ ընթերցողներէն շատերը տարբեր աչքով կը դիտեն իրենց շուրջը թեւածող ճնճաւորները եւ աղանդները, այն օրէն ի վեր, երբ ականատես եղան Ալֆրէտ Հիլթոֆի «Թռչունները» բանդագործական ժապուէնին:

Այս մարդասպան եւ ընտանի կենդանիներու կողքին՝ վիպասանները ծընունդ տուած են երեւակայական եւ սարսափազդու հրէշներու, ինչպէս Մօլիէրի «Մարտի» «Մահաւան քիթովի»-ն, եւ կամ՝ Փիէլ Ժոնպէի «Մարդը», որ իր տոտիկներուն մէջ բռնած է մարդ մը եւ կը ծծէ անոր մարմինը: Այս ուր-դը ունի 15 մեթր հասակ:

Սարսափի վիպասանները, որոնց երեւակայութիւնը սահման չի ճանչնար, փորձած են ուսում մը ընել հայելիին միւս կողմը, այսինքն՝ մեղ լրբ-ջապատող խորհրդաւոր ու անտեսանելի աշխարհէն ներս: Հոս եւս դրօշակի-րը կը կրօնէի խոկար Ալլան Փո, եւ յաջորդները՝ Գոնըն Տոյլ, Կասթոն Լըրու, Կիյոմ Ափոլիէր, եւ այլն: Այս գործերուն մէջ կը պատահին դէպքեր, զորս բացատրելու համար պէտք է անցնել հայելիին միւս կողմը, այսինքն՝ տրամաբանութեան սահմանէն անդին:

Այդ անբնական աշխարհին անորոշութենէն խուսափելու համար, շատ մը վիպասաններ դիմած են մեր երկրապետի սահմաններէն դուրս եւ ներս հրաւիրած ան հեռաւոր մոլորակներու տարօրինակ քնակիչները, երբեմն՝ մարդկային երեւոյթով, երբեմն՝ տարօրինակ եւ զարհուրելի արարածներու կերպարանքով: Այս ճիւղը անպատ Նիւթ հայթայթած է շարժապատկերի բեմադրիչներուն: Այս ժապուէնները յաճախ ներշնչուած են տաղանդաւոր հեղինակներու վէպերէն, բայց աւելի յաճախ պատրաստուած են չափի վրայ եւ ազդատ պիտանքներով:

Ժիւլ Վերնի անջրպետային ճամբորդութիւններէն ներշնչուելով՝ Ուէլլ դրած է իր մոլորակային վէպերը, որոնք դիտա-երեւակայական սեռին պատկանելով հանդերձ, կը մնան սարսափի վէպեր. «Առաջին մարդիկը լուսնին վրայ» եւ, «Մահաւան»՝ «Մոլորակներու մակաբնակարարը», որ կը պատմէ Երկրագունդին գրաւումը արտերկրային արարածներու կողմէ: Ուէլլ հեղինակն է նաեւ «Ամենամեծի մարդը» վէպին:

Սարսափի եւ ոճերի վէպերը կը կազմեն վիպագրութեան մէկ մասնա-յատուկ ճիւղը եւ կ'ընթանան տարբեր ուղղութեամբ: Անոնց մէջ տիրապետողը չարն է՝ իր ամբողջ աշխարհութեամբ: Վիպասանները դիտեն, որ գործ մը հետաքրքրական կը դառնայ, երբ անոր մէջ կազմաւոր շարին ու բաշխին միջոց: Սարսափի վէպերու պարագային շարին դէմ պայքարողները երբեմն պարզ մահկանացուներ են, երբեմն՝ դիտականներ: Այն պարագային, քիչ շարին դէմ պայքարողը պատահական մէկը չէ, այլ՝ ուստիկան մը կամ ար-

Հետազոտութեան տեղեկութիւն մը, այն ատեն կ'ունենանք ռատիկամակամ վեպ մը:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՎԵՊԸ

Իր արդիական առումով՝ ռատիկանական վէպի մը կառուցը եւ զարգացումը Հետեւեալն է. կը գործուի խորհրդաւոր ոճիւր մը, որուն Հեղինակը կրնայ բոլորովին անծանօթ ըլլալ կամ մաս կազմել խումբ մը կասկածելիներու, որոնք բոլորն ալ պատճառներ ունին այդ ոճիւրը գործած ըլլալու: Այս տեղեւորածը յուսաբանելու եւ ոճրագործը գիմակազերծելու համար անբարար կը նկատուին ռատիկանութեան գործածած դասական միջոցները: Այդ պարագային, հրապարակ կ'իջնէ՝ կարող ռատիկանապետ մը կամ փոքրամասն տեղեկութիւն մը, որ օժտուած է գիտելու, տրամաբանելու եւ վերլուծելու արատակարգ ձեւերով:

Ռատիկանական վէպի նմանքներ գոյութիւն ունին դասական մեծ Հեղինակներու գործերուն մէջ, բայց այս երեւոյթը պատահական է եւ մաս կը կազմէ գործունէութեան ընդհանուր Հիւսիսին:

Ռատիկանական վէպերու յատուկ տրամաբանելու եւ վերլուծելու մեթոտին տալիս անգամ կը հանդիպինք Վոլթէռի փրիսոփայական «Ջաւորիկ» վէպին մէջ: Բարեկրօնի թագուհիին ամէնէն սիրելի շնորհը եւ նախընտրած ձին կորուստած ըլլալով անտառի մը մէջ՝ զինուորները փնտռուքի կ'ըլլին: Սպասնէրէն մէկը կը հանդիպի Ջաւորիկին, որ կը ճեմէր այդ անտառին մէջ: Սպան Ջաւորիկին կը հարցնէ, թէ արդեօք տեսած է թագուհիին շնորհը կամ ձին: Ջաւորիկ պահ մը կը խորհի, կը դիտէ շուրջը, կը նայի գետին, կը քննէ ծառերուն ճիւղերը եւ կը պատասխանէ.

«Անք փնտռած շունը քան մըն է, կարմախասակ, ունի երկար ակոնցներ, մայի թաքերէն մէկը կազ է, եւ վերջերս ծննդաբերութիւն ունեցած է: Գալով ձիուն՝ անկիւ քայքայասակ է, արագակալ, ամբակները փոքր են, պոչը ունի երկուսուկէս մերթ երկարութիւն: Պայտերը արծաթ են, իսկ սամբին եզերքները՝ 11 քարաք սսկի»:

«Ո՞ր կողմը գացին թագուհիին շունը եւ ձին, — կը հարցնէ սպան:

«Ձեմ գիտեր, — կը պատասխանէ Ջաւորիկ, — որովհետեւ գանձեմ երկուսէն չեմ տեսած»:

Համոզուած, որ Ջաւորիկ սուտ կը խօսի եւ գողցած է այդ թանկագին կենդանիները՝ սպան կը ձերբակալէ Ջաւորիկը եւ գալիս կը տանի դատաւորին:

Դատաւորանին առջեւ բարեկրօնցի այս ճերմոց Հոլմը կու տայ Հետեւեալ բացատրութիւնը.

«Ո՞վ արդարութեամբ լայտեր, ըստ սովորութեամբ, կը ճեմէի անտառին մէջ՝ խորհելով մարդկութեամբ ֆակտագրին մասին, երբ հեղին վրայ նշմայնեցի փոքրիկ թաքերու հետքեր եւ անոնց միջեւ թեթեւ ակօս մը: Նշմարեցի նաեւ, որ թաքի հետքերուն երկու կողմը հողը ակուածի պէս էր: Նկատեցի նաեւ, որ մայի կողմի թաքերուն հետքերը հաւասար խորութիւն չունէին: Այս բոլորէն եզրակացուցի, որ մեր օգոստոսիան թագուհիին շնորհը անցած էր այդ տեղէն, թէ՛ անոր մայի թաքերէն մէկը կազ էր, ունէր երկար ակոնցներ: Թաքերուն միջեւ երկարոց թեթեւ ակօսը կը փաստէր, որ անոր ծիծելը ծանր էին, այսինքն՝ լեցուն կաքով, ինչ որ կը նշանակէր, թէ անկիւ մագուկներ ունեցած էր քանի մը օր առաջ»:

Ջաւորիկ նոյն ձեւով բացատրեց ձիուն Հետեւեալն մեկնաբանութիւնէն բազան տեղեկութիւնները: Դատաւորները Հիմաան Ջաւորիկի դիտելու եւ տրամաբանելու կարողութեան վրայ եւ բաականացան զայն դատապարտելով դրամական տուգանքի մը:

«Զատիկ» ժիլիսոփայական վէպը լոյս տեսած էր ԺԸ. դարու կէսերուն:

Պէտք է ուստում մը ընենք մինչեւ ԺԹ. դարու կէսերը՝ հանդիպելու համար ոստիկանական առաջին վաւերական վէպին, որ կը կոչուի «Լըբուժ առեղծուածը» եւ դործն է իմիւր Կապորիոյն:

Անգլիացի հռչակաւոր վիպասան Ռոպերթ Լուիս Սթիվենսըն կը հաստատէ, որ՝ «ոստիկանական վէպին մոտան ֆրանսական ծագումով տիկին մըն է», հաւանաբար ակնարկելով իմիւր Կապորիոյն, որ ստեղծած էր այդ սեռին բոլոր մեքանիզմը եւ տիպարները:

Ուրեմն, ոստիկանական վէպին հայրը իմիւր Կապորիոն է, իսկ նախահայրը՝ իտալացի Ալբին Փոն, որուն քաղաքը Եւրոպայի, որ Փո արդէն բաժնուած էր այս աշխարհէն, էր Կապորիո կը ստեղծէր պատմութեան առաջին արհեստավարժ տեթերթիւր, որ կը կոչուի ոստիկանական Լըբուժ:

Իտալացի Ալբին Փո ո՛չ միայն ունէր հարուստ երեւակայութիւն եւ զգայնութիւն, այլեւ՝ զննելու եւ վերլուծելու անսահման կարողութիւն: Փոյն զործերուն մէջ կը հանդիպինք ոստիկանական բնոյթ ունեցող կարգ մը պատմութեանքներու՝ «Զոյգ ռեյնիսեր Մորկ փողոցին մէջ», «Մերի Ռաթի գաղտնիքը» եւ «Պոլցուած նամակը», որոնց առեղծուածները կը լուծէ անաքէոր տեթերթիւ մը՝ ասպետ Տիւփին:

Իբր դրող՝ Կապորիո չի կրնար բաղդատուիլ հանճարեղ Փոյի հետ, լայց պէտք է ուրանալ զէպերը հետաքրքրական դարձնելու եւ մթնոլորտ ստեղծելու իր իւրաքանչեւ տաղանդը: Գրականութեան մէջ Կապորիո բացառապէս ճամբան, որի կէ պիտի քաշէին իր հռչակաւոր յաջողութիւնը՝ Արթըր Քոնան Դոյլ, Կասթոն Լըրու, Մորիս Լըպլան, Փիթըր Էնքի, Տեյլը Էնքիթ, Լույսին:

Քանքն Տոյլ, որ բժիշկ էր ասպարէզով, նախնորեց նուիրուիլ դրականութեան եւ զրեց բազմաթիւ արժէքաւոր վէպեր, որոնք կորսուեցան աստիկանական վիպասանի իր համբաւին պատճառով: Ոստիկանական Լըբուժի եւ ասպետ Տիւփինի օրինակին վրայ, Քանքն Տոյլ ստեղծեց տեթերթիւ վերադասան տիպար մը՝ Ենրիք Էպլմօ, պաշարին, յատկապէս, վերլուծող միտք մը, որուն ժառանգական գիծերը շատ տկար են: Մէկ խօսքով՝ կոտարեւազործուած ռապր մը, որ կը լուսարանէ ամէնէն թնճկային ոճերները եւ կը վերլուծէ ամէնէն խրթին առեղծուածները: Իր գործերէն յիշենք «Պատմութիւնի գամբը», «Զորսերու նշանը», «Երկրաչափին քառասունը», «Սարապի հովիտը», եւայլն, եւայլն:

Կասթոն Լըրու, որ արհեստով լրագրող էր, դարձաւ վիպասան. ան ձեռ ստեղծեց տեթերթիւ տիպար մը, որ ճարտիկ, գործունեայ եւ խելացի թղթալիկ Ռալֆ-Կայլին է: Ենորհիւ Ռալֆ-Կայլին միջամտութեան՝ կը լուծուին ամէնէն խորհրդաւոր եւ քառանկի առեղծուածները, ինչպէս՝ «Ինքիմ սեմ-Լակիմ խորհուրդը», «Անագգետ տիկնոջ բայը», «Օփիքայիմ ուղտակամը» եւ «Հեռունքիմ եկող մարդը»:

Նոյն շրջանին հրապարակ կ'իջնէ ուրիշ վիպասան մը, Մորիս Լըպլան, եւ իր գործերուն մէջ կամաց-կամաց ձեւ կ'առնէ նախապէս յիշուած երկու հերոսներէն բոլորովին տարբեր տիպար մը՝ Արսէն Լյուփին, որ կը մարմնաւորէ ասպետական անօրէնի հետաքրքրական եւ համակրելի տիպարը: Ենրեք Հոլմը՝ իր մեթոտնիով կը փաստէր պաշտօնական ոստիկանութեան մաշած գործելակերպին անկարողութիւնը: Արսէն Լիւփին՝ իր յաջող միջամտութիւններով կը փաստէ նոյնը: Ենրեք Հոլմը կը գործէ օրէնքին հետ, կը պայքարի շարագործներուն դէմ եւ կ'ապահովէ արդարութեան յաղթանակը: Արսէն Լիւփին կը գործէ օրէնքին դէմ, բայց չի վնասեր անմեղներուն, տկար-

ներուն եւ համեստներուն: Ան եւս կը պայքարի մեծ շարագործներուն եւ ոճ-
րագործներուն դէմ եւ անուղղակի կերպով կ'ապահովէ արդարութեան յաղ-
թանակը եւ երեւան կը հանէ ոստիկանութեան անկարողութիւնը:

Վերոյիշեալ երեք մեծ վարպետներէն ետք, հրապարակ իջած են մեծ
թիւով հեղինակներ, որոնք, շնորհիւ իրենց ստեղծած տեթիքերի տիպար-
ներուն՝ կը վայելեն համաշխարհային համբաւ: Յիշենք Ակաթա Քրիսթին եւ
իւր հարկւրաւոր վէպերը, որոնց մէջ կը դործէ տեթիքերու Հերթիլ Փաւարո,
Տեշիլլի Համլէթ եւ իւր Անմ Սփետը, Ռէյմընտ Չեմալը եւ իւր Ֆիլիփ Մարկոմ,
Փիթըր Զէյնի եւ իւր Լեմմի Քաշմը, Լիսի Զարթըրիգ եւ իւր Սայմըն Թեմփ-
լարը:

Վերոյիշեալ բոլոր դրամատիկները կը պատկանին անկլո-սաքսոն գրական-
նութեան:

Ֆրանսականին անցնելով, բացի վերոյիշեալ երկու մեծ վարպետնե-
րէն՝ Կասթոն Լըրու եւ Մօրիս Լըպլան, կրնանք յիշել ուրիշ վաւերական շատ
մը մեծ հեղինակներ, ինչպէս Ժորժ Սիմընոն, որ հաւանաբար աշխարհի ա-
մէնէն բեղուն դրամատիկներէն մէկն է եւ արտագրած է միջին հաշուով տարե-
կան տասը վէպ: Ան հայրն է ոստիկանապետ Մեկլըի: Պաշտօն-Նարաբաթ
գոյգը յայտնութիւն մը եղաւ, երբ Հիլքոք բեմադրեց անոնց վէպերէն մէկը՝
Վերթիկո անունով: Անոնց կողքին՝ յիշատակութեան արժանի են Քլօտ Ալլը-
ին, Ֆրետերիք Տար, Ալպէր Սիմոնէն, Օկիւսթ լը Պրիմոն, եւայլն:

Քսաներորդ դարու ակիզները ուրիշ գոյք մը՝ Մարսէլ Ալէն եւ Ֆրե-
տերիք Մուլենսթըր, ծնունդ կու տային հռչակաւոր Ֆանթոմասին, որ կը
մարմնացէր շարին ուժը եւ որուն դէմ ոստիկանութիւնը կը մղէր անհաւա-
սար պայքար մը:

Ինչպէս դասական թատրոնը ունէր իւր խիստ օրէնքները, որոնց անտե-
սումը կ'արժեպէր նոյնիսկ հանճարեղ հեղինակի մը դործը, այնպէս ալ ոս-
տիկանական վէպը այդ անուան արժանի ըլլալու համար պէտք է յարգէր
կարգ մը օրէնքներ, որոնցմէ յիշենք քանի մը հատ:

1.— Ոճրագործը պէտք չէ ըլլայ նոյնինքն տեթիքերու կամ ծանօթ
աստիկան մը:

2.— Յանցաւորը պէտք է ըլլայ գործողութեան մէջ դէր ունեցող անձ
մը, եւ ոչ թէ անձանօթ մը:

3.— Ոճիւրի դրամատիկները պէտք է ըլլայ անձնական:

Մէկ խօսքով՝ ոստիկանական վէպը, հակառակ իւր խորհուրդին, պէտք
է լուծուի արամաքանական խորհուրդներով, ինչպէս ակնհայտի խրթին
խնդիր մը:

Հակառակ ի դործ դրուած իրական տուեալներուն, ոճիւրներուն, սար-
սաղեցիկ տեսարաններուն, ոստիկանական վէպը մտքի խաղ մըն է, որուն
կը մասնակցին տեթիքերը, որ ուսուցիչն է եւ ընթերցողները, որոնք աշա-
կերտներն են: Թուարմական խնդրի մը տուեալները թուանշաններ են, իսկ
ոստիկանական վէպի մը տուեալները՝ ոճիւրներ, որոնք գիտակից ընթերցողի
մը համար վերացական բնոյթ ունին: Եւ ինչպէս որեւէ արամաքանական
խնդիր լուծում մը ունի, այնպէս ալ առեղծուած մը պէտք է ունենայ իւր
լուծումը, ուրիշ կը բխին ոստիկանական վէպին հիմնական երկու սկզբունք-
ները:— Կատարեալ սնիր գոյութիւն չունի, եւ՝ սնիրը չի կրնար անպատիւ
մնալ:

Ոստիկանական վէպը տարիներու ընթացքին կատարելագործած է ինք-
նորոյն ոճ մը, որ կը խուսափի երկար դարձուածքներէ, դժուար լուծելի նա-
խադասութիւններէ, վերացական տեսութիւններէ:

Ընթերցողին հետաքրքրութիւնը լարուած պահելու համար՝ վիպասանը

կ'աշխատի կենդանի պատկերներու վերածել գործողութիւնը։ Ասոր համար ան կը գործածէ կարճ նախադասութիւններ, կարճ տխուրներ, կարճ նկարագրութիւններ, որոնք կ'ըսեն անհրաժեշտը, ինչ որ իր էջերուն կու տայ արագ ու ջղուտ թափ մը։ Մինչդեռ երկար եւ խրթին նախադասութիւնները, հոգեբանական վերլուծումները եւ զգացական զեղումները կը դանդաղեցնեն գործողութիւնը եւ կը թուցնեն ընթերցողին հետաքրքրութիւնը. մէկ խօսքով՝ կը չգանայ լարուածութիւնը, սըսփնսը։

Ինչ կը ներկայացնէ ոստիկանական վէպը՝ իբր գրական արժէք եւ զբոսականութեան դիրքերը ինչո՞ւ չափ քիչ կամ երբեք տեղ չեն յատկացներ այս սեռին, որ այնքան ժողովրդականութիւն կը վայելէ։

Վնիւ մը արձակելէ առաջ՝ պէտք է զննազննութիւն մը րնել եւ նկատի առնել այն հեղինակները, որոնք այս սեռին արհեստավարժներն են եւ ոտիպուած են տարին քանի մը վէպ հայթայթել իրենց հրատարակչին, ինչպէս ղեքձակ մը, որ հագուստ կը պատրաստէ մեծ վաճառատան մը համար, եւ այն հեղինակները, որոնք այս սեռը բարձրացուցած են գեղարուեստական վէպին մակարդակին։

Ոստիկանական վէպի մը վարպետներէն Ժորժ Սիմենոնի կարծիքը բոլորովին ժխտական է.

«Նս, — կ'ըսէ Սիմենոն, — գրական արուեստին համար այնքան մեծ յարգանք ունիմ, որ երբեք չեմ ըմբռնիր, որ ոստիկանական վէպը կարենայ մաս կազմել այդ արուեստին։ Ոստիկանական վէպը մարտարարուստ մըն է, ոչ աւելի, ոչ պակաս»։

Ուրիշ վարպետ մը կը յայտնէ գրեթէ նոյն դադափարը։

«Նս կը գրեմ ոչ թէ գալիք սերունդներում համար, այլ՝ վաղուամբ ընթերցողներում համար», կ'ըսէ Էսկար Ուալըս։

Ոստիկանական վէպը ունի իր պաշտպանները, որոնք կը կոչուին Պուալ-Լոնարդի, Ռոմէ Գալուա, Ափրիկէն եւ Ժան Գոքթո, որ կը գրէ.

«Նս կը գարմանամ, ք Պիլ Պելոնկըրի, Ուիլեմ Այլփշի, Միքէ Ափրիկէն գործերը, ուր երևում կու գայ տեսակ մը համեմար, թերագնահատուած իմ, որովհետեւ անոնք կը կրնան զոստիկանական վէպ» պիտակը եւ կը նրաւարակուիմ ժողովրդային հաւաքածոներում մէջ»։

Մեր ուսումնասիրած սեռին մէջ պէտք է նկատի առնել, որ հեղինակը արհեստագործ մըն է, թէ արուեստագէտ մը։ Արհեստագործ տարին որոշ թիւով վէպեր կը պատրաստէ չափի վրայ, իսկ արուեստագէտը, արժէքաւոր ուրիշ գործերու կարգին՝ կ'արտադրէ յաջող վէպ մը, որ կրնայ ոստիկանական բնոյթ ունենալ։ Այս ուղղութեամբ կրնանք տալ տասնեակ մը օրինակներ. Տաստեւակի՝ «Ոնիք եւ պատիժ», Զեսթըրթըն՝ «Հիմզաբքի կռուանք», Մամբրսեթ Մորմ՝ «Գաղտնի գործակալ Աշնետըն», Ռիլերմ Տոքերը՝ «Ապատանաւորան», Գրեհէմ Կրիք՝ «Վարձու ախարկիչը», Պերնանոս՝ «Ոնիք մը», առանց հաշուելու մեծ վէպերու մէջ գոյութիւն ունեցող ոստիկանական բնոյթով հատուածները։

Ամէն պարագայի, ոստիկանական վէպը կը հանդիսանայ արդի գրականութեան ճիւղերէն մէկը, թէև անտեսուած, բայց միշտ բարգաւաճ, որուն յատկացումն են յատուկ հաւաքածոներ, աշխարհի բոլոր երկրներուն մէջ, ինչ որ կը փաստէ այս սեռին համաշխարհային բնոյթը եւ ժողովրդականութիւնը։

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

(Շար. 6)



ԼԵՌՆԵՐ ՎԻՃԵՐՈՒ ՄԷՋ

(Զ. ՄԵԼՔՈՆԵԱՆ)

Տառնամեայ աշխատանքի մը արդարեւ չէ (1908-1978) Զարեհ Մելքոնեանի գլխուն վիճակը մէջ բանաստեղծական ծառայուն դարձը, որ լոյս տեսաւ Միացեալ Նահանգներու մէջ 1978ին, բաղկացած 356 զեղատախտիկ եւ պատկերազարդ է-լերէն:

Հասարակ լուսնահոգեկան մաս կազմող քերթուածները կը ներկայանան հետեւեալ որո-րոքաթիւներով:— «Նախագաւիթ», «Մարգ եւ ստուեր», «Պատմութիւն», «Ուլունքներ», «Տո-րիքի ժամնակները սեւ», «Առանձնութեամբ արե-ին», «Փառաքանքներ», «Մահ կնկանքներ», «Ճերմակ տխրութիւն», «Սէր», «Ստատուսներ» եւ «Աստ-ւած եւ աստուածներ»:

Մեր քերթողներէն ընդգրկած ներքերը կը թաւալին դիտարարար կեանքի, մահուան եւ մարդկային ներաշխարհը յուզող նրբագիծներու շուրջ՝ բնականական նրբագիծ մը մասնակե-լած:

Հասարակ խորագիրը իր լաւագոյն բնորոշու-մը կը արտահայտուի իսկ բանաստեղծութեամբ, որ հեղինակը կ'ըսէ.

Ու եթէ մանագալա՛ր է երգս իմ՝
Գալարուստ ժա՛ծքն է ծովին,
Որ վիճերէն լեռներ՝ կը հանէ...:

(«Լեռներ վիճերու մէջ», էջ 4)

Իր այս գործով Զարեհ Մելքոնեան կը դրո-ւորէ աղջնազգային խոհերով սուսալող մարդու հոգեկանութիւնը: Մահուան մղձաւանջով աշե-կած՝ ան կը յարի անցեալին, կ'աշխարհէ անց-եալի երազով, որուն ձգողական յարակալութեան մէջ կը փորձէ պահել իր խանդավառանքը, ին-չպէս կը պարզուի հետեւեալ տողերով.

Թէ՛ւ մերկային մէջ՝ միտքս շարունակ
Անցեալէն մեյքս տղերեցաւ...,
Անցեալը ապրեցուց արպետ մերկայ՝ ինքնաբաւ...:

(«Ե՛ս», էջ 22)

Այսպէս, ներկան անցեալի վերափոխելու, երկրային գոյութեամբ օգեղնելին թափանցելու եւ, վերջապէս, «այս աշխարհի՛ն քանմանում» այս աշխարհին չպատկանեցա՛ր...» Բ' բաժնի հաս-

digitised by

տատած երկուութեամբ է, որ կը խորանան բա-նաստեղծի մաղբումները, որոնք ի վերջոյ կը պարփակուին Անկարիէի գիտակցութեամբ: Այս իմաստով, իր հոգին՝ իր իսկ էութեամբ պայմա-նաւոր շփոթանք մը ձգած հեղինակին հետեւա-լու տիրուի հետեւեալն է, որ կ'իմաստաւորէ հո-տորը, «կէտով քակուած, բայց անքակելի» համ-գոյցի մը» հոգեբան եւ տնտեսականագիտա-նութեամբ:

Եթէ պատմութիւնը անցեալէն յառնող եր-ջանկութեան մէկ տարփայլող դիմադրանք է, որուն կը կառչի բանաստեղծը անդիմադրելի կա-լստով մը, Երբութիւնը ներկայի հետ շփող, ալլ դէպքի մահ ընթացող զնայուն մըն է անպաշար՝ խարտոցին դէմ ժամանակի...», աւր ան իր եր-բմերի կենսագործ ուժին եւ հասակէն տեղա-տեղութիւնը կ'ապրի: Այլ տեղատեղութիւնը ան չի սահմանափակէր գործելու, յիշելու եւ արտ-մարանելու անկարողութեամբ միայն, այլ դան կը յատկանշէ նաեւ հին տեղեկութեւն եւ, յաշտա-պէս, սեռային խանդի նկատմամբ ցուցարբութեան անտարբերութեամբ: Այս դեռով, ուշագրաւ են «Տարբիքի ժամնակները սեւ» եւ «Սէր» խորագիրը կրող երկերն են: Երբութիւնը, որ Զարեհ Մելքոնե-ան խոր հիասթափութեամբ մը կը թափնէր՝ Երբութեան պատմաւոր ժխտական անդադար-մը՝ մարդու զգացական եւ հոգեմտաւոր աշխար-հին:

Մահուան խորհուրդով պարտաւոր բանաս-տեղծի մթին ներաշխարհը առաւել եւս կը մթա-լնի ի տես մարդէն, որուն կենդանային ըմ-բռնութիւնն ունի փոխուած է զարեհի ի վեր: Թէ՛ մարդէն էլ, բնազգային եւ իմացական իր գոյութեամբ ժխտումն է եղած կենսաբ. համա-նական սիրով ընկալելու ձգտումն, ինչպէս կ'ը-սէ հեղինակը.

Հագար դա՛ր հոգ տակաւին
Թէ՛ շանաճուկ, քէ՛ ծուկ աւ քէ՛ մարդ կ'աւտս
Գում անդադար՝
Ինչպէս մանրէները կ'աւտն ամէ՛ն բամ եւ
Իրա՛ր...:

(«Երբ շնորհաւորութեամբ», էջ 40)

Նոյն դառնութիւնը արտայայտող էջերուն, յաւակնչական են «Քաւ եղբայրդ լի՛մ եղած ես բնաւ...», «Երբ աղբի եւ մաքրոց մասին» եւ

A.R.A.R.®

«Բուրձով մետաղի» խորագրով քերթուածները, ուր բանաստեղծը «տխրութիւնով, խուլութիւնով» աղքատիկներով լի դռնի մը մէջ թաթիկով իր վրէժները՝ կը բռնաթաղէ մարդ էակը՝ քարայրի մարդու պատկերացումով։

Անցեալի խոնդով ողբերգութեամբ կը հանդիսանայ տարապաշտան հանգղանքներէն ընդդէմ կենքի ունայութեան, որ Անկարիէի յայտնութեամբ զուգորդուած՝ կը կազմէ առանցքը հեղինակի «մահապալա» մտածումին։

Արդարեւ, իր ըմբռնած մահը կենքի հոլոս-վոյթը եղբայրակող աշխարհը չէ, որ հազով պիտի պատանքէ իր մարմինը, այլ ա՛յն՝

Որ կիտ մեռած՝ արիւն աղբիցով,
Որ գիտ՝ դիտ ուղի՝ պիտի անկիւնացնէ...

(«Երեսմեկ տեւ լոյսերու մասին», էջ 214)

Այսպէս, մահուան եւ ողբերգի կենքի միասնութեամբ, ան պիտի կրնայ հասնի իր գերազանց իտէալին՝ յաւերժացման խորհուրդին։

Անկէ՛ն, ան կը ցանկայ, որ իր մեկնումը չէ՛ր-բա՛նք զինք կազմայոյն դոյալիմանի մը, այլ դառնայ մեկնակէտը՝ յուսադիւր զերազարմի։ Ուրովհետեւ, ան կը հաւատայ, թէ մահը մշտնջենական խոր Նիւշ մը չէ, այլ՝ օթեան մը, ուր որ մը ան պիտի ափ տանէ հանգիւն՝ ապրկապէս, ճիշդ մարը նման, որ՝

..... կը մնայ առանձին՝
Ա՛յդ Բարիմ տակ եւ բայր Բարբառ...
Եւ անկէ ի վեր եւ կը սպասեմ իր գործնականին՝
Ա՛յդ լուսնեան ճով եւ բայր լուսնեաներուն...:

(«Համբզիկն՝ համար,
եւ ո՛չ մեռելուն...», էջ 223)

Այս իմացումով, Ջարեհ Մեղրեան կը ներկայանայ զգացողաւոր հոգի մը իրրեւ, որ կենսապաշտութեանը մը կառնած աշխարհին՝ առնչուած ամէն մէկ մայրի եւ ողբերգացած ամէն մէկ տենչանքի մէջ կը փնտռէ խորհուրդը վերածննդեան։

Կեանքը ի՛ր իսկ սեփական անձով վերեմէնդնելու աշխարհի անկարելի երազէ մը մղուած՝ ան կը հանգանակէ կենսա-Մահ ըմբռնումով զիտակցւած իրականութիւն մը, որ խորհրդանշելն է կենքի վերածննդման գաղափարին։ Այդ գաղափարին հետ աւելնուած վաղամեռ մարդ յիշատակն է, որ կը մտաւելէ զինք յանախ, իրրեւ ծնւագիւն երկունքը իր Նիւթնայական ցանկութեան եւ որուն ողբերգի ներկայութեան ան կը գոչէ անկապին։

Մայրի՛կ,
Առանց քնդի ինչպէ՛ս
Ազատիմ
վերածնելու մզմաւանդէս...:

(«Տեւում, մայրսկիւրը ու մզմաւանդ», էջ 170)

Այսպէս, «Երեսմեկ տեւ լոյսերու մէջ» հասարակ-հաստեղծ Ջարեհ Մեղրեանի յաղաքան ապրումներուն հետաւոր թէ անմիջական մէկ աքաղաղութեամբ հանգիւնէ, կը բերէ իր հետ մէկ ուրիշ արձագանգը նաեւ խոհական մայրերու։ Իր քերթուածներուն մօտ զգացումն է, որ կը գերաւորէ յանախ՝ անհատ կարօտի եւ յոգեբու յրաժանութեան մէջ պահելով ընթերցողը։ Իսկ այլ տեղ, խոհական տարրն է, որ զերազանցապէս առանձնայատուկ կերպով կը զգացնէ կենքի զոյաթեանապաշտական իմաստը։ Այստեղից է, յանաստեղծի թէ՛ զգացական ազնուազը եւ թէ՛ մասնահոգումը կը զգացնեն իրարու հետ, իրենց իւրայատուկ մեկնակէտով իմաստաստեղծուելուն տարապանքով զնորբերուած հասարակութեան մասին։

Ջարեհ Մեղրեան հետամտու է արտաբայական թաղմանը մեկնելով դրոշմաբանութեան մէջ միայն իր զգացումները, ուրիշ՝ անդրաբնական տուեալները։ Որով՝ թէ՛ ձեռք եւ թէ՛ յղացքի աշխարհայեցողութեամբ բնորոշ իր մանրագիտութիւնը կը փոխանցէ քարայրակն զգայութեան մը վաշտաւոր, աստից մատնուելու միայն աղքատացումեան մը փորձութեան։

Անկէ՛ն, «Ոչինչիմ ետանմիմ» վրայ գտնուած մէյմէկ պատանդի են իր քերթուածները, ուր կարելի է հանդիպել բնութեան ծոցէն քաղուած եւ փոխադրական իմաստ թելադրող զոյններու եւ պատկերներու, որոնց նմանութեան մէջ բանաստեղծի բացայայտած մտածումները իրենց անխեթական հանգամանքով իսկ կը վերածնունդն լուսնային ըմբռնումի եւ իրենց յարուցած ներգործակցութեան համեմատական տարրադրութեամբ՝ կը ստանան համապատասխան որակ եւ կշիռ։

Ջարեհ է իր յորինումներուն ինքնատիպ կառուց տալու հեղինակի հիւրը։ Այս իրողութիւնը հաստատող վեպա-թիւներու շարքին կը զատուի «Քանի», քանի՛ անգամ...», «Ետքը երգ պատմութեան մասին», «Ոչինչի ալ ալուսնիները քարայրակն...», «Աւարք Մեռնող է Ետքը Նիւթը» մէջ...», «Այդ տարփականն է Այդ, փոքրիկ ու կեանքի քոյր...» խորագրով բանաստեղծութիւնները, որոնց զգացումի թէ՛ մտադրական է ինքն առաւելաբար ինքնատարութեամբ ուրիշ հաղորդականութիւն կը թելադրեն։

Բանաստեղծը հետամտու է նաեւ խորագրել մտածումներ կարգ մը հոմանիշ քաղերու ներդրութեամբ, որոնք իմաստային յարակից ներդրանքներով կը շարժապաշտեն քերթողագրի թեմային հետ։ Այս կարգի դրոշմները՝ «Նրախ, կիսի, քերթան, «Երեսմեկ տեւ լոյսերու մէջ» քերթան, «Քանի», «Ետքը ու զուլա» եւ «Համբզիկ, շոգի եւ շիթ», «Կենք եւ իրենց տարականն ինքնատարութեամբ եւ կը խորհրդէ, թէ աշխարհից Ջարեհ Մեղրեանի գրեւորագրերը։

Հեղինակի զտարականն զբողջ մը ըլլալու պարագան առաւել եւս կը շնորհակալ ըլլալով ինքն իր ինքնաշնորհութեամբ եւ, յատկապէս, հասարակ ըլլալուն եւ աստուածները վերջին բաժնով, ուր մէկտեղուած քերթուածները Աւետարանին մէջ բերուած խաղաղութեան հարցերու հետեւողութեամբ թէեւ կը բերեն մէկ իրապաւն վերաբերման մարդկային կեանքի ցոլատես իրացութեան, այսուհանդերձ, չեն ընձեռք ածող յաւելումը նպաստ մը՝ հասարակ օրակական արժէքին։

Ձարհն Միջոցներն զբաւան խառնուածքին մէջ այլ հիմնական զիջող կը կարծես խոսակցական լիզուով արտայայտուելու իրողութեան մէջ։ Անտիքեւթ եւ վճիռ է այդ լիզուան, որ թէեւ տեղտեղ իր պարզապէս մեկն մէջ կը թուի արժանական ըլլալ, սակայն անիկա կը հասի քերթուածէ քերթուած՝ բարեւ եւ զգացումի ներգայնակ

զոյակցութեամբ։ Անա թէ ինչու, հակառակ իրենց իմացական հէգիթն՝ բանաստեղծի տաղան պալի զհղուածները կ'ընկալուին ջերմ ապուստրոսութեամբ։

Պէտք է աւելցնել նաեւ, թէ առանձնապէս անձնական զբողջ կրկնով հանդերձ, հեղինակի խոռոչն ու պատրանքով վճիռը կ'արտայայտեն մարդկայնական իմացում մը, որով կեանքի ունայնութեան առնչութեամբ իր բնութագրած ցաւը՝ ցաւն է նաեւ անցեալի կարօտով առջորդուն եւ քերթութեան աղջամուղջով յուսարեկ ամէն մարդու։

Ձարհն Միջոցներն զեղծներ վիճերու մէջ զարք կարելի է համարել Միջոցի վերջին առաջնութեան բանաստեղծական լուսկան քրկերէն մէջ։

ՅԱՆՈՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԼԵՌՆ ԵՒ ՏՈՒՆԸ

(ԱՐՄԷՆ ԴԱՐԵԱՆ)

Միջոցներն իրականութեան ու աստեղայն նկատմամբ խառն զգացումներ առաջ կը բերէ Արմէն Դարեան զէնք եւ տունը՝ անուն հաստատուել։

Անտիքեւթական տարբեր միջակայքերու վրայ լուսարձակ նկատող առեւայ երեք ստեղծագործութիւնները (զէնքը, «Տունը» եւ «Ձիւն»), որոնց վերջինը վերադառնալով մը աստեղայնութեան կը ստանայ, կը փնտռեն այն կորստաւտ օդակը, որ սերունդներու հաղորդակցութիւնն ու հերթափոխութիւնը բնական պիտի զարմեցնէ եւ ստեղծէր այն ճոզեկան կլիման, ուր տարբեր սերունդներ պիտի յաղթէին իրենց մարդկային կացութիւնը հասկնալ։

Ամերիկային վերադառնալով ջառագուն տարիներէ ի վեր Ամուսա հաստատուած կամուր որ լեզունական Համարմամբ, յամառօրէն պիտի մերժէ Ամուսային հետանալ, որովհետեւ հան հայրենիքին մօտ է եւ, երկտեսարգութեան՝ այնտեղ անտան է զոյգ Մոսիսները...

Ամուսան աստիճանաբար պարզուած է հայութեան եւ այնպէս չի կրնար իր մէջ պահել Համարմամբի աղան՝ Անդրանիկը, որուն զոտակները հոն չեն կրնար կրթութիւն ստանալ, ինչպէս եւ Ամուսան անաստեղծութեան բուսարբ միջոցներ չի կրնար ստեղծել՝ ապրելու համար։

Համարմամբի համար Փիլիպպական այդ աղաները իմաստ չունին, ինչ իր տեսիլը ունի՝ Արարատի պատկերը եւ իր ներքին աշխարհը։

Համարմամբի սովորաբար եր. ամէն իս

բիկուն, յոգնութիւնը անկախ համար, պիտի իշլը կտար, եւ իսկ յոգին վրայ ճառարձ պիտի զրուցէր Խրիմիէին եւ աշխարհին հետ ու ցարպէր սիրտը (զէնքը, էջ 11)։

Տանիքին ու իր լուին վրայ՝ Համարմամբ կը վերադառնի իր անցեալն ու մասնաճեղքու աշխարհը։ Անդրանիկի աղջկան՝ Աստղիկի անուանումը Համարմամբի զրոյ անունով, քերթութեան համար նոր միջոց մը կ'ըլլայ զէպի անցեալ թացուելու փոքրիկ Աստղիկը ներկայի մէջ ներկայութիւն մըն է Մուշէ աշխարհէն։

Պարտի վերջաւորութեան, երբ այնպէս անկարելի կը դառնայ Անդրանիկին համար մեալ Ամուսա եւ կը ստիպուի նոյնիսկ հայրը հոն մղելու գնով ապրանքները պատրաստել մեկնելու համար՝ մեծ չոր մօտ բարձրացած Աստղիկը կը ահա՛ն լեռը, մեծ չոր տեսիլը։

« — Դուրպա՛ն, տնգա՛մ մըն ալ ճաշէ... Ըսէ՛, տեսա՛ր իրա՛ն, տեսա՛ր, չէ՞... Իս վստահ էի... Պաա՛ա... Պաա՛ա՛, զուրպա՛ն, պաա՛ա, որ վարեմ լսեմ... Ամէ՛ն՝ ալ լսեմ... Իմտե՛ն... Թաղ աշխարհ իմտե՛ն, զուրպա՛ն... Պաաաա՛ա... » (էջ 28)։

Տեսիլը փոխանցուած է փոքրիկին, սակայն այս մէկը ներկայի շրջանին իրականութեանն էր չի փոխէր։ Ներկան Անդրանիկն է, իսկ Անդրանիկի գիտէ, որ ընտանիքը չի կրնար հոն ապրեցնել։

Նոյն փառաշունտ կամ հակառակութիւններով

բնունակութեամբ իրականութիւնը կը դրսեւորուի ՔՏՈՒՐը՝ անուն ստեղծագործութեան մէջ, կրկին հայր ու տղու աշխարհները բաժնետեւեմ են եւ մեն հայրը կը փորձէ իր կորսնցուցած աշխարհը փոխանցել թոռնիկին: Եւսկապեա մզած է Պէյրութը եւ հաստատուած Լոսանոն ընկող իր տղուն՝ Վահանի մօտ: Վահան ուսանելու համար ճամբորդած է Լոսանոն, ուր ամուսնացած է անգլիացի աղջկայ մը հետ եւ այլեւս իր առանձին կենցաղն ու աշխարհը ունի: Եւ հակառակ երկուստեք տարւած ճիզկրուն կամ բարի կամեցողութիւններուն՝ Լոսանպետի ու Վահանի աշխարհները զօւլաւ կը անդրադարձնեն կամ կենդանի կապ կը յաջողին ստեղծել:

Եթէ Համբարձումի երազը լեռն էր, Լոսանպետի երազը առան է, ա՛յն առանը, զոր իր հարձը շինած է Արմաշի անասուններէն հարկուր ծառ կտրել տալով: Տունը հօր իրազորութեամբն ու ճշդալուսութեան աղբիւրը՝ զարձած է եւ այդ տունն էր մնայ լուսանկար մը:

Վահանի ծննդաբերութեան՝ Լոսանպետի կիւնը մեռած է, բայց ինք չէ վերածնունդացած: Իր կենսիքի ճիշդ կեդրոնացած է Վահանի վրայ: Աշխատած է աղան ուսում տալու: Աւելի ուշ, ճշգրիտ կան ջաղացքը՝ շաշկած՝ շրջած է լիքանաեան զիւղերը՝ ծաւալուց ցորենը աղալու եւ Անթիլիասի ծովափին մօտ շինած է իր տունը: Մակայն Վահան մեկնած է իր ճամբով եւ Լոսանպետի ամեն երազը ողն ըսած է իրեն:

Մեն հօր երազով շահագրգռուող կրկին Վահանի թոռնիկը կ'ըլլայ, փոքրիկ Լորայրը, որուն համար, քնակաւարտ, մեն հօր ներկայութիւնը շատ բան կ'ըսէ: Գործին վերջաւորութեան կը տեսնենք, թէ Լորայր, ուր անգլիախոս է, հետաքրքրութեամբ կը զետէ հին լուսանկարը (առաջինը զօւլաւ է հիշել, այս մէկը ժանկապէս հետաքրքրութիւն է, թէ աւելի բան մը), իսկ մեն հայրը կաւիճներով կը փորձէ թոռնիկին հայկական աշուրները սորվեցնել:

Դժբախտաբար, նոյնիսկ ապագայի այդ յոյսը չունի Մարտիրոս, ուր Վաղըֆէն, ձեռքի Մուսային կու գայ:

Մարտիրոս կը պտեն գինուորական անուրդի հանուած մի մը, որ իրենց Սպիտակը կը յիշեցնէ: Ձին Թեր է, շատ Թեր, ա՛յնքան՝ որ նոյնիսկ անուրդի չի գրուի եւ ճիշդ կը տրուի այս հին զինուորին, ոսկալի մին պատճառ կը դառնայ, ուր Մարտիրոսի կորուստը աշխարհը բացուի: Եւ պատառ առ պատառ կը կողմուրի հին առանջ, Մարտիրոսի հայրը՝ ոսկորէ հաստները շինող Բարեպաշտը, որ Մուսա լեռան կռիւներուն կը ճաշատի ծնայի խուճիկն, մայրը, քոյրը՝ Մաքրուհին, գիւղի բարձրը, զաղթը եւ... Սպիտակը: Այդ բոլորը զօգնելով, բանաստեղծական աշ-

խարհ մըն են, որուն կը հանդիպենք առաջին վայրկեանէն եւ որուն կախարդանքէն դուրս չի յաջողիր զալ Մարտիրոս: Ուրեմն, մէկ կողմէն կայ քնարական լուսնով ներկայացուած հարուստ անցեալը, միւս կողմէ՝ Թեր Մարտիրոսն ու իրենց ճերմակ մին յիշեցնող այս նոր Սպիտակը, որ զուր կ'երթայ լիքանաեան քաղաքացիական պատերազմի առաջին փամփուշտներուն, իր հետ տանելով կորսուող ամբողջ աշխարհ մը:

Ինչպէս կը տեսնենք, Արմէն Դարեանի հետ ստեղծելով ամբողջ անցեալ մը կը բերեն եւ կ'ազդեցնեն իրենց մէջ: Եւ հոսկէ՝ երեք գործերն ալ, ինչքէն զոյգներով ու ժողովրդայինով կը զարդանան: Արամեանով շարուած բաժնեկերը մտորումներն ու ներքին զրոյցը կը բերեն, որոնք կը բացուին անցեալի ուղղութեամբ:


Սակայն ո՛ւր կը հասնի Համբարձումներու, Լոսանպետներու եւ Մարտիրոսներու աշխարհը: Անդրադարձ շատ կը փորձէ հօր աշխարհին մէջ մընալ, սակայն կը հարկադրուի մզել Ամուսան: Լոսանպետ, վատահարաւ, Վահանի սորվեցուցած է աշուրները եւ Լորայր երեք ալ հօրը յոյսի հանդէս պիտի չստիլի, եւ սակայն Վահան ընտրած է տարբեր ուղի:

Սնկապետն որ Աստղիկն ու Լորայրը հետաքրքրուած են իրենց մեն հայրերուն աշխարհով, սակայն ի՛նչ ապահովութիւն ունենք, որ սփռուած են իրողական տուեալները գիրենք պետէ լճը՝ զեն իրենց հայրերուն եւ ոչ թէ մեն հայրերուն ճամբով. մա՛նուանող՝ երբ հարցերը կը դիտարկեն այս շրջանի մէջ եւ սփռուած են իրականութեան թիւերով: Եւ զիտուի հակադրութիւններու շրջագիծին մէջ (հայու-օտարի):

Անշուշտ, անցեալն ալ ներկային մաս էր կապ մէջ, սակայն ո՛ւր է սփռուածն այն հեռոտ բազմամակարդակ ներկան, որուն որով երեսները Դարեան տուած է անցեալին: Այստեղ նշանակ հարց կը ծագի, թէ ընդհանուր շրջագիծի մէջ մէկ անկախութիւն է նման ներկայի մը անկախութիւնը (բացակայ)՝

Պէտք է նշել նաեւ, որ լԵՒԵՐ Եւ ՍԱՍՆԵՐ Խոհմտորէն ու լուս աշխատանքած գործ է: Հերոսներու ներքին ժողովրդային աշխարհը բացող բաժնեկերը, Մուսա լեռան բարձրան օգտագործումը լԵՒԵՐ վերադարձն է, ինչպէս եւ Մուսա լեռան բարձրութիւնը ու պատմութեան ուսումնասիրումը՝ իրեն երթաւոր, կը վկայեն հեղինակին լուրջ վերաբերմունքը իր արձակին հանդէպ: Մուսային ներկային փնտաւորութեան ու պահանջը կը լճան հրամայական:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՍՊԻՐԱԿԱՆ ՊԱՏՏԱՄԱՌԻ ՎՐԱՅ

Առարկայի հանրամատչելի վիճակում Ֆրանց Վերֆելի ըմբռնող ճանապարհը օրերը հաշվարկվող, բազմաթիվ ձգձգումները հաշվարկվող, վերջապես վերահասարակական շարժապատկերային երկարամետրաժ ժապավենի մը:

Երկու ժամ եւ քսան վայրկեան տեւողութեամբ այս ժապավենին համախառնային առաջին ցուցադրութիւնը տեղի ունեցած է այս Ապրիլին, իսկ Երեւանի մէջ, Վերահասարակական արժեքները թափարկող մէջ, որոնք պիտի յաջորդեն հրապարակային ցուցադրութիւններ:

Այս ժապավենին իրականացումը կը պարտինք Վալ ինֆլուենցիան ընկերութեան տէր եւ արտադրիչ ձոն Քիւրքենան: Ժապավենին արտադրութիւնը արժան է վեց միլիոն տոլար եւ առաջ իրականացման իրենց մանկանցութիւնը բնութեան քառասունչինգէ աւելի զերտաններ, որոնցմէ ութ հազար հայ զերտանագիտականներ:

Ըստ մամուլին արուած հաղորդագրութեան մը, ժապավենին նկարահանումը տեղի ունեցած է Քալիֆորնիոյ Սանթա Մոնիթայի շրջանի ընկերութեան վրայ: Հայ ժողովուրդի այս սիրայի հեղափոխութեամբ լաւագոյն պատկերացնելու հաշմանդանութեամբ՝ ԹՅՈՒՆ աւելի անկէր մասնակցած են ափ մը հայ ժողովուրդներու եւ թուրք բանակներու մէջ: Երկու մղումով առաջնական հեղափոխութիւնը տեսարաններով:

Եղբայրացիները իր յայտարարութիւնը, Վալուսա տաղի ճառասուն օրերը ժապավենի արտադրիչ ձոն Քիւրքենան կ'ընդգծէ, որ Հայկական Յեղափոխութիւնը հերոսի թրջական յայտարարութիւնները մերկացնող այս իրադրութեամբ ցոյց պիտի տայ արդի պատմութեան առաջին ցեղասպանութեան ահաւորութիւնը, մարտիրոսացած հայերու անմահ ոգին եւ մեր անժամանցելի իրաւունքները ու արդար Դատար:

ՍԱՐՈՅԵԱՆԻ ՆԵՆԱՍԿՐԱՎՅՈՐ

Ռեֆերմ Սարոյեանի կենսաբան եւ զարմին Նըւէրում կենսագրական ժապավեն մը պիտի պատրաստուի Թ. Թ. Փ. պատկերասրահի ընկերութեան կողմէ, Քալիֆորնիոյ մէջ:

Մէկ ժամ տեւողութեամբ այս վաւերացրական ժապավենին նախնական աշխատանքները արդէն աւարտած են եւ արտադրութիւնը ընթացքի մէջ է:

Ժապավենի արտադրիչ ամերիկահայ Թերէն Տիլիֆիսի Համաձայն, Սարոյեանի կենսաբան ներկայացուի մեծ գրադէտին ծննդազարդ եւ Գալուստիոյ գիտանկիւնէն՝ Սարոյեանի Հայկական դիմագիծը ընդգծելու եւ առաջ խորհրդանշանական երանգներէն ներս թափանցելու առաջադրանքով:

Այս վաւերացրական ժապավենը առաւելաբար պիտի կազմուի անհատական տեսանկյուններէ եւ հարցադրոյցներէ, որոնք թրքեւ խոսակցի պիտի ունենան Սարոյեանի բազմաթիւ բարեկամներ, ազգականներ ու գործակիցները: Նմանապէս, պիտի պատկերեն իր հաւանական Սարոյեանի գործերը պատկերացուցած ժապավեններէ եւ իր աշխարհը արտաքինացող լուսանկարային պատկերացումներ:

ԵՒ ԱՅՈՒՄԱՆԻՆ ԿՐԻ
ՆՈՒՐԱՆԻՍ ԳՈՐԻՍԻԱՆԻ

Համաժողովրդական երկրի մէջ դրոշմ խորհրդային ճիւղին՝ ճանապարհական պատկերասրահի երաժշտական ժապավեններու արտադրանքը վերջին պատրաստած է ժապավեն մը, երբեք ունի: Զարուհի Դուրանեանի կենսաբան եւ ժապավեն:

Վաւերացրական բնոյթ կրող այս ժապավենին առաջին պատկերասրահումը կատարուած է Մոսկուայի կայսերէն, արժանանալով արուեստագիտական շրջանակներու ջերմ զննարկումներէ: Ինչպէս որ արտադրութեան մէջ, անուանի երգչուհի մեկնարանած է Հայկական դասական եւ արդի երաժշտութիւնը բնութագրող նմուշներ, ինչպէս նաեւ՝ Կոմիտասի, Հինուրի, Երեւանի, Թաթարիստի եւ այլ երաժիշտներու յորինած երգեր:

Զ. Դուրանեանի երաժշտական ուղին սկիզբ տեւ է 1939ին, երբեք սփերայի բեմին վրայ: 1940ին, ան շահած է Գուստաֆ Երիտասարդ եւ ուսանող երգչի կրթութիւնը: Համաժողովրդական փառասունի առաջին մրցանակը, որմէ ետք մեկնարանական լընդարտայնութիւն կատարած է Խորհրդային Միութեան եւ արտասահմանի տարածքներ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԻԳԵՊԱՆԱ ՃԱՓՈՆԱԿԱՆ ԾԱՂԿԱՅԱՐԴԱՐՈՒՄ —

Արշօ Թիւթիւնեան, Պէյրութ, 1982, «Շիրակ» հրատարակչատուն:

ԱՊԱԳԱՅԻ ՀԵՏՔԵՐՈՎ — ՎԷԱՅ —

Գէորգ Անեմեան, Պէյրութ, 1982, տպարան «Ալթափրէս»:

ԼԵՌԸ ԵՒ ՏՈՒՆԸ — արձակ —

Արմէն Դարեան, Ամբիլիաս, 1982, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:

ԹՆՈՂՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ — ՎԷԱՅ —

Ծերեմեց, Պէյրութ, 182, «Համագայիմ» հրատարակչատուն:

ԾԻՄԱՂ — երգիծական էջեր —

Թուրիկ, Պէյրութ, 1982, «Տօնիկեան» հրատարակչատուն:

ԱՆՄԱՏՁԵԼԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ — ՎԻՍԱԿ —

Հայկ Հ. Պօղոսեան, Գահիրէ, 1979, տպարան «Յուսարեր»:

ՄԻԳԱՄԱՆ ՀՈՐԻՋՈՆՆԵՐ — պատմաաժգներ —

Հայկ Հ. Պօղոսեան, Գահիրէ, 1980-81, տպարան «Յուսարեր»:

ԿԵԱՆՔԻՍ ԱՄԵՆԱԴԹԲԱՅՏ ՕՐԸ ԵՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆՍ ՐՈՊԷՆ — յաշա-
գրութիւն —

Գարեգիմ Կաթողիկոս Յովսէփեան, Ամբիլիաս, 1982, տպարան Կաթողիկո-
սութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:

ՀՈԳԵՀԱՏՈՐ — քանաստեղծութիւններ —

Արմէն Աղամեան, Պէյրութ, 1981, տպարան «Ալթափրէս» եւ «Թէթափրէս»:

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգիր 126 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգիր 40 Ամերիկեան տոլար

بَاكِين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
المدير المسؤول
السيد آرتم كارنيك قرانيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
բԱԳԻՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ
Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ
Խմբագրությունը անդամներ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Վարչական պատասխանատու
ՎԱՀԷ ԲՐՈՒՏԵԱՆ
B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898